



ԱՎԵԼԻՆ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ



ՏԱՐԵԿԱՆ 2013
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ





3	Ղեկավարության ուղերձը	62	Բանկի զարգացման արդյունքները
4	Ռուբեն Վարդանյանի ուղերձը	63	Աճի հիմնական ցուցանիշները
6	Արտակ Հանեսյանի ուղերձը	67	Ակտիվային գործառնություններ
8	2013թ. հիմնական ձեռքբերումները	70	Ռեսուրսների բազա
12	«Ամերիա» ընկերությունների խմբի մասին	73	Տեխնոլոգիաներ և ենթակառուցվածք
13	«Ամերիա» ընկերությունների խումբ	75	Հաճախորդներ և նոր պրոդուկտներ
16	Զարգացման հիմնական փուլերը	76	Կորպորատիվ բանկային գործառնություններ
20	Համաշխարհային գործընկերներ	79	Բիզնեսի վարկավորում
22	Փիլիսոփայությունը և արժեքները	82	Լիզինգ
23	Առաքելությունը և փիլիսոփայությունը	83	Ֆակտորինգ
25	Մեր արժեքները	85	Առևտրի ֆինանսավորում
26	Ռազմավարություն	86	Մանրածախ բանկային գործառնություններ
26	Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն	89	Մանրածախ վարկավորում
28	Բանկի ղեկավարում և ռիսկերի կառավարում	94	Պլաստիկ քարտեր
29	Ամերիաբանկի բաժնետերերը	97	Աշխատավարձային նախագծեր
29	Ամերիաբանկի ղեկավարությունը	97	Դրամական փոխանցումներ
32	Կառավարման հիմնական սկզբունքները	98	Ներդրումաբանկային և առևտրային գործառնություններ
33	Բանկի կազմակերպական կառուցվածքը	99	Ֆինանսական կազմակերպություններ
35	Բանկի ղեկավարում և ռիսկերի կառավարում	99	Կորպորատիվ ֆինանսներ
37	Մարդկային ռեսուրսների կառավարում	101	Կապիտալի շուկա
39	Հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարում	103	Միաձուլումներ և ձեռքբերումներ
40	Ռիսկերի կառավարման համակարգ	105	Առևտրային գործառնություններ
44	Արտաքին միջավայր	106	Բանկի ռազմավարական նպատակները և ծրագրերը 2014թ.
45	Մակրոտնտեսական նախադրյալներ	110	Ֆինանսական հաշվետվություններ անկախ աուդիտորական եզրակացությունով
51	Իրավական դաշտ, պետական կարգավորում, ֆինանսական ենթակառուցվածք	118	Օգտակար տեղեկություններ Բանկի մասին
54	Բանկային հատված		
58	Ամերիաբանկը ՀՀ բանկային համակարգում		

ՂԵԿԱԿԱՐՈՒԹՅԱՆ
ՈՒՂԵՐԶԸ



> ՌՈՒԲԵՆ ՎԱՐՈՂԱՆՅԱՆՆԻ ՈՒՂԵՐՁ

Հարգարժան տիկնայք և պարոնայք 2013թ. Նշանավորվեց Ամերիաբանկի Նորանոր հաղթանակներով և հաջողությամբ, ծառայությունների որակի բարձրացմամբ՝ շնորհիվ մեր հաճախորդների վստահության և լոյալության, ղեկավարության և Բանկի Տնօրենների խորհրդի պրոֆեսիոնալիզմի, ինչպես նաև բաժնետերերի աջակցության: Անցած տարին հարուստ էր քանակական և որակական ձեռքբերումներով: Մենք հասանք Նոր բարձունքների՝ շուկայում 21 բանկերից զբաղեցնելով առաջատարի դիրքն ըստ ակտիվների, պարտավորությունների և հաճախորդների ավանդների, երկրորդն ըստ վարկային պորտֆելի և երրորդը՝ ըստ զուտ շահույթի: Երկրորդ անգամ Ամերիաբանկն արժանացավ «Financial Times»-ի The Banker ամսագրի «Նայաստանի տարվա լավագույն բանկ» մրցանակին: Global Finance-ը և Կոմերցբանկն Ամերիաբանկը ճանաչեցին Նայաստանի տարվա լավագույն բանկ 2013 առևտրի ֆինանսավորման գծով: 2013թ. կարևորագույն իրադարձություններից մեկը, որով մենք իրավամբ հպարտանում ենք, «Ամերիա Ասեթ Մենեջմենթ» ընկերության կողմից «Կասկադ Ինվեսթմենթս» ՓԲԸ՝ Նայաստանում ակտիվների կառավարման ոլորտի առաջին ընկերություններից մեկի ձեռքբերումն է: Սա Նայաստանի ներդրումախորհրդատվական ոլորտում շրջադարձային գործարք է, որը վերահաստատում է «Ամերիա» խմբի տարածաշրջանում առավել դինամիկորեն զարգացող առաջատար ֆինանսական խումբ դառնալու ձգտումը և նպատակասլացությունը: Հավատարիմ մնալով սոցիալական պատասխանատվության սկզբունքներին և կայուն կորպորատիվ արժեքներին՝

«Ամերիա» խումբն արդեն 4-րդ տարին անընդմեջ կազմակերպեց բարեգործական ամանորյա աճուրդ, որի ընթացքում հանգանակված գումարը կազմեց 30,573,000 ՀՀ դրամ (75,000 ԱՄՆ դոլար): այն կրկնապատկվեց «Ամերիա» խմբի կողմից (կազմելով 61,146,000 ՀՀ դրամ կամ 151,000 ԱՄՆ դոլար) և ուղղվեց քաղցկեղով և այլ ծանր հիվանդություններով տառապող 17 երեխաների բուժմանը: Ողջ 2013թ. ընթացքում մեր ջանքերն ուղղված էին արդյունավետության բարձրացմանը: Մենք մտադիր ենք նույնությամբ շարունակել նաև 2014թ. ընթացքում: 2014թ. Բանկի հիմնական ռազմավարական նպատակներից մեկը մանրածախ վարկային պորտֆելի և ՓՄՁ վարկավորման աճն է, որին մենք մտադիր ենք հասնել մասնաճյուղերի ցանցի ընդլայնման, Նոր պրոդուկտների ներդրման, հեռակա սպասարկման համակարգերի և տեխնոլոգիական Նոր լուծումների միջոցով: Որպես շուկայի բացարձակ առաջատար ըստ ակտիվների և պարտավորությունների մենք մեր առջև համարձակ խնդիր ենք դնում՝ մեծացնել առկա ներուժը և դառնալ բանկային համակարգի բացարձակ առաջատար նաև ըստ զուտ շահույթի, կապիտալի եկամտաբերության և արդյունավետության՝ շարունակելով հատուկ ուշադրություն դարձնել հետագա աճի հնարավորություններին, որոնք թույլ կտան ավելացնել Բանկի բաժնետիրական արժեքը: Մենք չենք բացառում նաև Բանկի ոչ օրգանական աճի հնարավորությունը հավակնոտ երկարաժամկետ նպատակների իրագործման համար: Հենվելով առաջատար միջազգային փորձի վրա՝ Ամերիաբանկը հավատարիմ է մնում

կորպորատիվ կառավարման համակարգի և սկզբունքների զարգացմանը, ինչը ենթադրում է 5-7 տարին մեկ Տնօրենների խորհրդի նախագահի փոփոխություն, Տնօրենների խորհրդի անկախ անդամների ներգրավում համընդհանուր Նորմերին: Մասնավորապես, 2013թ. որպես Տնօրենների խորհրդի անկախ անդամ մեզ միացավ պարոն Ռոբերտ Ֆոն Ռեկովսկին, որն ունի «Ֆիդելիթի Ինվեսթմենթս» ընկերությունում աշխատելու՝ զարգացող շուկաներում պորտֆելների կառավարման 23-ամյա հարուստ փորձ: Ավելին, 2013թ. վերջից Բանկի Տնօրենների խորհուրդը գլխավորում է «Ամերիա» խմբի գլխավոր տնօրեն և դրա հիմնադիրներից մեկը՝ Անդրեյ Սկրոչյանը: Նրա բարձր պրոֆեսիոնալիզմն անգնահատալի ավանդ կթողնի խորհրդի աշխատանքում: 2014թ. մենք մտադիր ենք ջանք չինսայել մեր հիմնական շահառուների՝ բաժնետերերի, հաճախորդների և աշխատակիցների բավարարվածությունը և լոյալությունը պահպանելու համար: Եզրափակելով խոսքս՝ ցանկանում եմ խորին երախտագիտություն հայտնել բանկի Տնօրենների խորհրդին և ղեկավարությանը, ինչպես նաև ողջ անձնակազմին, որը բաղկացած է իրենց գործին նվիրված Նորարար համախոհներից: Նրանց նախաձեռնողականության շնորհիվ է, որ բանկը կարողացավ հաղթահարել բոլոր արգելքները և ստեղծել աճի Նորանոր հնարավորություններ:

Հարգանքով,
Ռոբեն Վարդանյան
Տնօրենների խորհրդի
անդամ





Ռուբեն Վարդանյան, Տնօրենների խորհրդի անդամ

Ազատության մասին ես առաջին անգամ լուրջ մտորեցի 1987թ., երբ կարդացի Ջորջ Օրուելի «1984» վեպը: Ինձ համար ազատությունը բաղկացած է երկու բաղադրիչից՝ արտաքին և ներքին: Ներքին ազատությունը կապված է բոլոր տեսակի սահմանափակումներից, կարծրատիպերից վեր լինելու հետ: Ըստ իմ՝ հենց այդ տեսակի ազատությանն են ձգտում հասնել բուրգայական քահանաները: Չէ որ «նիրվանա» նշանակում է ոչ այլ ինչ, քան բոլոր աշխարհիկ արգելքների հաղթահարում: Ինչ վերաբերում է արտաքին ազատությանը, այն ենթադրում է ազատ ընտրություն կատարելու ունակություն: Մյուս կողմից, ազատությունը շռայլություն է: Իրական կյանքում ընտրություն կատարելիս դու սահմանափակված ես պատասխանատվությամբ՝ ընտանիքիդ, գործընկերներիդ, ընկերներիդ առջև: Եվ ուրեմն՝ իմ կարծիքով չկա բացարձակ ազատություն, կա ինքդ քեզ չուրանալու և շրջապատին չհաճոյանալու կարողությունը:

> Արտակ Նանեսյանի ուղերձը

Հարգարժան բաժնետերեր, հաճախորդներ և գործընկերներ
Ուրախ եմ Ձեր ուշադրությանը ներկայացնել 2013թ.-ի Ամերիաբանկի մարտահրավերները, ինչպես նաև Բանկի ձեռքբերումները:

2013թ. հիմնական ձեռքբերումները
2013թ. նշանավորվեց մեր ռազմավարական նպատակների իրագործմամբ և արդյունավետության նշանակալից ցուցանիշներով, ինչն օգնեց մեզ պահպանել աճի կայուն տեմպերը և դառնալ բացարձակ առաջատար ըստ ակտիվների, պարտավորությունների, հաճախորդների ավանդների և 2-րդն ըստ վարկային պորտֆելի:

Հավատարիմ մնալով մեր ռազմավարական նպատակներին՝ մենք շարունակում ենք աշխատել մանրածախ բանկային ծառայությունների զարգացման և ՓՄՁ վարկավորման ընդլայնման ուղղությամբ՝ այդ նպատակով ընդլայնելով համակարգային և տեղային ենթակառուցվածքը, համալրելով անձնակազմը և կատարելագործելով առկա բիզնես-գործընթացները: Մասնավորապես, Երևանի կենտրոնում բացվեց Նոր «Սայաթ-Նովա» մասնաճյուղը, որը համապատասխանում է որակի ամենաբարձր չափանիշներին և նախատեսված է պրեմիում-հաճախորդների սպասարկման համար:

2013թ. Ամերիաբանկը հերթական անգամ արժանացավ այնպիսի հեղինակավոր միջազգային մրցանակների, ինչպիսիք են «Financial Times»-ի The Banker ամսագրի, Կոմերցբանկի և Global Finance-ի «Տարվա բանկ 2013» մրցանակները:

Ֆինանսական ցուցանիշներ

2013թ. Բանկը կրկին ապահովեց եկամտի և շահույթի բարձր ցուցանիշներ: Հանդիսանալով առաջատար կորպորատիվ բանկային գործառնությունների ոլորտում և ունենալով իրավաբանական անձանց վարկերի խոշոր պորտֆել՝ մենք այժմ ուղղում ենք ջանքերը դեպի մանրածախ բիզնեսի զարգացում:

2013թ. միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ գործընկեր բանկերից ներգրավված միջոցների ընդհանուր ծավալը հասավ շուրջ 145 մլն ԱՄՆ դոլարի, ինչը վկայում է Ամերիաբանկի և ֆինանսական կազմակերպությունների միջև ձևավորված երկարամյակ կայուն գործընկերության և Բանկի հանդեպ ունեցած վստահության մասին: Ցանկանում եմ առանձնապես նշել, որ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված վարկավորման այս ծավալներն աննախադեպ են հայկական բանկի համար: 2013թ. Բանկը կնքեց մի շարք կարևոր վարկային պայմանագրեր, մասնավորապես, 12 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիր Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ), 15 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիր Ավստրիական զարգացման բանկի (ՕԵԵԲ) և 15 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիր ֆրանսիական «Պորպարկո» զարգացման գործակալության հետ:

2013թ. Բանկն զգալիորեն գերազանցում էր աճի միջին շուկայական տեմպերը՝ ապահովելով ակտիվների՝ 28.6%, վարկավորման՝ 20.5% (այդ թվում լիզինգ և ֆակտորինգ), պարտավորությունների՝ 32.7%, հաճախորդների ավանդների՝ 34.6% տարեկան զուտ աճ, մինչդեռ բանկային համակարգի միջին ցուցանիշները կազմում էին համապատասխանաբար 11%, 10%, 13% և 17%:

Ցանկանում եմ հատուկ շեշտել Ամերիաբանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում ըստ հիմնական ֆինանսական ցուցանիշների. 2013թ. արդյունքներով բանկն զբաղեցնում է 1-ին դիրքն ըստ ակտիվների, պարտավորությունների և հաճախորդների ավանդների, 2-րդն ըստ վարկային պորտֆելի և 3-րդ ըստ զուտ շահույթի:

Նորամուծություններ

Նորարար և առաջադեմ բանկային տեխնոլոգիաների կիրառումը մշտապես մնում է Բանկի ուշադրության կենտրոնում: Այդ իսկ պատճառով մենք մշտապես պահպանում ենք սպասարկման բարձր որակ, որի վառ ապացույցն է ISO 9001:2008 որակի միջազգային չափանիշին համապատասխանության վկայականը,

որը Բանկին է շնորհվում TÜV Rheinland գերմանական ընկերության կողմից՝ սկսած 2009թ.: 2013թ. Բանկում ներդրվեցին մի շարք նորարարական պրոդուկտներ և ծառայություններ, որոնք լրացուցիչ արժեք են ստեղծում մեր հաճախորդների համար: Այդ ծառայությունների թվում են էլեկտրոնային առևտրի համակարգերը, Նոր քարտային պրոդուկտները, ՓՄՁ և վերականգնվող էներգետիկայի ոլորտի վարկերը, «Ամերիա» ավանդը, նախադեպը չունեցող «Ամերիա Փարթներ» փաթեթը, որը նախատեսված է բարձրակարգ հաճախորդների համար և ներառում է Visa Infinite քարտ ու մի շարք արտոնություններ:

Երախտիցի խոսք

Մեր հաջողության գրավականը, անշուշտ, մեր թիմն է: Ռազմավարական ծրագրեր կազմելիս մենք վստահ ենք, որ մեր փորձառու ղեկավարները և Տնօրենների խորհուրդը հետազայում ևս իրենց հարուստ ավանդն են ներդնելու բանկի զարգացման գործում՝ արժեք ստեղծելով մեր բոլոր բաժնետերերի, գործընկերների և հաճախորդների համար: Մենք մտադիր ենք շարունակել աշխատել նույն եռանդով, խանդավառությամբ և վճռականությամբ՝ հավատարիմ մնալով մեր սկզբունքներին և հետամուտ լինելով հաջորդ տարվա մեր ռազմավարական նպատակների իրագործմանը:

Իմ Երախտագիտությունն եմ հայտնում մեր թիմին, որը կազմված է իսկական պրոֆեսիոնալներից, մարդկանցից, ովքեր ձգտում են շարունակական ինքնակատարելագործման: Մեր Երախտագիտությունն եմ հայտնում նաև մեր հաճախորդներին, գործընկերներին, մատակարարներին, որոնց շնորհիվ է, որ մենք կարողանում ենք հետևողականորեն կատարելագործվել և պահպանել առաջատարի դիրքը: Շնորհակալ ենք մեր Տնօրենների խորհրդից և բաժնետերերից՝ մշտական աջակցության և բարի կամքի համար:

Արտակ Նանեսյան
Ամերիաբանկի
գլխավոր տնօրեն





Արտակ Հանեսյան, Տնօրինության նախագահ – գլխավոր տնօրեն

Ինձ համար ազատությունը ենթադրում է երեք բան՝ գործելու ազատություն, երազելու ազատություն և ճանապարհորդելու ազատություն: Գործելու ազատություն ասելով՝ նկատի ունեմ այնպիսի միջավայր, ուր կարող ես ազատ մտածել ու արտահայտվել, ինքնակատարելագործվել և գնահատված լինել: Երկրորդը երազելու ազատությունն է՝ եթե երազում ես, ուրեմն ապրում ես ու ձգտում դեպի լուսավոր ապագա, չէ որ երազանքն է, որ մարդուն տանում է առաջ: Եվ վերջապես՝ ճանապարհորդելու ազատությունը. երազելու և ճանապարհորդելու կարողությունն ինձ թույլ է տալիս հաղորդակից լինել մեծին, խորհրդավորին:



2013 թ.

ՆԻՄՆԱԿԱՆ
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

իր գոյության առաջին իսկ տարուց Ամերիա-բանկը որդեգրել է շարունակական զարգացման ռազմավարությունը: Բացառություն չկազմեց նաև 2013թ.: Կարևորագույն ձեռքբերումը հաճախորդների վստահության աճն է, որի մասին վկայում է ակտիվների և պարտավորությունների աճը համապատասխանաբար 28.6%-ով և 32.7%-ով. այս ցուցանիշներով բանկն այժմ զբաղեցնում է ՀՀ բանկային համակարգի առաջատարի դիրքը: Ըստ զուտ շահույթի բանկն զբաղեցնում է 3-րդ դիրքը: Առաջընթաց է գրանցվել նաև վարկային

պորտֆելի, այդ թվում՝ լիզինգի և ֆակտորինգի մասով: Մասնավորապես, 2013թ. բանկի վարկային պորտֆելն աճեց շուրջ 20.5%-ով՝ կազմելով ավելի քան 176 մլրդ ՀՀ դրամ, ընդ որում ՓՄՁ վարկերն աճեցին 58%-ով՝ կազմելով ավելի քան 33 մլրդ ՀՀ դրամ: 2013թ. բանկը կատարելագործեց բիզնեսի մանրածախ վարկավորման մի շարք պրոդուկտներ: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում բանկի կողմից ներգրավված ավանդներն աճեցին 34.6%-ով: Այսպիսով, հաշվի առնելով վերը նշվածը,

ինչպես նաև բանկի որդեգրած ռազմավարությունը, ծառայությունների ընտրանին և որակը, ներկայում Ամերիաբանկն օրինաչափորեն հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի ամենադինամիկորեն զարգացող բանկը: Այս արդյունքներին հնարավոր եղավ հասնել ընդամենը 5 տարում. իր ուղին սկսելով որպես համեմատաբար փոքր բանկ՝ Ամերիաբանկը այդ 5 տարիների ընթացքում կարողացավ դառնալ խոշոր ֆինանսական կառույց՝ ծառայությունների լայն տեսականիով:


Ֆինանսական ձեռքբերումները*

Ֆինանսական ցուցանիշներ	31/12/13	31/12/12	31/12/11
Ակտիվներ			
մլն ՀՀ դրամ	315,048	245,054	200,943
հազ. ԱՄՆ դոլար	776,669	607,200	520,887
Շուկայի մասնաբաժինը**	10.71%	10.16%	9.72%
Դիրքը բանկային համակարգում**	1	2	2
Պարտավորություններ			
մլն ՀՀ դրամ	276,342	208,281	166,171
հազ. ԱՄՆ դոլար	681,249	516,084	430,751
Շուկայի մասնաբաժինը**	11.18%	10.39%	9.79%
Դիրքը բանկային համակարգում**	1	1	2
Վարկային պորտֆել (այդ թվում՝ լիզինգ և ֆակտորինգ)			
մլն ՀՀ դրամ	176,133	146,162	136,439
հազ. ԱՄՆ դոլար	434,211	362,165	353,680
Շուկայի մասնաբաժինը**	9.96%	9.63%	10.83%
Դիրքը բանկային համակարգում**	2	3	2
Դասակարգված վարկերի մասնաբաժինն ընդհանուր վարկային պորտֆելում			
	1.55%	0.99%	0.27%
Պարտավորությունների հաճախորդների նկատմամբ			
մլն ՀՀ դրամ	169,942	126,302	91,333
հազ. ԱՄՆ դոլար	418,948	312,954	236,755
Շուկայի մասնաբաժինը**	10.49%	10.59%	8.64%
Դիրքը բանկային համակարգում**	1	2	3
Շահույթ			
մլն ՀՀ դրամ	6,057	6,037	4,055
հազ. ԱՄՆ դոլար	14,787	15,033	10,887
Դիրքը բանկային համակարգում**	3	2	4
Ընդհանուր կապիտալ			
մլն ՀՀ դրամ	38,706	36,773	34,772
հազ. ԱՄՆ դոլար	95,419	91,116	90,136
Դիրքը բանկային համակարգում**	4	2	2


*Այստեղ և այսուհետ ԱՄՆ դոլարով բոլոր ցուցանիշները հաշվարկված են հաշվետու տարվա վերջի փոխարժեքով (2011թ. 1 ԱՄՆ դոլարը = 385.77 դրամ, 2012թ.՝ 403.58 ՀՀ դրամ, իսկ 2013թ.՝ 405.64 ՀՀ դրամ): Եկամտի և ծախսերի բոլոր ցուցանիշները դոլարային արտահայտությամբ հաշվարկվել են միջին տարեկան փոխարժեքով՝ 2011թ. 1 ԱՄՆ դոլարը = 372.47 դրամ, 2012թ.՝ 401.57 ՀՀ դրամ, իսկ 2013թ.՝ 409.61 ՀՀ դրամ:

**Այստեղ և այսուհետ համադրելիության ապահովման նկատառումներից ելնելով՝ բոլոր համեմատությունները (շուկայի մասնաբաժինը, դիրքը բանկային համակարգում) կատարվում են ըստ միջանկյալ եռամսյակային հրապարակված հաշվետվությունների (աուդիտ չանցած):

Բանկի ակտիվների և պարտավորությունների դինամիկան, հազ. ԱՄՆ դոլար




Ամերիաբանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում ըստ ակտիվների, %




Շնորհիվ ակտիվների և պարտավորությունների դինամիկ աճի, որը պահպանվում է արդեն 6 տարի անընդմեջ, Ամերիաբանկը տարեցտարի ամրապնդում է առաջատարի իր դիրքերը ՀՀ բանկային համակարգում: 6 տարվա ընթացքում (2008-2013թթ.) Ամերիաբանկի վարկային պորտֆելի մասնաբաժինը 4.91%-ից հասավ 9.96%-ի, իսկ Բանկի մասնաբաժինն ըստ հաճախորդների նկատմամբ ունեցած պարտավորությունների ավելի քան կրկնապատկվեց՝ 4.87%-ից հասնելով 10.49%-ի:

Ամերիաբանկի մասնաբաժինն ըստ վարկային պորտֆելի և հաճախորդների ավանդների



Ամերիաբանկի շահույթի դինամիկան

6 տարվա ընթացքում Բանկի մասնաբաժինն ըստ շահույթի ավելացել է ավելի քան 4 անգամ:



2013թ. Ամերիաբանկի հիմնական ձեռքբերումներն են.

1. Փոխհարաբերություններ հաճախորդների հետ և նոր պրոդուկտներ

- Հաճախորդների բազան աճեց ավելի քան 19.6%-ով:
- «Ամերիա» ավանդի ներդրման արդյունքում ժամկետային ավանդներն աճեցին 28.8%-ով:
- Շուկային ներկայացվեց համատեղ քարտ «Յուբում» ընկերության հետ:
- Ամբողջությամբ վերանայվեց ՓՄՁ համար նախատեսված պրոդուկտների ցանկը՝ հիմնական շեշտը դրվեց վարկավորման պարզեցման և արագացման վրա:
- Բանկը հանդես եկավ միջազգային ֆակտորինգի ծառայություններով, մասնավորապես, 2013թ-ից բանկը հանդիսանում է «Ֆակտորու Չեյն Ինթերնեշնլ» միջազգային ֆակտորինգային միության անդամ:
- Ներդրվեց «Ամերիա Փարթներ» փաթեթը՝ նախատեսված ամենաբարձրակարգ հաճախորդների համար, ինչպես նաև վերանայվեց «Ամերիա Պրեմիում» փաթեթը:
- Բանկին շնորհվեց Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորի

կարգավիճակ՝ թույլ տալով մատուցել հաճախորդներին պահառուական ծառայությունների ամբողջ տեսականին:

2. Տեխնոլոգիաներ և ենթակառուցվածք
- 2013թ. վերջի դրությամբ բանկումատների ընդհանուր թիվը հասավ 92:
 - Բանկին շնորհվեց VISA ինտերնետ-էքվայրինգի ծառայություններ մատուցելու լիցենզիա:
 - Մշակվեց վիրտուալ POS-տերմինալ, որի միջոցով առևտրի և սպասարկման կետերը կարող են առցանց վճարումներ ընդունել VISA, MasterCard և ArCa վճարային համակարգերի քարտերով:
 - Մշակվեց բարեգործական կայք՝ <http://csr.ameriagroup.am/>:
3. «Երազանքի թիմի» ձեռքբերումները
- «Ամերիա Սերունդ» ծրագրի երկրորդ փուլի մեկնարկ՝ երիտասարդ, խոստումնային և ստեղծագործ մասնագետների ներգրավում:
 - Կորպորատիվ վերապատրաստումների կենտրոնի զարգացում բանկի անձնակազմի մասնագիտական ուսուցման, առաջատար

դասախոսների և բիզնես-դպրոցների հետ համագործակցության ընդլայնման նպատակով:

- ԿԶԵԲ-ի կազմակերպած առցանց սեմինարում Ամերիաբանկի Առևտրի ֆինանսավորման վարչության աշխատակիցները ցույց տվեցին լավագույն արդյունքը և արժանացան ոսկե մեդալի:
- «Տարվա լավագույն բանկ 2013» ըստ Financial Times-ի The Banker ամսագրի վարկածի, «Առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում էներգախնայողության ապահովման տեսանկյունից Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում տարվա լավագույն թողարկող բանկ», «Տարվա լավագույն բանկ 2013», «Արտարժույթ փոխանակող տարվա լավագույն բանկ 2013», «Լավագույն բանկ առևտրի ֆինանսավորման ոլորտում» և «Լավագույն ենթապահառու բանկ» ըստ Global Finance-ի վարկածի:
- Թիմի կառուցում և միջին օդակի ղեկավարների հմտությունների զարգացում:



«ԱՄԵՐԻԱ»
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԽՄԲԻՄԱՍԻՆ

> «Ամերիա» ընկերությունների խումբ

«Ամերիա» բառն արդեն որերորդ տարին ծանոթ է բոլոր նրանց, ովքեր ներգրավված են ՀՀ ֆինանսական հատվածում: Եվ դա զարմանալի չէ՝ իր գործունեության առաջին իսկ օրից «Ամերիա» ընկերությունների խումբը դիրքավորվեց որպես ՀՀ առաջին և առավել դինամիկորեն զարգացող ֆինանսական հաստատություններից մեկը, որն առաջարկում է ֆինանսական և խորհրդատվական ծառայությունների լայն տեսականի:

Մեր հաճախորդներին մենք տրամադրում ենք հիմնարար համապարփակ աջակցություն հետևյալ ոլորտներում՝

- Բանկային գործ
- Կառավարման խորհրդատվություն
- Իրավաբանական խորհրդատվություն
- Ներդրումային բանկային

գործառնություններ

- Ակտիվների կառավարում

Խմբի առավել դինամիկ կերպով զարգացող կազմակերպություններից մեկն է Ամերիաբանկը: Ամերիաբանկն ունի վերսալ բանկ է, որը տրամադրում է կորպորատիվ, ներդրումային և մանրածախ բանկային ծառայությունների միասնական փաթեթ: Մենք որդեգրել ենք աշխատանքի մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնք հանդիսանում են մեր հիմնական առավելությունը՝ անհատական մոտեցումը, նորարարությունը, բարձր պրոֆեսիոնալիզմը, փորձը և միասնական թիմը: Հենց այս մոտեցումն է ըստ մեզ թույլ տվել Ամերիաբանկին դառնալ ՀՀ բանկային համակարգի առաջատարներից մեկը: «Ամերիա» ՓԲԸ, որը առաջատար է իրավաբանական և խորհրդատվական ծառայությունների շուկայում, ևս չի զիջում Ամերիաբանկին իր ծառայությունների որակով և հաճախորդների վստահությանը: «Ամերիա» ՓԲԸ

առաջարկում է բազմակողմանի լուծումներ մեկ կազմակերպության ներքո: Հմուտ և արհեստավարժ թիմը կազմված է ամենատարբեր ոլորտների մասնագետներից՝ իրավական և հարկային խորհրդատվություն, կորպորատիվ վերակազմավորում, կառավարում, ինչը հաճախորդներին թույլ է տալիս օգտվել այդ բոլոր փոխկապակցված ծառայություններից մեկ վայրում և ստեղծում լրացուցիչ առավելություններ:

Հայաստանի ներդրումային ոլորտում դինամիկորեն զարգացող մեկ այլ ընկերություն է Ամերիա Ասեթ Մենեջմենթը, որը ևս ունի հստակ նպատակ՝ դառնալ ՀՀ ներդրումային ոլորտի առաջատար: Ամերիա Ասեթ Մենեջմենթն առաջարկում է խորհրդատվական ծառայություններ ակտիվների կառավարման և ներդրումային գործունեության ոլորտներում:




Աղդեյ Մկրտչյան, Տնօրենների խորհրդի նախագահ

Ազատությունը մի կողմից մտածելու և գործելու ազատություն, մյուս կողմից՝ պատասխանատվության միջև ներդաշնակություն պահպանելու կարողությունն է: Իրապես ազատ կարող են լինել միայն ուժեղ անձնավորությունները, ովքեր մշտապես աշխատում են, ինքնակատարելագործվում և երբեք չեն կորցնում իրենց իսկական դեմքը: Ազատ է նա, ով ունակ է ընտրելու բարին, ոչ թե չարը, ընտրելու սերը և չորանալու այն: Բայց լինում է և այնպես, որ մարդը սխալ ընտրություն է կատարում, և պատճառը լինում է տգիտությունը, փորձի պակասը, գրագետ ուսուցիչների բացակայությունը: Այդ իսկ պատճառով ազատության լավագույն բնութագիրը, ըստ իս, տվել է Մահաթմա Գանդին՝ ազատությունը ոչինչ չարժե, եթե այն չի ներառում սխալվելու ազատություն:

2010թ-ին ԱՄՆ-ում՝ Լոս Անջելեսում, բացվեց Ամերիա խմբի ներկայացուցչությունը՝ «Ամերիա Գրուպ Ինքորփորեյթիդ»-ը, որի նպատակն է հայկական Սփյուռքին մատուցել լիարժեք խորհրդատվական ծառայություններ և պահպանել կապը Հայրենիքի հետ՝ ապահովելով խոստումնալից ներդրումային հնարավորություններ Հայաստանում: Որպես համահայկական ֆինանսական խումբ՝ Ամերիա Գրուպ Ինք.-ը հանդիսանում է կամուրջ Հայրենիքի և Սփյուռքի միջև՝ տրամադրելով պրոֆեսիոնալ ծառայություններ, հատկապես միաձուլումների և ձեռքբերումների, իրավաբանական խորհրդատվության, բաժնետիրա-

կան ֆինանսավորման խորհրդատվության ոլորտներում: «Ամերիա» ընկերությունների խումբն ունի արդեն 16 տարվա պատմություն: Հիմնադրված լինելով 1998թ. որպես Հայաստանում առաջին մասնագիտական խորհրդատվական ընկերություններից մեկը՝ խումբն իր հովանու տակ է միավորում երիտասարդ, բայց եզակի և խոստումնալից մասնագետների: 2001թ. հիմնադրվեց Ամերիա Ասեթ Մենեջմենթը՝ դառնալով երկրում ակտիվների կառավարման ծառայություններ առաջարկող առաջին ընկերություններից մեկը: 2007թ. Ամերիան և Ամերիա Գրուպ Սի

Ուայ Լիմիթեդը (նախկինում Թի Դի Էյ Հոլդինգս Լիմիթեդ) սկսեցին զարգացման ամենաագրեսիվ արշավը Հայաստանի ֆինանսական հատվածում: Այդ գործընկերության ամենանշանակալից արդյունքն է Հայնեթարտբանկի բաժնետոմսերի ձեռքբերումը Ամերիա Գրուպ Սի Ուայ Լիմիթեդ ընկերության կողմից 2007թ., իսկ մեկ տարի անց Հայնեթարտբանկը վերանվանվեց Ամերիաբանկ: Բաժնետերերի փոփոխությունից հետո բանկը թևակոխեց ռազմավարության և կառավարման սկզբունքների զարգացման բոլորովին նոր մի ժամանակաշրջան:



> Զարգացման հիմնական փուլերը

1910 **◇** Տեր-Ղուկասյան փողոցի վրա՝ Ռուսական Ուղղափառ եկեղեցու դիմաց, կառուցվում է Թիֆլիսի առևտրային բանկի Էրիվանյան մասնաճյուղի շենքը: Թիֆլիսի առևտրային բանկը հիմնադրվել էր 1871թ. հայտնի հայ ձեռներեցների կողմից:

1916 **◇** Թիֆլիսի առևտրային բանկը վերանվանվում է Կովկասյան բանկ, համապատասխանաբար վերանվանվում է Նան Էրիվանյան մասնաճյուղը: Արխիվում պահպանված փաստաթղթերը վկայում են, որ Հայաստան մտնող դրամական հոսքերի մեծ մասն անցնում էր Կովկասյան բանկի Էրիվանյան մասնաճյուղով:

1920 **◇** Կովկասյան բանկի Էրիվանյան մասնաճյուղի ազգայնացում շեղկոմի՝ 1920թ. դեկտեմբերի 18-ի որոշմամբ: 1921թ. փետրվարից մինչև 1922թ. մարտ ամիսը բանկի շենքում տեղակայված էր Հայկական հեռագրային գործակալությունը (Արմտագ): 1922թ. մարտի 24-ին շենքում տեղակայվեց Հայաստանի Պետբանկը:

1924 **◇** Հիմնադրվում է Հայաստանի Կոմունալ բանկը: 1924թ. մայիսի 1-ից բանկը գործում էր Նալբանդյան 2 (Նախկին Տեր-Ղուկասյան փողոց) հասցեում:

1959 **◇** Կոմունալ բանկի հիմնարկների և կազմակերպությունների հաշվարկային հաշիվներով գործարքներն սկսեց իրականացնել Ստրոյբանկի հայաստանյան գրասենյակը, որը տեղակայված էր Նալբանդյան 2 հասցեում գտնվող պատմական բանկային շենքում:

1974 **◇** Նույն շենքում հիմնադրվում է ԽՍՀՄ Վնեշտորգբանկի հայաստանյան մասնաճյուղը:

1988 **◇** Ձևավորվում է ԽՍՀՄ Վնեշէկոնոմբանկի հանրապետական մասնաճյուղը:

1992 **◇** ԽՍՀՄ Վնեշէկոնոմբանկի մասնաճյուղը վերակազմավորվում է «Հայներարտբանկ» պետական ՓԲԸ-ի:

1995 **◇** Օտարերկրյա կապիտալի ներգրավում. բանկի բաժնետոմսերի հիմնական փաթեթը ձեռք է բերվում «Քոմփոթրոն Ինդասթրիզ Իսթեբլիշմենթ» ընկերության կողմից:

2007 **◇** Բաժնետերերի փոփոխություն. Հայներարտբանկի բաժնետոմսերի հիմնական փաթեթը ձեռք է բերվում «Թի Դի Էյ Նոլդինգս Լիմիթեդ» ընկերության կողմից:

2008 **◇** «Հայներարտբանկ» ՓԲԸ-ն վերանվանվում է «Ամերիաբանկ» ՓԲԸ:

2008 **◇** Ամերիաբանկը դառնում է Visa International-ի հիմնական անդամ:

2008 **◇** Ամերիաբանկը դառնում է Հայկական ֆոնդային բորսայի անդամ:

2009 **◇** Բանկն սկսում է թողարկել և սպասարկել VISA միջազգային վճարային քարտեր:

2009 **◇** Բանկն ստանում է Նորագույն ISO 9001:2008 որակի միջազգային չափանիշներին համապատասխանության վկայագիր:

2009 **◇** Կնքվում է պայմանագիր Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) հետ առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի (GTFP) շրջանակներում:

2009 **◇** Bloomberg միջազգային տեղեկատվական համակարգում բացվում է Ամերիաբանկի պաշտոնական էջը:

2009 **◇** Բացվում է Ամերիաբանկի «Քաջարան» մասնաճյուղը ՆՆ Սյունիքի մարզի Քաջարան քաղաքում:

2009 **◇** Բացվում է Ամերիաբանկի Նոր գլխավոր մասնաշենքը:

- 2009 Նոյեմբեր ◆ Բացվում է Ամերիաբանկի Նոր` «Կենտրոն» մասնաճյուղը Երևանում:
- 2009 դեկտեմբեր ◆ Կնքվում է պայմանագիր Հոլանդիայի զարգացման բանկի (FMO) և Գերմանական ներդրումների և զարգացման ընկերություն (Deutsche Investitions- und Entwicklungsgesellschaft mbH, DEG) հետ` փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման նպատակով 30 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում ներգրավելու վերաբերյալ:
- 2010 փետրվար ◆ Բացվում է Ամերիաբանկի «Դիլիջան» մասնաճյուղը:
- 2010 մարտ ◆ ԱՄՆ ՄԶԳ` ֆինանսական համակարգի առողջացման ծրագրի շրջանակներում ներկայացվում է պատվերների ֆինանսավորման ծառայությունը:
- 2010 մարտ ◆ Բանկն ստանում է պետական միջնաժամկետ և երկարաժամկետ զանձապետական պարտատուների շուկայի գործակալի կարգավիճակ:
- 2010 մարտ ◆ Կնքվում է պայմանագիր ՎԶԵԲ-ի հետ` փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման համար Ամերիաբանկին 10 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում տրամադրելու վերաբերյալ:
- 2010 մայիս ◆ Կնքվում է պայմանագիր ՎԶԵԲ-ի հետ առևտրի աջակցման ծրագրի շրջանակներում:
- 2010 մայիս ◆ Բացվում է Ամերիաբանկի Նոր` «Կասկադ» մասնաճյուղը Երևանում:
- 2010 հունիս ◆ Բացվում է Ամերիաբանկի Նոր` «Կոմիտաս» մասնաճյուղը Երևանում:
- 2010 հուլիս ◆ Բանկն արժանանում է Կոմերցբանկի մրցանակին` 2009թ. միջազգային գործառնությունների անթերի իրականացման համար:
- 2010 հուլիս ◆ Բանկն արժանանում է Կոմերցբանկի մրցանակին` առևտրի ֆինանսավորման ոլորտում նշանակալից ձեռքբերումների համար:
- 2010 դեկտեմբեր ◆ Բանկն արժանանում է Financial Times-ի The Banker ամսագրի «Տարվա լավագույն բանկ 2010» մրցանակին:
- 2010 դեկտեմբեր ◆ Կնքվում է պայմանագիր Եվրասիական զարգացման բանկի (ԵԶԲ) հետ` փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար Ամերիաբանկին 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային գիծ տրամադրելու վերաբերյալ:
- 2011 մարտ ◆ Կնքվում է պայմանագիր Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) հետ` առևտրի ֆինանսավորման համար միջոցներ ներգրավելու վերաբերյալ:
- 2011 մայիս ◆ Կոմերցբանկն Ամերիաբանկին տրամադրում է բանկային երաշխիք ՀՀ դրամով:
- 2011 հունիս ◆ ՄՖԿ-ն Ամերիաբանկին շնորհում է «Առևտրի ֆինանսավորում 2010» մրցանակը` որպես առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում Կովկասյան տարածաշրջանում ամենաակտիվ թողարկող բանկին:
- 2011 հունիս ◆ Բանկն արժանանում է Euromoney-ի «Հայաստանի տարվա լավագույն բանկ 2011» գերազանցության մրցանակին:
- 2011 հուլիս ◆ Կնքվում է Առևտրի ֆինանսավորման կանխավճարների փոխհատուցման շարունակական համաձայնագիր Սիթիբանկի հետ` առևտրի ֆինանսավորման համար միջոցների ներգրավման նպատակով:
- 2011 սեպտեմբեր ◆ Բացվում է Ամերիաբանկի «Վանաձոր» մասնաճյուղը ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում:

- 2011
հոկտեմբեր

Կոմերցբանկը Ամերիաբանկին տրամադրում է առանց գրավի և երաշխավորության վարկ՝ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար:
- 2011
նոյեմբեր

ԱԶԲ-ի հետ կնքվում է 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով, փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար:
- 2012
ապրիլ

Բանկը հատկացնում է 15 մլն ԱՄՆ դոլար Չարենցավանի պողպատաձուլական գործարանի վերականգնման համար՝ ՄՖԿ-ի առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում:
- 2012
ապրիլ

Բացվում է Ամերիաբանկի նոր՝ «Շենգավիթ» մասնաճյուղը Երևանում:
- 2012
հունիս

Գերմանական TÜV Rheinland ընկերությունը 4-րդ տարին անընդմեջ վերահաստատում է բանկի համապատասխանությունը որակի կառավարման ISO 9001:2008 միջազգային չափանիշներին:
- 2012
հուլիս

Բանկն արժանանում է Euromoney-ի «Հայաստանի տարվա լավագույն բանկ 2012» գերազանցության մրցանակին երկրորդ տարին անընդմեջ:
- 2012
սեպտեմբեր

ԱԶԲ-ի հետ կնքվում է վերականգնվող վարկային գծի պայմանագիր առևտրի ֆինանսավորման գործիքների զարգացման նպատակով:
- 2012
հոկտեմբեր

Բանկն արժանանում է ՄՖԿ-ի «Առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում էներգախնայողության ապահովման տեսանկյունից Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում տարվա լավագույն թողարկող բանկ» մրցանակին:
- 2012
նոյեմբեր

ԱԶԲ-ի հետ կնքվում է 20 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիր փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար:
- 2012
նոյեմբեր

Առաջին անգամ Հայաստանում բանկը հաստատում է ակրեդիտիվ հայկական արտահանող ընկերության համար՝ հոգուտ խոշորագույն բանկային խմբի անդամ դազախական բանկի:
- 2012
դեկտեմբեր

Բանկը հանդես է գալիս որպես Հայաստանում մանրածախ առևտրի ոլորտի խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ ՍԱՍ Գրուպի արտարժույթային պարտատոմսերի անդերրայթեր և շուկա ստեղծող (մարքեթ-մեյթեր):
- 2012
դեկտեմբեր

Բանկը երկրորդ անգամ արժանանում է Կոմերցբանկի՝ առևտրի ֆինանսավորման
- 2012
դեկտեմբեր

Global Finance-ն Ամերիաբանկը ճանաչում է արտարժույթ մատակարարող լավագույն բանկը:
- 2012
դեկտեմբեր

Global Finance-ն Ամերիաբանկը ճանաչում է Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում լավագույն բանկը:
- 2013
հունվար

Բանկը դառնում է ֆակտորների խոշորագույն միջազգային կազմակերպության՝ «Ֆակտորգ Չեյն Ինթերնեշնլ»-ի անդամ: Նոր անդամակցությունը բանկին թույլ է տալիս ընդլայնել միջազգային ֆակտորինգային գործառնությունները և հաճախորդների համար ստեղծել նոր շուկաներ մուտք գործելու, բիզնեսն ընդլայնելու և նոր գործընկերներ ձեռք բերելու հնարավորություններ:
- 2013
փետրվար

Բացվում է Ամերիաբանկի նոր՝ «Սայաթ-Նովա» մասնաճյուղը Երևանում:
- 2013
մարտ

ՎԶԲ-ի հետ կնքվում է 12 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար: Պայմանագրի շրջանակներում տրամադրվող

ոլորտում գերազանցության մրցանակին:

միջոցների մի մասն էլ ուղղվելու է վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտների ֆինանսավորմանը:

2013 մարտ **◇** Բանկն արժանանում է Global Finance-ի «Հայաստանում տարվա լավագույն բանկ» մրցանակին:

2013 ապրիլ **◇** «Պրոպարկո» ֆրանսիական կազմակերպության հետ կնքվում է 15 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիր Հայաստանում գյուղատնտեսության և սննդի վերամշակման ոլորտների ֆինանսավորման նպատակով: Սա Պրոպարկոյի առաջին ներդրումն է Հայաստանում:

2013 մայիս **◇** ՎՋԵԲ-ն առաջին անգամ հայկական բանկին ի դեմս Ամերիաբանկի շնորհում է հաստատող բանկի կարգավիճակ միջազգային առևտրի աջակցման ծրագրի շրջանակներում:

2013 մայիս **◇** ՎՋԵԲ-ն Ամերիաբանկը ճանաչում է Հայաստանում ամենաակտիվ թողարկող բանկ 2012թ. առևտրի ֆինանսավորման ոլորտում:

2013 հուլիս **◇** Կնքվում է փոխըմբռնման հուշագիր Համահայկական բանկի և Ամերիաբանկի միջև:

2013 սեպտեմբեր **◇** Ավստրիական զարգացման բանկի և Ամերիաբանկի միջև կնքվում է 15 մլն ԱՄՆ դոլարի

վարկային պայմանագիր Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների և վերականգնվող էներգետիկայի ոլորտի ֆինանսավորման համար:

2013 նոյեմբեր **◇** Առաջինը Հայաստանում Ամերիաբանկը հանդես է գալիս կապիտալի միջազգային շուկայում շրջանառվող չձևավորված դոլարային եվրոպատատոմսերի առաջարկով:

2013 նոյեմբեր **◇** Ավարտին է հասցվում VISA ինտերնետ-էքվայրինգի ծառայության ներդրման նախագիծը:

2013 դեկտեմբեր **◇** Ամենամյա բարեգործական աճուրդի ընթացքում արյան հիվանդություններով տառապող երեխաների բուժման համար հանգանակվում է ավելի քան 30 մլն չձևավորված կրկնապատկվում է «Ամերիա» խմբի կողմից: Այս տարի աճուրդը կրում էր «Իսաղողը կյանք է» խորագիրը:

2013 դեկտեմբեր **◇** Ամերիաբանկն ստանում է Financial Times-ի The Banker ամսագրի «Հայաստանում տարվա լավագույն բանկ 2013» մրցանակը: Առաջին անգամը չէ, որ բանկն

արժանանում է ամսագրի պատվավոր մրցանակին:

Իրադարձություններ հաշվետու ամսաթվից հետո՝ 2014թ.

2014 հունվար **◇** Միջազգային Corporate Intl Magazine 2014 ամսագիրը բանկը ճանաչում է Հայաստանում 2013թ. ֆակտորինգային ծառայությունների ոլորտում լավագույն բանկը:

2014 մարտ **◇** Բացվում է Ամերիաբանկի նոր՝ «Արշակունյաց» մասնաճյուղը Երևանում՝ «Երևան Մոլ» առևտրի կենտրոնում:

2014 մարտ **◇** Գերմանական TÜV Rheinland ընկերությունը 6-րդ տարին անընդմեջ վերահաստատում է բանկի համապատասխանությունը որակի կառավարման ISO 9001:2008 միջազգային չափանիշներին:

2014 մարտ **◇** Բանկի նորագույն տեխնոլոգիաներով հագեցած Կոնտակտային կենտրոնն սկսում է հաճախորդների սպասարկումը: 2014թ. մարտի 1-ից կենտրոնը հանդիսանում է բանկի անբաժանելի ստորաբաժանում:

2014 ապրիլ **◇** Կոնտակտային կենտրոնն սկսում է սպասարկել հաճախորդներին շուրջօրյա ռեժիմում:

> Համաշխարհային գործընկերներ

Ավստրիական զարգացման բանկ (OeEB)



2013թ. կնքվել է 15 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր՝ 8 տարի ժամկետով: Պայմանագրի շրջանակներում ստացված ֆինանսական միջոցներն ուղղվելու են Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների և վերականգնվող էներգետիկայի ֆինանսավորմանը:

Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)



Ամերիաբանկի և ԱԶԲ-ի համագործակցության մեկնարկը տրվեց 2010թ. առևտրի ֆինանսավորման պայմանագրի կնքմամբ: Պայմանագրի շրջանակներում բանկին տրամադրված միջոցներն ուղղվեցին առևտրի զարգացմանը և Հայաստանի կայուն տնտեսական աճի ապահովմանը:

Առևտրի ֆինանսավորման ոլորտում ավելի քան արդյունավետ համագործակցության արդյունքում բանկին տրամադրվեց 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային գիծ՝ նախատեսված փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար: 2012թ. բանկի համար սահմանված առևտրի ֆինանսավորման սահմանաչափը եռապատկվեց՝ 3 մլն-ից հասնելով 9 մլն ԱՄՆ դոլարի:

Հոլանդիայի զարգացման բանկ (FMO)



Ամերիաբանկն սկսեց համագործակցել FMO-ի հետ 2009թ-ին՝ ստորագրելով 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր: Համագործակցության նպատակն էր Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների և վերականգնվող էներգետիկայի ոլորտի ֆինանսավորումը, որը թույլ տվեց բանկին ընդլայնել ՓՄՁ-ների և փոքր հիդրո և հողմակայանների վարկավորման ծավալները:

Համագործակցությունը շարունակվեց նաև 2010թ., երբ Ամերիաբանկը FMO-ի և DEG-ի (Գերմանական ներդրումների և զարգացման ընկերություն՝ Deutsche Investitions-und Entwicklungsgesellschaft mbH) աջակցությամբ բարեհաջող կերպով ավարտեց Էկոլոգիական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգի ներդրումը: Նշենք, որ Ամերիաբանկը տարածաշրջանում առաջիններից մեկն էր, որ ներդրեց նման համակարգ՝ արժանանալով FMO-ի և DEG-ի գնահատանքի հավաստագրի և ստանալով 2009թ. դեկտեմբերին կնքված պայմանագրի շրջանակներում վարկի տոկոսադրույքի նվազեցում:

Եվրասիական զարգացման բանկ (ԵԶԲ)



2010թ. բանկին տրամադրվեց 30 մլն ԱՄՆ դոլարի վարկային գիծ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (ՎԶԵԲ)



ՎԶԵԲ-ի հետ համագործակցությանը ևս ուղղված է փոքր և միջին բիզնեսի զարգացմանը և մեկնարկել է 2010թ., երբ ՎԶԵԲ-ն Ամերիաբանկին տրամադրեց 10 մլն ԱՄՆ դոլարի վարկային գիծ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար: ՎԶԵԲ-ը բանկին նաև տրամադրել է 2 մլն ԱՄՆ դոլարի երաշխիք առևտրի ֆինանսավորման համար, իսկ արդեն 2010թ. երաշխիքի սահմանաչափը հասավ 10 մլն ԱՄՆ դոլարի: 2013թ. ՎԶԵԲ-ի կողմից Ամերիաբանկին տրամադրված միջոցների ընդհանուր ծավալը հասավ շուրջ 50 մլն ԱՄՆ դոլարի:

Կոմերցբանկ



2010թ. Ամերիաբանկի և Կոմերցբանկի համագործակցությունը նշանավորվեց երկու աննախադեպ գործարքներով, որոնք նպաստեցին առևտրի ֆինանսավորման և փոքր ու միջին ձեռնարկությունների վարկավորման ընդլայնմանը՝ դրանով իսկ խթանելով երկրի ընդհանուր տնտեսական զարգացումը:

Մասնավորապես, առաջին գործարքը եզակի է այն առումով, որ Կոմերցբանկը հայկական բանկի ներկայացմամբ առաջին անգամ հաստատեց բանկային երաշխիք չէ դրամով՝ 805 մլն դրամ ընդհանուր ծավալով, որն ուղղված էր առևտրի ֆինանսավորմանը: Չէ ազգային արժույթով երաշխիքի տրամադրումը թույլ տվեց ընդլայնել Ամերիաբանկի հաճախորդների արտաքին առևտրային գործարքների ֆինանսավորումը:

Երկրորդ գործարքը ևս նախադեպը չունի՝ առաջին անգամ Կոմերցբանկը հայկական բանկին տրամադրեց խոշոր վարկ՝ առանց գրավի: Վարկային միջոցներն ուղղվեցին փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանը և հաճախորդների վարկավորման մրցունակ պայմանների ստեղծմանը:



Միջազգային ֆինանսական կորպորացիա (ՄՖԿ)

Դեռևս 2009թ. մեկնարկած համագործակցությունը ՄՖԿ-ի հետ թույլ տվեց Ամերիաբանկին ընդլայնել վերականգնվող էներգետիկայի ոլորտի, մասնավորապես փոքր շէկ-երի ֆինանսավորումը, ինչպես նաև առևտրի ֆինանսավորման գործիքների զարգացման հնարավորությունները: Արդյունքում բանկը դարձավ Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտի առաջատար:

ՄՖԿ-ի հետ հետագա համագործակցության շրջանակներում բանկին տրամադրվեց 15 մլն ԱՄՆ դոլարի վարկ՝ նախատեսված Հայաստանում վերականգնվող էներգետիկայի ոլորտի ֆինանսավորման համար: 2010թ. բանկի և ՄՖԿ-ի համագործակցությունը հասավ այնպիսի մակարդակի, որ ՄՖԿ-ն ավելացրեց բանկին տրամադրված՝ միջազգային առևտրի ֆինանսավորման երաշխիքի սահմանաչափը՝ այն հասցնելով 40 մլն ԱՄՆ դոլարի: Ընդհանուր առմամբ, ՄՖԿ-ի կողմից Ամերիաբանկին տրամադրված միջոցների ծավալը 2013թ. հասավ 55 մլն ԱՄՆ դոլարի: Բանկի և ՄՖԿ-ի արդյունավետ համագործակցության խոսուն ապացույցներն են «Առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում լավագույն թողարկող բանկ 2010» և «2012» մրցանակները, հատկապես եթե հաշվի առնենք, որ սրանք ՄՖԿ-ի առաջին խրախուսական մրցանակներն են՝ շնորհված Կովկասյան տարածաշրջանում գործող բանկի:



Գերմանական ներդրումների և զարգացման ընկերություն (DEG)

DEG-ի հետ համագործակցությունն սկսվեց 2009թ.՝ այս կազմակերպության և FMO-ի հետ համատեղ վարկային գծի պայմանագրի կնքմամբ: Հետագայում համագործակցությունը վերածվեց ռազմավարական գործընկերության, երբ 2012թ. ստորագրվեց 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր: Վարկը տրամադրվել է 8 տարի ժամկետով և նախատեսված է Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման համար: Այս համագործակցությունն ավելի քան համահունչ է բանկի ռազմավարությանը, համաձայն որին փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորումը վարկային քաղաքականության առաջնային ուղղություններից է: 2013թ. DEG-ի հետ համագործակցության շրջանակներում բանկին տրամադրված վարկային գծերի ծավալը հասավ 35 մլն ԱՄՆ դոլարի:



Պրոպարկո

2013թ. «Պրոպարկո» ֆրանսիական զարգացման գործակալությունը բանկի հետ կնքեց 15 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որն ազդարարեց համագործակցության սկիզբը՝ դառնալով Պրոպարկոյի առաջին ներդրումը Հայաստանում և երկրորդը՝ Հարավային Կովկասում: Վարկը կբացի գյուղատնտեսության և փոքր ու միջին վերամշակող ձեռնարկությունների ֆինանսավորման նոր երկարաժամկետ հնարավորություններ՝ նպաստելով տնտեսության զարգացմանը և աշխատաշուկայի ընդլայնմանը:



«Փրոփերթի Դիվելոպմենթ Զամփնի» ՓԲԸ (Պրոդեկո)

«Պրոդեկո» ընկերությունն զբաղվում է անշարժ գույքի մեջ ներդրումներով, ինչպես նաև տրամադրում է շինարարական աշխատանքների կառավարման և վարման ծառայություններ: Մասնավորապես, ընկերության՝ շենքի վերակառուցման և բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի կառուցման նախագծի շրջանակներում Ամերիաբանկը ռազմավարական ներդրողներից՝ ՄՖԿ-ից և DEG-ից ներգրավել է 18 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում:



Սիթիբանկ

Սիթիբանկի հետ Ամերիաբանկը համագործակցում է մի շարք համաձայնագրերի շրջանակներում: Մասնավորապես, կնքվել են ընթացիկ դրամական հոսքերի կառավարման և առևտրի ֆինանսավորման համար նախատեսված վարկային գծերի պայմանագրեր: 2010թ. համագործակցությունն ընդլայնվեց, և կնքվեց Առևտրի ֆինանսավորման կանխավճարների փոխհատուցման շարունակական համաձայնագիրը, որի շրջանակներում բանկին տրամադրվեց 4 մլն ԱՄՆ դոլար առևտրի ֆինանսավորման համար:



Առևտրի և զարգացման սևծովյան բանկ

2013թ. կնքվել է մանդատային համաձայնագիր՝ 6 տարի ժամկետով, որի շրջանակներում Ամերիաբանկին տրամադրվել է 10 մլն ԱՄՆ դոլարի վարկային գիծ՝ նախատեսված փոքր և միջին ձեռնարկատիրության վարկավարման համար:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ



> Առաքելությունը և փիլիսոփայությունը

«Ամերիա» ընկերությունների խմբի առաքելությունը կայանում է հետևյալում.

- Լինել առաջատար և որպես երկարաժամկետ և դինամիկ տնտեսական զարգացման միտված ֆինանսախորհրդատվական խումբ խթանել Հայաստանի և տարածաշրջանի զարգացումը
- Լինել հաճախորդին ուղղված վստահելի գործընկեր, տրամադրել կոմերցիոն բանկային ծառայությունների ամբողջական փաթեթ
- Ներդնել ֆինանսախորհրդատվական ծառայությունների ոլորտի, այդ թվում՝ բիզնես գործընթացների և տեխնոլոգիաների վերջին նորամուծությունները
- Ստեղծել բարձր որակավորում ունեցող, նպատակասլաց և մոտիվացված աշխատակիցներից բաղկացած «Երազանքի թիմ»

Մշտապես ինքնակատարելագործվելով՝ մենք ձգտում ենք փոխանցել մեր փորձը, գիտելիքը, ձեռքբերումները մեր հաճախորդներին, գործընկերներին, աշխատակիցներին՝ նպաստելով նրանց աճին ու զարգացմանը: Այս հարցում մենք հետևողական ենք և սկզբունքային գիտակցելով, որ իրական առաջնորդի պատասխանատվությունն անհամեմատ ավելի մեծ է:

Հաճախորդների հետ փոխհարաբերությունների առավելագույն թափանցիկությունն ապահովելու համար մենք որդեգրել ենք հետևյալ սկզբունքները.

- Համակողմանի մոտեցում
- Անհատական լուծումներ
- Վստահություն և հուսալիություն
- Սպասարկման բարձր որակ

Հետևելով նորարարության և առաջնորդության սկզբունքներին՝ մենք բոլոր շահագրգիռ կողմերին ներկայացնում ենք համաշխարհային միտումները՝ ստեղծելով որակի բարելավման, նպատակների իրագործման, ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային շուկաներ դուրս գալու նորանոր հնարավորություններ:

«Ամերիա» ընկերությունների խումբը համախմբում է փորձառու, նպատակասլաց և հմուտ մասնագետների մեկ միասնական Երազանքի թիմում: Մենք մեր համարձակ և տաղանդավոր անձնակազմի համար ստեղծում ենք նորարարության, զարգացման և դինամիկ աճի պայմաններ՝ դրանով իսկ նորանոր հեռանկարներ բացելով նրանց ու մեր ընկերության առջև:



Տիգրան Զրբաշյան, զարգացման գծով տնօրեն

Յուրաքանչյուրն ունի ազատության իր պատկերացումը՝ կախված մարդու տեսակից, մտահորիզոնից, սոցիալական դիրքից, տարիքից: Ամենամեծ ձեռքբերումն այն է, երբ կարողանում ես իրագործել անձնական ազատությունը: Ցավոք, այդ զգացումն անցողիկ է, և մարդ կրկին ընկնում է փնտրտուքի մեջ: Լեռնագլուցն ազատ է այնքան ժամանակ, քանի դեռ մագլցում է սարն ի վեր, քանի դեռ չի մտածում նոր, էլ ավելի բարձր գագաթներ հաղթահարելու մասին: Թեև սա այլաբանություն է, բայց այս զգացումն ինձ քաջածանոթ է: Երիտասարդ տարիքում աշխատում էի հորեղբորս մոտ որպես երկրաբանի օգնական, իսկ իրականում իմ պարտականությունները կայանում էին նրանց իրերը կրելու մեջ: չենց այդ ժամանակ լեռներն ինձ համար դարձան ազատության խորհրդանիշ:

> Մեր արժեքները

Հաճախորդների վստահություն և բավարարվածություն

Ինչպես անհնար է պատկերացնել լավ թատրոնն առանց հանդիսատեսի, լավ վեպն առանց ընթերցողի, ֆուտբոլային ակումբն առանց ֆուտբոլասերի, այնպես էլ մեզ համար ուղղվածությունը դեպի հաճախորդները և նրանց բավարարվածության ապահովումը հանդիսանում են այն երկու գլխավոր արժեքները, որոնց վրա կառուցված է մեր ողջ բիզնեսը:

Սպասարկման բարձր որակի, վստահության և թափանցիկության ապահովման նպատակով մենք դեռևս 2009թ. ներդրեցինք ISO 9001:2008 որակի կառավարման համակարգ, որի համապատասխանությունը միջազգային չափանիշներին ամեն տարի վերահաստատվում է TÜV Rheinland ընկերության կողմից:

Երազանքի թիմ՝ միասնականություն, ընդհանուր նպատակներ և բարձր պրոֆեսիոնալիզմ

Մեր թիմի յուրաքանչյուր անդամ մի պրոֆեսիոնալ է, որը ձգտում է աշխատել վառ անհատականության տեր մարդկանցից կազմված թիմում, մի թիմում, ուր բոլոր խնդիրները լուծվում են միասնաբար, և

միասնաբար են հաղթահարվում բոլոր խոչընդոտները, ստեղծվում է մի նոր աշխարհ, փոխհարաբերությունների նոր մշակույթ, նոր գործարար մթնոլորտ, մի թիմում, որի բոլոր անդամները հպարտ են իրենց ձեռքբերումներով:

Բրենդ

Ա տառը մեր բրենդի անվանման սկզբնամասում և վերջնամասում խորհրդանշում է բարեհաջող մեկնարկ և հաղթական ավարտ, առաջնորդության և վճռականության գաղափարը, որը խորհրդանշվում է նաև դեպի վեր ուղղված սլաքով:

Շնորհիվ մեր պրոֆեսիոնալ անձնակազմի, բաժնետերերի և գործընկերների տքնաջան և ստեղծագործ աշխատանքի՝ «Ամերիա» բրենդը կարճ ժամանակահատվածում ձեռք բերեց մեծ ճանաչում և վստահություն՝ մարմնավորելով նորարարությունը և առաջնորդությունը:

«Ամերիա» խումբը և հասարակությունը

Մեր խորին համոզմամբ՝ յուրաքանչյուր ոք կարող է և պետք է փոխի աշխարհը դեպի լավը: Մենք վստահ ենք, որ մեր ձեռքբերումները կարող են ծառայել և

ծառայում են խթան՝ հասարակությունում դրական տեղաշարժի համար: Այս տեսանկյունից «Ամերիա» ընկերությունների խումբն իր ավանդն է ներդրում Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման գործում:

Նորարարություն և փորձ

Մենք ստեղծում ենք ֆինանսական գործունեության մշակույթ և ավանդույթներ՝ շարունակական վերլուծության, տեղական և միջազգային շուկաներում առօրյա փորձի կուտակման և արդյունավետ կիրառման միջոցով: Մենք առաջինը Հայաստանում ներդրեցինք մի շարք նոր պրոդուկտներ՝ ստեղծելով նոր ուղղությունների և հաճախորդների համար նոր լուծումների զարգացման նախադեպ:

Առաջնորդություն

Մեզ համար առաջնորդությունը սոսկ ֆինանսական ցուցանիշ չէ, այլև նորարարության ոգի, հայրենական ֆինանսական շուկան զարգացնելու կարողություն և կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն՝ ինչպես անձնակազմի, հաճախորդների և գործընկերների, այնպես էլ ողջ հասարակության առջև:

> Ռազմավարություն

Հատկանիշները, որոնք Բանկն առաջնահերթ է համարում իր աշխատանքում.

- Սպասարկման որակ
- Ուղղվածություն դեպի հաճախորդը
- Հավասարակշռված ֆինանսական, իրավական, կադրային և սոցիալական քաղաքականություն
- Բիզնես-էթիկայի սկզբունքներ
- Բարձր պրոֆեսիոնալիզմ
- Թիմային ոգի
- Տեղեկատվական թափանցիկություն
- Իրողության ընկալում և առկա

հնարավորությունները ճիշտ օգտագործելու ունակություն

Ելնելով համաշխարհային, տարածաշրջանային և տեղական շուկաների՝ փորձագիտական գնահատման և հետազոտության վրա հիմնված ընկալումից՝ «Ամերիա» ընկերությունների խումբը ձգտում է պահպանել հավասարակշռությունը բոլոր շահագրգիռ կողմերի՝ հաճախորդների, բաժնետերերի, անձնակազմի և գործընկերների շահերի միջև: Գաղտնիք չէ, որ մինչև 2010թ. Բանկն ուներ

կորպորատիվ-ներդրումային ուղղվածություն, սակայն 2010թ. սկզբին մենք վերանայեցինք մեր ռազմավարությունը՝ փոխելով ուղղվածությունը կորպորատիվ և ներդրումային բանկային գործունեությունից դեպի ունիվերսալ բանկային հաստատություն՝ հասարակության ավելի լայն խավերի համար: Իրական ունիվերսալության հասնելը բանկի 2014-2017թթ. հիմնական նպատակն է:

Բանկն սկսել է զարկ տալ մանրածախ բանկային գործունեությանը՝ ընդլայնելով համագործակցությունը նաև փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների հետ: Շնորհիվ եզակի մրցակցային առավելությունների և բարձր պրոֆեսիոնալիզմի՝ Ամերիաբանկը հաջողությամբ իրականացնում է նոր ծրագրեր և իր համար բացում գործունեության նոր ուղղություններ:

Ամերիաբանկի՝ 2014-2017թթ. զարգացման ռազմավարական ծրագրով սահմանվել են հետևյալ առաջնային ուղղությունները.

- Դառնալ առաջատար սպասարկման որակով

• Դառնալ ավելի մոտ և հասանելի բոլոր հաճախորդների համար՝ օգտագործելով ի թիվս այլոց նոր ենթակառուցվածքային լուծումներ

• Սպառողների համար դառնալ համար օրենիք

- Մշակել և ներդնել նոր ֆինանսական լուծումներ, բանկային տեխնոլոգիաներ, նորարարական պրոդուկտներ բանկի բոլոր հաճախորդների համար

• Դառնալ լավագույն գործատուն Հայաստանում

- Դուրս գալ տարածաշրջանային շուկաներ

Ֆինանսական առումով առաջնահերթ խնդիրները՝

- Գործունեության կայունության և որակի ապահովում
- Տեղական շուկայում միջազգային մակարդակի բանկ դառնալը
- Շահութաբերության մրցակցային մակարդակի ապահովում եկամտի և ծախսերի արդյունավետ կառավարման միջոցով:

> Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

«Առողջ մարմնում առողջ ոգի» արտահայտությունն արդիական է անգամ տնտեսական ոլորտում: Մի երկրի ֆինանսական հատվածի առողջությունը կախված է նաև առողջ հասարակությունից: Իսկ առողջ հասարակություն ունենալու համար հարկավոր է աջակցել սոցիալապես խոցելի խավերին: Սա է պատճառը, որ բոլոր զարգացած և առողջ հասարակություններում գոյություն ունի «կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն» հասկացությունը, որն «Ամերիա» խմբի համար ևս հանդիսանում է գործունեության կարևոր

բաղադրիչ: Մենք համոզված ենք, որ բացի բիզնեսի զարգացումից և աշխատատեղերի ստեղծումից, յուրաքանչյուր ընկերություն պետք է ընդունի և կրի որոշակի սոցիալական պատասխանատվություն՝ նպաստելով այն տնտեսության և հասարակության կայուն աճին և զարգացմանը, ուր աշխատում է տվյալ կազմակերպությունը:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականության շրջանակներում Ամերիաբանկը աջակցում է Հայաստանի մշակութային ժառանգության վերականգն-

մանը և հասարակության առավել խոցելի խավերին: 2013թ. կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի շրջանակներում Ամերիաբանկի իրականացրած առավել նշանակալի միջոցառումները ներկայացված են ստորև:

Աջակցություն քաղցկեղով և արյան հիվանդություններով տառապող երեխաներին
Երբ լավ գործը չի սահմանափակվում մեկ օրինակով, այլ դառնում է ավանդույթ, դա

հպարտանալու էլ ավելի մեծ առիթ է: Հենց այդպիսի բարի ավանդույթ է «Ամերիա» խմբի համար ամանորյա բարեգործական աճուրդի անցկացումը, որից ստացված ողջ հասույթն ուղղվում է երեխաների բուժմանը: 2013թ. դեկտեմբերի 6-ին «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում կայացավ 4-րդ բարեգործական աճուրդը, որն այս տարի կրում էր «Խաղողը կյանք է» խորագիրը: Աճուրդի ողջ հասույթն ուղղվեց «Օգնեմ», «Նվիրիր կյանք» և «Երեխաներ առանց ցավի» հիմնադրամներում գրանցված՝ պատանեկան իդիոպաթիկ արթրիթ, քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող երեխաների բուժմանը: Աճուրդի հասույթը կազմեց 27,100,000 ՀՀ դրամ, ևս 3,473,000 ՀՀ դրամ հանգանակվեց անհատական նվիրատվությունների շնորհիվ: Ընդհանուր հասույթը կազմեց 30,573,000 ՀՀ դրամ, որը կրկնապատկվեց «Ամերիա» խմբի կողմից՝ կազմելով 61,146,000 ՀՀ դրամ: Նախորդ տարիներին հանգանակվել էր 35 մլն ՀՀ դրամ (2012), 19 մլն ՀՀ դրամ (2011) և 21 մլն ՀՀ դրամ (2010), որոնք բոլորն էլ կրկնապատկվել էին Ամերիա խմբի կողմից: Բոլոր նրանք, ովքեր ցանկանում են օգնել երեխաներն, կարող են փոխանել իրենց նվիրատվությունը Ամերիաբանկում բացված 15700 36910764400 բարեգործական հաշվին:

Ֆինանսական աջակցություն որը և սոցիալապես անապահով երեխաներին

Ամերիաբանկի մեկ այլ բարի ավանդույթ է մանկատների և սոցիալապես անապահով երեխաների պանսիոնատների հետ համագործակցությունը, որի շրջանակներում մենք օգնում ենք երեխաներին ստանալ օթևան և կրթություն: Բանկը երեխաներին նվիրում է դպրոցական պարագաներ, խաղալիքներ, գրքեր, նկարչական պարագաներ, որոնք այդքան կարևոր են նրանց աճի և ճիշտ զարգացման համար: Բանկը սերտորեն համագործակցում է «ՍՈՍ» մանկական գյուղեր» և «Հայաստանի

մանուկներ» հիմնադրամ» հասարակական կազմակերպությունների հետ: 2013թ. սեպտեմբերին «Ամերիա» խմբի ֆինանսավորմամբ Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի թիվ 2 դպրոցում բացվեց նոր ուսումնական կաբինետ, որը համապատասխանում է ժամանակակից կրթական համակարգի բոլոր պահանջներին: Ընդարձակ և լուսավոր դասասենյակը նախատեսված է 30 աշակերտի համար և հագեցած է ժամանակակից սարքավորումներով, հատուկ շարժական կահույքով, որը շատ հարմար է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանք կատարելու համար, էլեկտրոնային գրատախտակով, MicroWorlds Logo համակարգով աշխատող համակարգիչներով: Դա ունիվերսալ ծրագիր է, որը մեկտեղում է գրաֆիկան, անիմացիան և ծրագրավորումը: Կաբինետն ստեղծվել է «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի հետ համատեղ՝ նպատակ ունենալով զարգացնել երեխաների ստեղծագործական մտածողությունը, նրանց հնարավորությունը ընձեռել օգտվելու համակարգիչներից և ժամանակակից տեխնոլոգիաներից, մասնակցելու քննարկումների, ընթերցանության և խաղերի:

Հայաստան-Սվիտուք

Լոս Անջելեսում «Ամերիա» խմբի ներկայացուցչությունը՝ «Ամերիա Գրուպ Ինք»-ը, Հայամերիկյան առևտրի պալատին (ՀԱԱՊ) իր անդամակցությունը նշեց՝ ներկա գտնվելով հայ-ամերիկյան բիզնես համայնքի՝ տարվա կարևորագույն իրադարձությանը՝ ՀԱԱՊ 13-րդ տարեկան մրցանակաբաշխությանը: «Ամերիա Գրուպ Ինք»-ը նաև հանդես էր գալիս որպես մրցանակաբաշխության հովանավոր: Այս տարի մրցանակաբաշխությունը նվիրված էր ամերիկահայ 3 ականավոր գործարարների և հասարակական գործիչների և ուներ ավելի քան 400 մասնակից: Միջոցառման հասույթի մի մասն ուղղվեց հայ ուսանողներին կրթաթոշակներ տրամադրելուն՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ ԱՄՆ-ում ուսանելու համար:

«Ամերիա Գրուպ Ինք»-ը ևս հետևում է խմբի ավանդույթին. կորպորատիվ ամանորյա ընդունելության փոխարեն ընկերությունը 6,500 ԱՄՆ դոլար փոխանցեց Ոսկրածուծի դոնորների հայկական հիմնադրամին՝ օգնելու համար գտնել դոնորներ և փրկել հայ մանուկների կյանքը ողջ աշխարհում:

«Հայաստան» համահայկական հիմնադրամ

Այս տարի ևս «Ամերիա» խումբը մասնակցեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի տարեկան հեռուստամարաթոնին՝ նվիրաբերելով 5,000,000 ՀՀ դրամ:

Մարզերի զարգացում

Բանկն աջակցում է մի շարք զարգացման ծրագրերի ՀՀ մարզերում, հատկապես այն մարզերում, որտեղ ունի մասնաճյուղեր: Մասնավորապես, բանկն աջակցություն ցուցաբերեց Քաջարանի բարեգործական հիմնադրամին՝ քաղաքին նվիրելով Նստարաններ, «Երևան» հիմնադրամին, «Շենգավիթ» հիմնադրամին, «Էրվեզ» հիմնադրամին, «Էրեբունի-Երևան» մշակութային հիմնադրամին և Դիլիջանի «Հուսո կամուրջ» հասարակական կազմակերպությանը: 2013թ. «Ամերիա» խմբի աջակցությամբ լույս տեսան «Նշոտված Հայաստան» և Գորան Գունների «Հայոց Ցեղասպանությունն շվեդների աչքերով» գրքերը, որոնց շնորհանդեսը տեղի ունեցավ ապրիլի 23-ին՝ Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան ընդառաջ:

Սպորտ

Սպորտը ևս առողջ հասարակության կարևոր տարրերից է: Հայաստանում սպորտի զարգացման և առողջ ապրելակերպի խրախուսման նպատակով բանկն արդեն մի քանի տարի է, ինչ հանդես է գալիս որպես «Ամերիայի գավաթ» թենիսի միջազգային մրցաշարի հովանավոր: Այս տարի միջազգային կայացավ հունիս ամսին:



ԲԱՆԿԻ

ՂԵԿԱԿԱՐՈՒՄ
ԵՎ ՌԻՍԿԵՐԻ
ԿԱՌԱԿԱՐՈՒՄ

> Ամերիաբանկի բաժնետերերը

Ներկայումս Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 25.4 մլրդ ՀՀ դրամ (62.7 մլն ԱՄՆ դոլար): Յուրաքանչյուրը 320 000 ՀՀ դրամ անվանական արժեք ունեցող՝ բանկի սովորական անվանական բաժնետոմսերի 100%-ի սեփականատերն է «Ամերիա Գրուպ Սի Ուայ Լիմիթեդ» ընկերությունը:

> Ամերիաբանկի ղեկավարությունը

Բաժնետերերի ընդհանուր ժողով
Բանկի կառավարման գերագույն մարմինն է, որին մասնակցելու իրավունք ունեն Բանկի բոլոր բաժնետերերը/նրանց լիազորված ներկայացուցիչները, բաժնետոմսերի անվանատերերը, Տնօրենների խորհրդի անդամները, Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրենը, Տնօրինության անդամները (խորհրդակցական ձայնի իրավունքով), Ներքին աուդիտի ծառայության ղեկավարը, արտաքին աուդիտորները և Կենտրոնական բանկի ներկայացուցիչները (որպես դիտորդ): Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունների շրջանակն ընդգրկում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. բանկի կանոնադրության հաստատում, բանկի վերակազմավորում և Տնօրենների խորհրդի նշանակում, տարեկան ֆինանսական հաշվետվությունների, այդ թվում՝ եկամտի և ծախսերի մասին հաշվետվության հաստատում, շահաբաժինների և դրանց չափի հաստատում: Բաժնետերերի հերթական ընդհանուր ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո չորս ամսվա ընթացքում: Տարեկան ժողովից բացի մնացած բոլոր ժողովները համարվում են արտահերթ:

Տնօրենների խորհուրդ Անդրեյ Մկրտչյան,

Տնօրենների խորհրդի նախագահ

Անդրեյ Մկրտչյանը գլխավորում է Ամերիաբանկի Տնօրենների խորհուրդը 2013թ. նոյեմբերի 27-ից: Նախքան դա՝ Բանկի հիմնադրման օրից, հանդիսացել էր Տնօրենների խորհրդի անդամ: Միաժամանակ նաև «Ամերիա» ընկերությունների խմբի գործադիր տնօրենն է: Ա. Մկրտչյանն ունի խորհրդատվության և ներդրումային բանկային գործունեության ոլորտում ավելի քան 18 տարվա փորձ, ի թիվս այլոց, աշխատել է Գերմանիայի տեխնիկա-

կան համագործակցության կազմակերպությունում (GTZ), ԵՄ ԱՊՀ պետություններին տեխնիկական աջակցության ծրագրում (EU TACIS) և Բիզնեսի աջակցման հայկական կենտրոնում, որը ստեղծվել էր Հայաստանում ներդրումային խորհրդատվության տրամադրման և բիզնեսի աջակցության նպատակով: Ա. Մկրտչյանն «Ամերիա» խորհրդատվական ընկերությունում է վերջինիս սկզբնավորման օրից՝ հանդիսանալով ընկերության հիմնադիր և գործադիր տնօրեն: Նաև հանդիսանում է Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի խորհրդի և Ձեռնարկատիրության աջակցման խորհրդի անդամ: Երկու խորհուրդների նախագահն է ՀՀ վարչապետը: Ա. Մկրտչյանը նաև Դիլիջանի միջազգային դպրոցի խորհրդի անդամ է: Ավարտել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը: Հետագայում ուսանել է ԱՄՆ Կոլորադո նահանգի համալսարանում և Լոնդոնի Քինգսթոնի համալսարանի բիզնես-դպրոցում:

Ռուբեն Վարդանյան, Տնօրենների խորհրդի անդամ

Հանդիսանում է ռուսական Սբերբանկի նախագահ-վարչության նախագահի խորհրդական: Նախքան 2012 թ. հունվարին Սբերբանկի հետ միավորումը զբաղեցնում էր «Տրոյկա Դիալոգ» խմբի տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնը: Ռ. Վարդանյանն աշխատում էր Տրոյկա Դիալոգում հիմնադրման պահից: 1992թ. գլխավորելով ընկերությունը՝ նա իրավամբ համարվում է Ռուսաստանում կապիտալի շուկայի կայացման հիմնական դերակատարներից մեկը: Հանդիսանում է Ռուսաստանի արդյունաբերողների և ձեռներեցների միության վարչության անդամ, միության Կորպորատիվ կառավարման կոմիտեի ղեկավար, անդամակցում է միությանն առընթեր՝ Կորպորատիվ

էթիկայի միավորված հանձնաժողովում որպես արբիտր:
Ամերիաբանկի հիմնադրման օրից մինչև 2013թ. նոյեմբերի 27-ը հանդիսացել է Բանկի Տնօրենների խորհրդի նախագահ: Ներկայումս հանդիսանում է Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի անդամ: Նաև մի շարք այլ ընկերությունների, այդ թվում՝ «ՌուսԱպեցՍտալ» ՓԲԸ, «ԱվտոՎԱԶ» ԲԲԸ, «ԿԱՄԱԶ» ԲԲԸ, «ԱԿ ԲԱՐՍ ԲԱՆԿ» ԲԲԸ, «ՆՈՎԱՏԵԿ» ԲԲԸ, «Միավորված ավտո և բաղադրիչային տեխնոլոգիաներ» ԲԲԸ և Ռուսաստանի տնտեսագիտական դպրոցի խորհրդի անդամ է: 2002-2004թթ. զբաղեցրել է «Ռոսգոսստրախ» ԲԲԸ գլխավոր տնօրենի, իսկ 2004-2005թթ.՝ տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնը: Մոսկվայի «ՍԿՈԼԿՈՎՈ» կառավարման դպրոցի գործընկեր-հիմնադիր է և համակարգող խորհրդի անդամ: ՌԴ նախագահին առընթեր՝ առաջնային նշանակության ազգային ծրագրերի և ժողովրդագրական քաղաքականության իրականացման խորհրդի փորձագիտական խորհրդի, ՌԴ կառավարությանն առընթեր՝ մրցունակության և ձեռնարկատիրության խորհրդի, Հարավային Կորեայի նախագահին առընթեր՝ կրթության հարցերով խորհրդատվական խորհրդի, Գորչակովի անվան հանրային դիվանագիտության աջակցության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, Գուանհուայի կառավարման դպրոցի (Չինաստան) միջազգային խորհրդատվական խորհրդի և ԷՖ Դի Սի բիզնես-դպրոցի (Բրազիլիա) միջազգային խորհրդատվական խորհրդի, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի, Միջազգային քրիստոնեական համալսարանի (Ճապոնիա) Առաջնորդության գլոբալ հետազոտությունների միջազգային խորհրդատվական խորհրդի, ինչպես նաև Հայ Առաքելական

Եկեղեցու Գերագույն հոգևոր խորհրդի անդամ է: Ռ. Վարդանյանը Ռուսաստանում ամերիկյան առևտրի պալատի կողմից ճանաչվել է տարվա լավագույն գործարար Ռուսաստանում բիզնեսի զարգացման գործում ունեցած նշանակալից ավանդի և պրոֆեսիոնալ էթիկայի բարձր նորմերին հետևելու համար: Նաև հանդիսանում է Ռոսբիզնեսընսայթինգի «Տարվա անձ 2003» մրցանակի դափնեկիր «Տարվա ներդրումային բանկիր անվանակարգում»: 2001թ. ներառվել էր Fortune ամսագրի «Նոր սերնդի 25 ծագող աստղ» ցանկում, մտնում է Ռուսաստանի Մենեջերների ազգային ասոցիացիայի բիզնես-առաջնորդների առաջատար եռյակի մեջ, հանդիսանում է Ernst & Young-ի «Տարվա ձեռներեց 2004» մրցույթի ռուսաստանյան փուլի հաղթող, ճանաչվել է 2004թ. լավագույն ներդրումային բանկիր Ռուսաստանի ֆինոբանկի շուկայի մասնակիցների ազգային ասոցիացիայի մրցույթում, հանդիսանում է Ռուսաստանի մենեջերների ասոցիացիայի և «Կոմերսանտ» հրատարակչության «Արիստոս» հեղինակավոր գործարար մրցանակի դափնեկիր «Ռուսաստանի բիզնես-ոլորտի զարգացման գործում նշանակալի ավանդ» անվանակարգում (2006թ.):

2008թ. արժանացել է «Ֆինանս» ամսագրի մրցանակին ֆինանսական շուկայում վայելած հեղինակության համար: Ռ. Վարդանյանը գերազանցությամբ ավարտել է Մոսկվայի պետական համալսարանը, որից հետո գործնական պրակտիկա է անցել Թուրինի (Իտալիա) Banca CRT-ում, մասնակցել է Մերիլ Լինչի (Նյու-Յորք) կազմակերպած զարգացող շուկաների վերաբերյալ դասընթացների, ինչպես նաև Գործարար կառավարման եվրոպական ինստիտուտի (INSEAD) և Հարվարդի բիզնես-դպրոցի դասընթացներին:

Նուբար Աֆեյան, Տնօրենների խորհրդի անդամ
Ն. Աֆեյանը հանդիսանում է «Ֆլեգշիփ Վենչուր» ընկերության ղեկավար գործընկեր: Ընկերությունը զբաղվում է վենչուրային ներդրումներով սկսնակ բիզնեսում, գործունեության հիմնական ոլորտներն են առողջապահությունը և կայուն զարգացումը, իսկ համապատասխան ներդրումային պորտֆելը կազմում է ավելի քան 900 մլն ԱՄՆ դոլար: Նաև հանդիսանում է «Ֆլեգշիփ ՎենչուրԼաբզ»-ի նախագահ և գործադիր տնօրեն: «Ֆլեգշիփ ՎենչուրԼաբզ»-ը տեխնո-

լոգիական ընկերություն է, որը վերջին տասնամյակի ընթացքում հիմնադրել է 22 վենչուրային ձեռնարկություն: Որպես ավագ դասախոս դասավանդում է Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի Սլոունի դպրոցում («ձեռներեցություն» առարկա), նույն ինստիտուտում պաշտպանել է կենսատեխնիկական գիտությունների դոկտորի աստիճանը: Բազում գիտական հրապարակումների և արտոնագրերի հեղինակ է: Վերջին 20 տարվա ընթացքում մասնակցել է ավելի քան 20 գիտատեխնիկական հիմնարկությունների կայացմանը: «Փերսեփթիվ Բայոսիսթեմս» ընկերության (կենսաբանական սարքավորումների արտադրության ոլորտի առաջատար) հիմնադիր և գործադիր տնօրեն է: Ափլերա Քորփորեյշնի կողմից ընկերության ձեռքբերումից հետո Ն. Աֆեյանն զբաղեցրեց Ափլերայի ավագ փոխնախագահի և տնօրենի պաշտոնը: Ափլերայում իր աշխատանքի ընթացքում նախաձեռնել և վերահսկել է «Սելերա Ջենոմիքս» ընկերության ստեղծումը: Ն. Աֆեյանը հանդիսանում է մի շարք պետական և մասնավոր ընկերությունների խորհրդի անդամ, Ֆլեգշիփի ներդրումային պորտֆելի մաս կազմող «Աֆինոլա», «Բի Ջի Մեդիսին», «ԲԱՅՆԴ Բայոսայնսիզ», «Անսամբլ Դիսքավերի», «Նելիկոս Բայոսայնսիզ», «Ջոուլ Բայոթերապևտիքս», «Էլ Էս Նայն» և «Իլեվեն Բայոթերապևտիքս» ընկերությունների տնօրեն: Եղել է մի շարք խոշոր և հաջողակ վենչուրային ձեռնարկությունների հիմնադիր և տնօրեն, ինչպիսիք են «Քեմբենիքս Ֆարմայութիքսվազը», «Քոլոր Քինեթիքսը», «Անտիջենիքսը», «ԻՔՁԵԹ Սայնսիզը» և «Ադնեքսուս Թերապևտիքսը»: Արժանացել է Համաշխարհային տնտեսական համաժողովի «Տեխնոլոգիաների ոլորտի առաջամարտիկ 2012» մրցանակին «Ջոուլ Անլիմիթեդ» ընկերությունում արևային վառելիքի մշակման գործում բեկումնային հայտնագործության համար: Ներկայում նաև զբաղեցնում է Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի անդամի պաշտոնը՝ միաժամանակ հանդիսանալով Հարվարդի համալսարանի Ուիսսի ինստիտուտի արտահաստիքային գիտաշխատող, մի շարք կազմակերպությունների, այդ թվում Դեշպանդի տեխնոլոգիական նորարարությունների կենտրոնի և Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի Ուայթհեդի ինստիտուտի, ինչպես նաև Մոսկվայի «Սկոլկովո» կառավարման դպրոցի խորհրդա-

տվական կոմիտեների անդամ: «Հայաստան-2020» ծրագրի հիմնադիրներից մեկն էր և խորհրդի անդամ: Հանդիսանում է Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի և Դիլիջանի միջազգային դպրոցի խորհուրդների անդամ: Պարգևատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով:

Գոռ Նահապետյան, Տնօրենների խորհրդի անդամ

Ձեռներեց, մարդասեր, սոցիալական ձեռներեցության, մարդկային կապիտալի, ստեղծարար ոլորտների և այլընտրանքային կրթության բնագավառներում լայն հետաքրքրությունների տեր մարդ՝ Գոռ Նահապետյանը «Մուլտիմեդիա Արտ Թանգարանի» դիտորդ խորհրդի անդամ է, Ամերիաբանկի Տնօրենների խորհրդի անդամ և Մոսկվայի «ՍԿՈԼԿՈՎՈ» կառավարման դպրոցի շրջանավարտների հետ հարաբերությունների խորհրդի նախագահ, որի պաշտոնում պատասխանատու է շրջանավարտների միավորումների, ակումբների և գործարար համայնքների հետ համագործակցության համար: Գ. Նահապետյանը հիանալի ոգեշնչող հոշտոր է:

Գ. Նահապետյանն իր աշխատանքային ուղին սկսել է «Դիալոգ բանկում» 1992թ.: Մասնակցել է Մոսկվայի բորսայի առաջին սակարկություններին: 1993թ.՝ ընկերության հիմնադրման առաջին օրերից, սկսեց իր աշխատանքը «Տրոյկա Դիալոգ»-ում: Սկսելով աշխատել վաճառքի վարչությունում 1994թ. ստեղծում է գործառնական վարչությունը, որն էլ զլխավորում է ավելի ուշ: Հետագայում ղեկավարում էր հատուկ ծրագրերի մշակման բաժինը, որի հիման վրա ստեղծվեց «Տրոյկա Դիալոգ» ակտիվների կառավարման ընկերությունը, որի տնօրենի պաշտոնն էլ ստանձնեց 1996թ.: Անմիջական մասնակցություն է ունեցել «Տրոյկա Դիալոգ – Իլյա Մուրոմեց» և «Տրոյկա Դիալոգ – Դոբրինյա Նիկիտիչ» փայտտիրական ներդրումային հիմնադրամների, ինչպես նաև ԱՄՆ-ում առաջին բաց ներդրումային հիմնադրամի` Lexington Troika Dialog Russia Fund-ի ստեղծման գործում. վերջինս արտասահմանյան ներդրողներին հնարավորություն է ընձեռում միջոցներ ներդնել ռուսաստանյան արժեթղթերում: 2001–2003թթ. մասնակցել է ռուսաստանյան «Ռոսգոսստրայա» ապահովագրական ընկերության ձեռքբերման և վերակազմավորման

Նախագծին: Զբաղեցրել է «Ռոսգոսստրախ» ԲԲԸ փոխնախագահի պաշտոնը՝ ղեկավարելով աշխատակազմի և հովիհնգի մի շարք ստորաբաժանումների աշխատանքը: Ղեկավարում էր նաև ընկերության ռեբրենդինգի նախագիծը: Գ. Նահապետյանն անմիջական մասնակցություն է ունեցել Քաղաքային հիփոթեքային բանկի բացմանը Տրոյկա Դիալոգի և «Ռոսգոսստրախ» ԲԲԸ համատեղ նախագծի շրջանակներում:

Զբաղեցրել է «Սբերբանկ» կորպորատիվ-ներդրումային բանկի (մինչև 2012թ. հոկտեմբերը՝ Տրոյկա Դիալոգ) նախագահի աշխատակազմի ղեկավարի և ղեկավար տնօրենի պաշտոնը՝ վերահսկելով ռազմավարական զարգացման հարցերը, ինչպես նաև մի շարք ստորաբաժանումների՝ հասարակության հետ կապերի, անձնակազմի կառավարման, անվտանգության, մարքեթինգի վարչությունների, կոնսակտային և տեղեկատվական կենտրոնի և ներքին հաղորդակցման վարչության աշխատանքը:

2013թ. հունվարից օգոստոս զբաղեցրել է Սբերբանկի փոխնախագահի պաշտոնը, որի շրջանակներում վերահսկում էր անձնակազմի կառավարման վարչության աշխատանքը՝ համակարգելով, մասնավորապես, կորպորատիվ մշակույթի ստեղծման և զարգացման հարցերը, խրախուսման համակարգի բարելավման, կորպորատիվ համալսարանի ստեղծման, արդյունավետ հաղորդակցման ներկազմակերպական համակարգի ձևավորման հարցերը:

2006 թ-ից Մոսկվայի «ՍԿՈԼԿՈՎՈ» կառավարման դպրոցի Համակարգող խորհրդի անդամ է՝ միաժամանակ հանդիսանալով գլխավոր հիմնադրի գործընկերներից մեկը: 2009-2010թթ. զբաղեցնում էր դպրոցի գործառնական տնօրենի պաշտոնը:

Գ. Նահապետյանն ավարտել է ԵՊՀ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը 1991թ.: 1991-1992թթ. ուսանում էր գործարար կառավարում Հայաստանի ամերիկյան համալսարանում, 2008թ. մասնակցել է INSEAD բիզնես-դպրոցի դասընթացին:

Ռոբերտ Ֆոն Ռեկովսկի, *Տնօրենների խորհրդի անկախ անդամ*

Համաշխարհային ակտիվների կառավարման ավելի քան 23 տարվա փորձառությամբ՝ Ռոբերտ Ֆոն Ռեկովսկին հանդիսանում է «Ֆիդելիթի Ինվեսթմենթս» ընկերության

զարգացող շուկաների ռազմավարությունների բաժնի փոխնախագահը և ընկերության պորտֆելի կառավարիչ: Ներկայումս նա կառավարում է ամերիկյան և կանադական ներդրողների մի շարք ինստիտուցիոնալ և մանրածախ ներդրումային հիմնադրամներ զարգացող շուկաներում:

«Ֆիդելիթի Ինվեսթմենթս» ընկերություն ընդունվել է 1989թ-ին (ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումների բաժին): 1995թ-ին զարգացող շուկաների պարտքային գործարքների կառավարման խմբի հետ տեղափոխվել է բարձր եկամտաբերությամբ ներդրումների բաժին՝ որպես սուվերեն պարտքային գործառնությունների վերլուծաբան: 1996թ-ից մինչև 1998թ-ի կեսերը ընկերության լոնդոնյան գրասենյակից դուրս զբաղվել է եվրոպական շուկայում կապիտալ ներդրումների ուսումնասիրությամբ՝ միաժամանակ շարունակելով զբաղեցնել վերլուծաբանի իր պաշտոնը: 1998թ-ի կեսերից մինչև 2002թ-ը զբաղվել է թե՛ զարգացող, թե՛ համաեվրոպական շուկաներում կապիտալ ներդրումների ուսումնասիրությամբ և վերլուծությամբ՝ միաժամանակ զբաղեցնելով լոնդոնյան գրասենյակի՝ զարգացող շուկաների բաժնի ղեկավարի պաշտոնը: 2002-2004թթ. եղել է զարգացող շուկաների հիմնադրամների՝ Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի տարածաշրջանների գծով պատասխանատու ավագ կառավարիչ: 2004թ-ին տեղափոխվել է Բոստոն, ուր ստանձնել է համաշխարհային զարգացող շուկաներում կապիտալ ներդրումային հիմնադրամների կառավարչի պաշտոնը (սշված հիմնադրամների ընդհանուր ծավալը ներկայումս կազմում է 4.0 մլրդ ԱՄՆ դոլար): Ռ. Ֆոն Ռեկովսկին ավարտել է Նյու-Յորքի Նահանգային համալսարանի Օլբանիում (SUNY)՝ ստանալով բակալավրի կոչում, ինչպես նաև Հյուսիսարևելյան համալսարանը՝ ստանալով մագիստրոսի կոչում: Ունի նաև ֆինանսների մագիստրոսի աստիճան, որն ստացել է Բրենդայզ համալսարանում: Հանդիսանում է Russian Investment Review ամսագրի՝ 2003թ-ի հունիս-հոկտեմբերի համարում տպագրված Investor's Outlook Նյուֆի հեղինակը: 2001, 2002, 2003 թվականներին հաղթող է ճանաչվել Institutional Investor ամսագրի Best of the Buyside (լավագույն գնորդ) անվանակարգում:

2012թ-ի հունիսից հանդիսանում է «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրենների խորհրդի անկախ անդամ: «Հայաստան 2020» նախագծի համակարգող խորհրդի անդամ էր: Նա նաև Բոստոնի արտաքին հարաբերությունների կոմիտեի, Բոստոնի տնտեսագիտական ակումբի (Boston Economic Club) և World Boston-ի անդամ է:

Տնօրինություն

Արտակ Հանեսյան, *Տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն*

Անդրանիկ Բարսեղյան, *Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար*
Արման Բարսեղյան, *Տնօրինության անդամ, Մանրածախ բանկային գործառնությունների գծով տնօրեն*

Առնո Մոսիկյան, *Ներդրումային բանկային գործառնությունների գծով տնօրեն*

Դավիթ Սարգսյան, *Իրավական գծով տնօրեն*

Գագիկ Սահակյան, *Տնօրինության անդամ, Կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն*

Գևորգ Թառումյան, *Տնօրինության անդամ, գլխավոր տնօրենի տեղակալ, ֆինանսական գծով տնօրեն*

Գոհար Խաչատրյան, *Տնօրինության անդամ, գլխավոր հաշվապահ*

Սամվել Աղաբաբյան, *Տնօրինության անդամ, Անվտանգության ծառայության ղեկավար*

Արթուր Բաբայան, *Տնօրինության անդամ, Առևտրային գործառնությունների գծով տնօրեն*

Տիգրան Զրբաշյան, *Տնօրինության անդամ, Զարգացման գծով տնօրեն*

Մշտական կոմիտեներ և հանձնաժողովներ

Վարկային կոմիտե (փոքր և մեծ) ներդրումային կոմիտե Ակտիվների և պասիվների կառավարման կոմիտե ՓԼ/ԱՖ դեմ պայքարի կոմիտե Գնումների կոմիտե

Հատուկ աշխատանքային խմբեր և քննարկումներ

Հաճախորդների ներգրավում Զարգացում Անձնակազմ Վարկային պորտֆելի որակ ներդրումային բանկային ծառայությունների զարգացում Անվտանգություն

> Կառավարման հիմնական սկզբունքները

Ամերիաբանկի կառավարման հիմնական սկզբունքն է ուղղվածությունը դեպի հաճախորդները, այսինքն՝ նրանց ընթացիկ և հետագա կարիքների բացահայտումը և բավարարումը՝ գերազանցելով նրանց սպասելիքը:

Մեր առօրյա գործունեության մեջ մենք ղեկավարվում ենք այն նույն սկզբունքներով, որոնց վրա կառուցված են ISO 9001:2008 չափանիշները:

• Ղեկավարությունն առաջնորդի դերում է՝ պատրաստակամ է և հետևողականորեն ձեռնամուխ է լինում ողջ համակարգի արդյունավետ գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

• Անձնակազմը ներգրավված է բոլոր գործընթացներում՝ Բանկի աշխատակիցները մասնակցում են ղեկավարման և որոշումների ընդունման գործընթացներին:

• Համակարգային մոտեցում ղեկավարմանը՝ բոլոր փոխկապակցված գործընթացները կառավարվում են որպես մեկ համակարգ՝ թույլ տալով իրագործել բոլոր նպատակներն առավել արդյունավետ կերպով:

• Համակարգի շարունակական թարմացում օրենսդրական փոփոխություններին, հաճախորդների բողոքներին և առաջարկություններին, ներքին գործընթացների զարգացմանը զուգընթաց:

• Տեղեկատվական բազայի ապահովում, ինչը թույլ է տալիս որոշումներ ընդունել փաստերի հիման վրա՝ հաշվի առնելով ինչպես օգուտը, այնպես էլ հնարավոր ռիսկերը:

• Գործընկերների և մատակարարների հետ փոխշահավետ հարաբերությունների պահպանում՝ երկու կողմերին տալով ավելի մեծ արժեք ստեղծելու հնարավորություն:

Ավելին, մենք ղեկավարվում ենք հորիզոնական փոխհարաբերությունների ներքին համակարգով, որը թույլ է տալիս ներքին շփումը դարձնել ավելի արդյունավետ և տարբեր պաշտոն զբաղեցնող աշխատակիցներին ներգրավել որոշումների կայացման գործընթացում:

Դեռևս 2009թ. ապրիլին գերմանական TÜV Rheinland ընկերության կողմից անցկացված որակի աուդիտի արդյունքում Բանկին շնորհվեց ISO 9001:2008 միջազգային չափանիշներին համապատասխանության


վկայական, որը Բանկի կառավարման համակարգի վստահելիության ապացույցն է: 2013թ. հերթական ստուգման ժամանակ ընկերությունը վերահաստատեց Բանկի համապատասխանությունը ISO 9001:2008 միջազգային չափանիշին: Բանկի բոլոր բիզնես գործընթացները բաժանվում են երեք խմբի.

• Հիմնական գործընթացներ, որոնք ուղղված են հաճախորդների կարիքների բավարարմանը ֆինանսական և այլ ծառայությունների մատուցման միջոցով

• Օժանդակ գործընթացներ, որոնք ուղղված են հիմնական գործընթացների արդյունավետության ապահովմանը

• Կառավարման գործընթացներ, որոնք ապահովում են զանազան համակարգերի աշխատանքը, ռազմավարական և մարտավարական որոշումների ընդունումը Կառավարման որակի բարձրացման գործիքներից է Բանկում ներդրված՝ հավասարակշռված ցուցանիշների համակարգը, որը թույլ է տալիս գործընթացները, ռազմավարական կառավարումը և կառավարման ողջ համակարգը ներկայացնել որոշակի չափելի ցուցանիշների միջոցով:

Բանկի կազմակերպական կառուցվածքը





Անդրանիկ Բարսեղյան, Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար

Ազատության պետք է հասնել: Պետք է պատրաստ լինել դրան: Երջանիկ պատահականությունը բաժին է հասնում դրան նախապատրաստված մարդկանց: Երբ մարդու հնարավորությունները համընկնում են նրա ցանկություններին, երբ նա հասնում է իր նպատակներին, այն ժամ նա իրեն ազատ է զգում: Ես՝ որպես ֆուտբոլի մեծ սիրահար, շատ հաճախ ունենում եմ այդ զգացումը, երբ գոլեր եմ խփում:

> Բանկի ղեկավարում և ռիսկերի կառավարում

Ամերիաբանկը կարևորում է կորպորատիվ կառավարման միջազգային չափանիշների պահպանումը, բարձր տեխնոլոգիաները և սպասարկման որակը: Իր գործունեության բոլոր ոլորտներում հստակ, չափելի և օբյեկտիվորեն գնահատելի միջավայր ստեղծելու նպատակով Բանկը դեռևս 2007թ-ից մշակել և ներդրել է ավելի քան 200 ներքին ընթացակարգ, հրահանգ և մեթոդական ցուցում: Ներքին ընթացակարգերի պատշաճ կատարումը վերահսկվում է ինչպես Ներքին աուդիտի ծառայության (որը հաշվետու է Տնօրենների խորհրդին), այնպես էլ արտաքին անկախ աուդիտորների կողմից:

2013թ. TÜV Rheinland ընկերությունը անցկացրեց ստուգում և վերահաստատեց Բանկի` ISO 9001:2008 միջազգային չափանիշներին համապատասխանության վկայականը, որը Բանկի բիզնես գործընթացների և որակի կառավարման համակարգի վստահելիության ապացույցն է: Ամերիաբանկը ձգտում է կորպորատիվ մշակույթի և թիմային ոգու շարունակական զարգացմանը` ուսուցման, կորպորատիվ միջոցառումների, Բանկի ընդհանուր նպատակների և առաքելության հետևողական իրագործման միջոցով: Շնորհիվ իր միասնական, հոգատար

և նվիրված թիմի` Բանկն ի զորու է հաղթահարել բոլոր դժվարությունները և իրագործել իր բոլոր կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակները: Ամերիաբանկի կորպորատիվ կառավարման երեք հիմնական սկզբունքներն են.

- Որոշումների ընդունման գործընթացի թափանցիկությունը և բաց տեղեկատվությունը
- Ներդրողների իրավունքների և շահերի պաշտպանությունը
- Մասնագիտական և էթիկական պատասխանատվությունը



Արմինե Ղազարյան, Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավար

Ազատությունը մարդուն տրվում է ի ծնե, դրանից է կախված պատասխանատու և ընտրության մեջ ազատ լինելու նրա ձգտումը: Այլ կերպ ասած՝ մարդ կամ ծնվում է ազատ, կամ ոչ: Սակայն բացարձակ ազատություն գոյություն չունի՝ բոլորս էլ աստիճանաբար ենք Երկիր մոլորակի վրա և կախված ենք բնության օրենքներից և երևույթներից: Ինձ համար ոգեշնչման աղբյուր միշտ եղել է Սոկրատեսի հայտնի խոսքը՝ «Ես գիտեմ այն, որ ոչինչ չգիտեմ», որն իր մեջ ամփոփում է ազատությունը ճանաչելու շարժիչ ուժը: Ազատության իմ խորհրդանիշը ճայն է: Եվ ինչպես ասել է ամենահայտնի և ազատատենչ ճայր՝ Ջոնաթան Լիվինգսթոունը՝ «Դու ունես ազատություն լինելու ինչպիսին կաս այժմ և այստեղ, և ոչինչ չի կարող խանգարել քեզ»:

> Մարդկային ռեսուրսների կառավարում

Յուրաքանչյուր ընկերության հաջողության գրավականն աշխատակիցների լավ թիմն է: Այստեղ մեծ է մարդկային ռեսուրսների գծով մենեջերի դերը, ով կարող է հավաքել ճիշտ մարդկանց, որոնք օժտված են ոչ միայն բարձր պրոֆեսիոնալ որակներով, այլ նաև կրում են համամարդկային մի շարք արժեքներ: Նա պետք է կարողանա միաժամանակ պահպանել թիմային ոգու գաղափարը և խրախուսել աշխատակիցներին՝ ձգտելու դեպի աճ և զարգացում, ապահովելու թիմի և ողջ կազմակերպության բարեկեցությունը:

Ֆինանսական ոլորտում մարդկային ռեսուրսների գծով մենեջերների համար առաջին տեղում է անձնակազմի համալրումը, երկրորդում՝ կադրային գործավարությունը: Բայց կան նաև անձնակազմի գնահատման, խրախուսման և կառուցվածքի հարցեր, որոնք ևս ժամանակ են պահանջում: Ինչպիսին է այս առումով իրավիճակն «Ամերիա» խմբում:

Այո, անձնակազմի համալրումը և վարչական հարցերը շատ ժամանակատար են, բայց համաձայն չեմ, որ դրանք են առաջնահերթը: Անշուշտ, դրանք շատ կարևոր գործառույթներ են, սակայն մարդկային ռեսուրսների կառավարումը նախ և առաջ տաղանդների կառավարում է, այլ ոչ տեխնիկական հարցերի կառավարում: Մեզ համար առաջնային է թիմի մոտիվացումը: Մեր ռազմավարությունը հիմնված է արժեքների համակարգի և կորպորատիվ մշակույթի վրա, և հետևաբար, ժամանակի մեծ մասը մենք աշխատում ենք նվիրել հենց դրան: Ինչ վերաբերում է անձնակազմի համալրմանը և կադրային գործավարությանը, ապա այդ գործընթացները մեզ մոտ աստիճանաբար ավտոմատացվում են, ինչը նպաստում է արդյունավետության բարձրացմանը:

Որո՞նք են աշխատանքի ընդունման հիմնական չափանիշները:

«Միասին հավաքվելը սկիզբն է, միասին մնալը՝ առաջընթաց, միասին աշխատելը՝ հաջողություն»: Այս կարգախոսը շատ լավ բնութագրում է մեր աշխատանքը: Մենք կարող

ենք հպարտանալ նրանով, որ ձևավորել ենք նպատակասլաց, վառ և առաջադեմ մարդկանցից կազմված թիմ, և աշխատում ենք անընդհատ բարձրացնել այդ նշանոցը: Մեզ անհրաժեշտ են ակտիվ և ստեղծագործ անհատականության տեր մարդիկ, ովքեր ընդունակ են հանդես գալ նոր գաղափարներով և կյանքի կոչել դրանք, կիսում են մեր գաղափարախոսությունը և արժեքները և պատրաստ են մեզ հետ առաջ ընթանալ:

Ընտրության, թեստավորման և հարցազրույցների ընթացքում մենք աշխատում ենք հնարավորինս խոր ուսումնասիրել յուրաքանչյուր թեկնածուի, քանի որ մենք հավասարապես կարևորում ենք թե՛ մասնագիտական, թե՛ անձնական հատկությունները: Մեզ համար կարևոր է նաև, որ թեկնածուն ունենա մոտիվացում և ներուժ, մարտահրավերների դիմակայելու ունակություն և ինքնակատարելագործման ձգտում, երկարաժամկետ և արդյունավետ համագործակցության տեսլական:

Ինչ տեղ էք հատկացնում անձնակազմի ուսուցմանը: Անցկացնում եք արդյոք վերապատրաստման դասընթացներ:

Աշխատակիցների զարգացումը մեր առաջնային խնդիրներից մեկն է, որի լուծման համար մենք ստեղծում ենք բոլոր պայմանները՝ աշխատակիցներին տալով աճելու և ինքնակատարելագործվելու հնարավորություն:

Առաջնորդությունը, զլոբալ և ռազմավարական մտածողությունը, նորարարությունը, փոփոխությունների կառավարումը՝ ահա այն հիմնական հատկանիշները, որոնք մենք ողջունում ենք և զարգացնում բոլոր օղակների ղեկավարների մոտ՝ դրանով իսկ աճի հնարավորություններ ընձեռնելով բոլոր աշխատակիցներին: Անհատական զարգացումը և տաղանդների բացահայտումը մեր առաջնահերթ խնդիրներն են: Այդ նպատակով մենք իրականացնում ենք «Ղեկավարների ուսուցում» բացառիկ նախագիծը, որի շրջանակներում համագործակցում ենք «ՍԿՈԼԿՈՎՈ» կառավարման դպրոցի և առաջնորդության ուսումնասիրման առաջատար մասնագետների պրոֆեսորներ Պյեր Կասի և Մ. Քեթ դե Վոլիեի հետ:

Անշուշտ, մեծ ուշադրություն ենք դարձնում նաև մասնագիտական դասընթացներին, ֆորումներին՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Բացի միջազգային ֆորումներից, այդ թվում՝ Համաշխարհային տնտեսական ֆորումից, Russia Forum-ից, մեր աշխատակիցներն արդեն մի քանի տարի է, ինչ մասնակցում են զանազան միջազգային թիմային նախագծերի, քննարկումների, առցանց մրցույթների, փորձի և գիտելիքի փոխանակմանը: Մենք արդեն ունենք գործող կորպորատիվ ուսուցման կենտրոն, որը համագործակցում է միջազգային փորձագետների և ընկերությունների հետ՝ օգնելով մեր աշխատակիցներին ինքնակատարելագործվել և հաղորդակից լինել միջազգային փորձին: Ինչ վերաբերում է նորեկներին, ապա առաջին ամիսների ընթացքում նրանք անցնում են ճանաչողական սեմինարներ, դասընթացներ, որոնք օգնում են հեշտությամբ մերվել նոր միջավայրին:

Պատմե՞ցեք, խնդրեմ, ինչպես եք թիմում պահում աշխատողներին: Որպես մոտիվացման տարբերակ առաջարկում եք արդյոք սոցիալական փաթեթ, և ինչ է դրա մեջ մտնում:

Մեր սոցիալական փաթեթը շուկայում շատ մրցակցային է, ներառում է բժշկական ապահովագրություն, ճանապարհորդական ապահովագրություն, բանկային ծառայություններից օգտվելու արտոնյալ պայմաններ, ֆիթնես-կենտրոնների այցելության բաժանորդագրություն... Բայց ամենակարևորն այն է, որ աշխատառն զգա, որ ինքն էլ թիմի անդամ է և իր ներդրումն ունի համընդհանուր նպատակին հասնելու գործում, որտեղ ամեն ինչ հիմնված է հարգանքի և վստահության վրա: Մարդկանց փոխհարաբերությունները մեզ համար շատ կարևոր են, այդ իսկ պատճառով մենք մեծ ուշադրություն ենք դարձնում մեր արժեհամակարգին և կորպորատիվ մշակույթին: Թիմ կառուցելու և պահպանելու համար մենք ունենք միջոցառումների կորպորատիվ օրացույց: Մենք աշխատանքի և հանգստի բոլոր մակարդակներում նորարարությունների կողմնակից ենք:

Աշխատանքային առաջխաղացման ինչպիսի՞ հնարավորություններ է ընձեռում «Ամերիա» խումբը:

Մեզ հաջողվել է հավաքել մի թիմ, որը հավատ ունի ապագայի հանդեպ: Մենք բարձր ենք գնահատում մեր անձնակազմի հնարավորությունները և ներուժը, աշխատում ենք աջակցել նրանց մասնագիտական աճին: Աշխատանքային առաջխաղացումը մեզ համար սոսկ պաշտոնի բարձրացում չէ, այլ առաջին հերթին աճ որպես մասնագետ և անձ:

Որո՞նք են այն պատճառները, որոնցով խմբի աշխատողին կարող են ազատել աշխատանքից: Ինչպե՞ս է անցնում այդ գործընթացը: Եղել են արդյոք դեպքեր, երբ աշխատողներն անցել են աշխատանքի այլ ընկերություններում:

Անտարբերություն՝ ահա այն հիմնական պատճառը, որով կարող ենք աշխատանքից ազատել: Ազատման պատճառ կարող է հանդիսանալ նաև փակվածությունը, աճելու անկարողությունը կամ ցանկության բացակայությունը: Հնարավոր է, որ աշխատողը չկիսի մեր առաջնահերթությունները կամ պարզապես չդիմանա մեր ռիթմին: Այսօրվա թեժ մրցակցության պայմաններում դրանից խուսափելն անհնար է: Եղել են դեպքեր, երբ

մեր աշխատողներն այլ ընկերություններում ավելի բարձր պաշտոնի են անցել: Այդուհանդերձ, մենք հպարտանում ենք, որ ժամանակին նրանք մեր գործընկերներն են եղել: Մեր նախկին գործընկերներից շատերի հետ մենք պահպանել ենք լավ հարաբերություններ, նրանք անգամ մասնակցում են մեր կորպորատիվ միջոցառումներին: Մեզ համար շատ կարևոր է պահպանել լավ հարաբերությունները յուրաքանչյուր մարդու հետ, ով իր ավանդն է ունեցել ընդհանուր գործում: Եղել են անգամ դեպքեր, երբ աշխատողը հեռանալուց հետո այնուամենայնիվ ստացել է այդ տարվա բոնուսը՝ լավ աշխատանքի համար: Սա վկայում է աշխատողի հանդեպ մեր հարգանքի մասին՝ անկախ նրա հեռանալու պատճառներից:

Ձեր ընկերությունը շարունակաբար ընդլայնում է իր գործունեության աշխարհագրությունը: Ինչպե՞ս է այս դեպքում կազմակերպվում կադրերի ընտրության գործընթացը: Օգտվո՞ւմ եք արդյոք «տաղանդ որսացող» ընկերությունների ծառայություններից:


Մենք արտասահմանում աշխատելու փորձ ունենք և պատրաստ ենք համագործակցության: Մեզ մոտ աշխատում են տարբեր

ազգերի և մշակույթների ներկայացուցիչներ, ինչը նոր շունչ է հաղորդում թիմին: Ունեցել ենք նաև արտասահմանից մասնագետներ հրավիրելու փորձ: Ժամանակը և տարածությունը մեզ համար խոչընդոտ չեն:


Ինչի՞ հաշվին է ձեզ հաջողվում ներկայանալ որպես շուկայում լավագույն գործատուներից մեկը:

Վստահություն և փոխադարձ հարգանք՝ ահա մեր հաջողության գրավականը: Մենք հրաշքների չենք հավատում, մենք իրատես ենք: Բայց մենք ունենք երազանքներ և գիտենք, որ կարող ենք շատ բան փոխել այս իրականությունում: Մի անգամ Բուրբեն Վարդանյանն ասել էր. «Մենք համախոհների մի թիմ ենք, որոնք միավորում են հետաքրքրությունը կյանքի հանդեպ և ընդհանուր արժեքները»: Կարծում եմ՝ նրան հաջողվեց աշխատանքի այս ոճը ներդնել նաև Հայաստանում: Մենք գիտենք մեր ուժերը և թույլ կողմերը, որոնք չեն կարող չլինել, բայց մենք ճիշտ գնահատում ենք դրանք, աշխատում վերացնել թերությունները և բարելավել մեր արդյունքները: Ամենակարևորն այն է, որ մենք հավատում ենք ապագային և երազանքի թիմի հետ միասին քայլում ենք առաջ՝ անհնարինը դարձնելով հնարավոր:

Մեկ աշխատակցին բաժին հասնող շահույթը, հազ. ԱՄՆ դոլար



Մեկ աշխատակցին բաժին հասնող ակտիվները, հազ. ԱՄՆ դոլար



> Հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարում

Ամերիաբանկը շարունակում է հավատարիմ մնալ իր քաղաքականությանը, որն ուղղված է հաճախորդների հետ երկարաժամկետ փոխհարաբերությունների կառուցմանը, և այդ նպատակով մշակում և ներդնում է զանազան գործընթացներ, համակարգեր և գործիքներ: Տեղեկատվության ճիշտ հոսքի ապահովման գլխավոր գործիքը հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման ավտոմատացված համակարգն է (Terrasoft CRM): Սա մի ճկուն համակարգ է, որը թույլ է տալիս վարել հաճախորդների (ինչպես առկա, այնպես էլ պոտենցիալ) տվյալների, գործառնությունների, նրանց հետ փոխհարաբերությունների հաշվառումը, կազմել հաշվետվություններ, ստանալ վերլուծական տվյալներ: Ամերիաբանկում հաճախորդների հետ փոխհարաբերությունները հիմնված են հետևյալ սկզբունքների վրա.

- Հաճախորդների հետ ամուր փոխհարաբերությունների կառուցում և նրանց ներգրավումը նոր գաղափարների և ծառայությունների միջոցով, որոնք ներկայացնում են հավելյալ արժեք:

- Հաճախորդների բողոքներին արագ արձագանքում, ուղղիչ և կանխարգելիչ հավաքական միջոցառումներ, այդ թվում՝ պատշաճ արձագանք բողոքներին և հաճախորդների բավարարվածության վերլուծություն: Այդ նպատակով մենք կիրառում ենք մի շարք արդյունավետ մարտավարական մեթոդներ:

- Հաճախորդների բավարարվածության մշտական ուսումնասիրություն անկախ փորձագետների միջոցով՝ առավելագույն օբյեկտիվ և արդի տեղեկատվություն ստանալու համար:

- Հաճախորդների մենեջերների համար

բարենպաստ պայմանների ստեղծում՝ ապահովելու համար առավելագույն վստահություն հաճախորդների հետ անմիջական շփումների ժամանակ, որի շնորհիվ հաճախորդն ազատորեն կարող է շփվել մենեջերի հետ՝ վստահ լինելով, որ ի դեմս նրան կարող է ունենալ բանկային ոլորտի լավագույն խորհրդատու:

- Մասնաճյուղերում սպասարկման որակի շարունակական բարձրացում մշտական մոնիթորինգի, ուսուցման և վերապատրաստման միջոցով: Բանկում հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման համար պատասխանատու է մի առանձին ստորաբաժանում, որի գլխավոր խնդիրն է հաճախորդների և սպասարկմանը մասնակցող անձնակազմի շահերի միջև ներդաշնակության ապահովումը:

> Ռիսկերի կառավարման համակարգ

Ինչպես նախորդ տարիներին, 2013թ. նույնպես Ամերիաբանկի համար դարձավ դինամիկ կայուն զարգացման և տարբեր ռիսկերի նկատմամբ իր դիրքերի ամրապնդման տարի:


Հաշվետու տարվա ընթացքում Բանկի գործունեությունն ուղղված էր`

- Կապիտալի արդյունավետ կառավարմանը և համարժեքության ապահովմանը, ռիսկերին ենթակայության կառավարմանը
 - Վարկային և ավանդային պորտֆելների կենտրոնացման նվազեցմանը
 - Պորտֆելների բազմազանեցմանը, մանրածախ վարկերի և ավանդների ավելացմանը
 - Շուկայական ռիսկերի կառավարմանը ռիսկի փխորժակի ընդունելի սահմաններում
 - Իրացվելիության օպտիմալ կառավարմանը
 - Բանկի գործառնական ռիսկերի կառավարման գործող մոդելի արդյունքների համակարգմանը
 - Բանկի` ռիսկերի բացահայտմանն ուղղված հսկողությանը և աուդիտին Հաշվետու տարում Բանկի գործունեությունը ծավալվում էր ռիսկի ընդունելի սահմաններում:
- Առաջնահերթ կարևորություն տալով ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությանը` Ամերիաբանկը 2013թ. ևս հետամուտ էր գործող համակարգերի, մոդելների և մեթոդաբանության բարելավմանը և զարգացմանը:

Վարկային ռիսկ

Ինչպես նախորդ տարիներին, 2013թ. ևս Ամերիաբանկում վարկային ռիսկերի կառավարումը հանդիսանում էր կարևոր ռազմավարական խնդիր: Հաշվետու տարում հատուկ ուշադրություն էր դարձվում մանրածախ վարկավորման ընդլայնմանը, որի նպատակն էր վարկային ռիսկերի բազմազանեցումը և Բանկի ունիվերսալացումը, վարկային ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործումը: Շնորհիվ բանկի հավասարակշռված քաղաքականության` ակտիվների 28.6% և վարկային ներդրումների (այդ թվում` լիզինգի և ֆակտորինգի) 20.5% աճի պարագայում խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռը կազմում էր 1.8%, ինչը շատ ավելի

ցածր է, քան ՀՀ բանկային համակարգի միջին ցուցանիշը: Ընդ որում Բանկի մանրածախ վարկային պորտֆելն աճեց 25.6%-ով, իսկ խնդրահարույց մանրածախ վարկերը կազմեցին ընդհանուր պորտֆելի 2.2%: 2013թ. Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի բավականին բազմազան էր` կենտրոնացման ցածր մակարդակով: Ընդհանուր վարկային ռիսկի առումով 2013թ. Ամերիաբանկն ապահովեց ոչ միայն կապիտալի համարժեքության բարձր մակարդակ, այլև ռիսկերին դիմակայելու ամրության զգալի պաշար: Տարեվերջի դրությամբ Բանկի վարկային պորտֆելը կազմում էր ակտիվների 55.9%-ը, կապիտալի համարժեքության ցուցանիշը` 14.56%:



Բանկի վարկային պորտֆելի աճը թելադրում էր ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համակարգի արդիականացում: Հաշվետու տարում, հաշվի առնելով վարկային քաղաքականության վերանայումը դեպի մանրածախ վարկավորման ինտենսիվ ընդլայնում՝

- վերանայվեց մանրածախ վարկային հայտերի սպասարկման համակարգը, և ներդրվեց դրանց վարկային ռիսկի գնահատման նոր մեթոդաբանություն

- կատարելագործվեց պորտֆելի մակարդակով վարկային ռիսկի մոնիթորինգի, հսկողության և վերլուծության համակարգը, վաղ հայտնաբերման ցուցանիշները և վարկային ռիսկի հիմնական հայտանիշները

- մշակվեց թույլատրելի վարկային ռիսկի գնահատման և հաշվարկման մեթոդաբանություն ըստ որոշում ընդունող անձանց, ինչպես նաև համապատասխան մոնիթորինգի համակարգ

- կատարվեցին վերլուծություն և աշխատանքներ ուղղված վարկավորման գործընթացում սքորինգի ազգային համակարգի՝ ԱԲՐԱ-սքորի օգտագործմանը հրավաբանական անձանց վարկավորման ոլորտում

- ներդրվեց վարկային ռիսկերի գնահատման նոր մեթոդաբանություն, կատարելագործվեցին վարկառուների վարկունակության (վարկային ռիսկի) գնահատման չափանիշները

- կատարելագործվեցին վարկային պորտֆելի մոնիթորինգի համակարգի/մեթոդաբանության, մոնիթորինգի միջոցով վարկային ռիսկի նվազեցման մոտեցումները

- կատարելագործվեց կորպորատիվ վարկերի պորտֆելային վերլուծության գործընթացը, մշակվեցին կորպորատիվ վարկառուների ռիսկի վարկանիշի համակարգեր

- կատարելագործվեցին վարկավորմանը և վարկային ռիսկի գնահատման ամենալոգ գործընթացները, ընթացակարգերը և մեթոդաբանությունը

Կատարելագործվեց կոնտրաքենտ բանկերի վարկային ռիսկի գնահատման մեթոդաբանությունը: Հաշվետու տարում նաև մշակվեց կապիտալի համարժեքության գնահատման և պլանավորման ներքին մեթոդաբանությունը, որը բարձրացրեց կապիտալի կառավարման գործընթացների արդյունավետությունը կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում հաշվի առնելով սպասվող և պոտենցիալ ռիսկերը:

Շուկայական ռիսկեր

Կարևորելով շուկայական գնային ռիսկերի հնարավոր ազդեցությունը՝ Բանկը գործում էր ռիսկի զսպված ախորժակի սահմաններում: 2013թ. Հայաստանի արժույթային շուկան բնութագրվում էր փոփոխական համեմատաբար ցածր տատանողականությամբ: Առաջին կիսամյակի վերջում գրանցվեցին

հիմնական արժույթների փոխարժեքների տատանումներ, սակայն զսպված արժույթային քաղաքականության և ռիսկերի հեջավորման շնորհիվ Բանկը կարողացավ զերծ մնալ տատանումների բացասական ազդեցությունից՝ ապահովելով արժույթային գործառնություններից ստացված զուտ եկամտի աննսխադեպ աճ 52.8%: Մասնավորապես, Բանկում պարբերաբար անցկացվում էին փոխարժեքի անբարենպաստ տատանումների ազդեցության սթրես-թեսթեր, որոնք ցույց տվեցին, որ բանկը համարյա զերծ է արժույթային ռիսկերից, բացառությամբ փոխարժեքի՝ կապիտալի համարժեքության ցուցանիշի վրա ազդեցությունից, որը բացատրվում է նրանով, որ հաշվարկներում արտարժույթային ակտիվների կշիռը կազմում է 150%: Այնուամենայնիվ, Բանկի կապիտալի համարժեքության կառավարելի նորմատիվի բուժերը բավական էր՝ փոխարժեքի անգամ զգալի տատանումներին դիմակայելու համար՝ միաժամանակ մնալով անընդհատ հսկողության տակ և ենթարկվելով սթրես-թեսթերի:

2013թ. Բանկի տոկոսադրույքները ենթարկվում էին մրցակցային ճնշման, որի հետևանքով գրանցվեց շարունակական աննշան նվազում: Դրան հակառակ, կտրուկ անկում ապրեց պետական պարտատոմսերի եկամտաբերությունը՝ 2-4 տոկոսային կետով, բայց սա չհանգեցրեց վարկերի և ավանդների տոկոսադրույքների վրա ճնշման: Արդեն

երկրորդ կիսամյակում դրամական շուկայի տոկոսային սփրեդը նվազման միտում ցուցաբերեց:

Մոնիթորինգին և ակտիվների ու պասիվների ժամկետային և գնային ճեղքվածքների կառավարմանը զուգահեռ բանկը նաև հեջավորեց ներգրավված երկարաժամկետ միջոցների (միջազգային ֆինանսական կազմակերպությունների տրամադրած նպատակային վարկերի) լողացող տոկոսադրույքի ռիսկը՝ այդ նպատակով տոկոսային սվոփի պայմանագիր կնքելով Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի հետ: Հաշվետու տարում 6-ամսյա LIBOR-ը 0.5%-ից նվազեց մինչև 0.34%, ինչը դրականորեն ազդեց բանկի ֆինանսական արդյունքների վրա:

2013թ. վերջին ժամկետային միջոցների կառուցվածքում բանկի տոկոսային ռիսկի բաց դիրքի առավելագույն ցուցանիշը կազմում էր 5.96% (առավելագույն թույլատրելի շեմը 15% է), իսկ ընդհանուր ժամկետային կառուցվածքի տոկոսային ռիսկի հանրագումարային ցուցանիշը կազմում էր 8.08%, որը գրեթե 17%-ով ցածր է թույլատրելի առավելագույն շեմից:

2013թ. անշարժ գույքի շուկայում գների էական փոփոխություններ չեն եղել, չնայած գները ենթադրում էին որոշակի անորոշություն: Բանկը գրավների առումով ցուցաբերում էր պահպանողական մոտեցում՝ միաժամանակ առավել ձկուն մոտեցում ցուցաբերելով վստահելի հաճախորդներին:

2013թ. շուկայական ռիսկերի ավելի արդյունավետ կառավարման նպատակով բանկում

- մշակվեց շուկայական ռիսկերի (արժութային, եկամտաբերության և այլ) մոնիթորինգի համակարգ, որը ներառում է նաև հիմնական ցուցանիշների և հարաչափերի համակարգ
- վերանայվեցին և ներդրվեցին սթրես-թեստերի նոր տեսակներ, այդ թվում՝ ռիսկի տարբեր աղբյուրների միաժամանակյա առաջացում ենթադրող սթրես-սցենարներ
- մշակվեցին շուկայական ռիսկերի, այդ թվում՝ անշարժ գույքի գների, լողացող տոկոսադրույքի, ոսկու և արժույթների, փոխարժեքների օպտիմալ սփրեդի և բաց դիրքի վնասի առավելագույն մակարդակի ռիսկերի գնահատման, ֆինանսական ռիսկերի համընդհանուր ցուցանիշների մոնիթորինգի մոդելներ

Իրացվելիության ռիսկ

Ողջ հաշվետու տարվա ընթացքում բանկի իրացվելիության նորմատիվներն ունեին ամբողջական բավարար պաշար՝ ապահովելով բանկի անխափան գործունեությունը:

ՀՀ ԿԲ նորմատիվները ևս ունեին ամբողջական բավարար պաշար.

- Մասնավորապես, ՀՀ ԿԲ ընդհանուր իրացվելիության նվազագույն նորմատիվը կազմում է 15%, Ամերիաբանկի ցուցանիշը տարբեր ռիսկերի դրությամբ՝ 31.32%:
- ՀՀ ԿԲ ընթացիկ իրացվելիության նվազագույն նորմատիվը կազմում է 60%,

Ամերիաբանկի ցուցանիշը տարբեր ռիսկերի դրությամբ՝ 171.03%:

Սթրես-թեստավորում

Շուկայական, վարկային, գործառնական և իրացվելիության ռիսկերի ի հայտ գալու հավանականությունից ելնելով՝ բանկն ամեն ամիս անցկացնում է սթրես-թեստեր՝ տարբեր սցենարներով, որոնց արդյունքները հաշվի են առնվում ղեկավարության կողմից բանկի գործունեության բոլոր ուղղություններին վերաբերող որոշումների կայացման ընթացքում: 2013թ. սթրես-թեստերը վերանայվեցին, և ներդրվեցին թեստերի նոր տեսակներ, որոնք հաշվի են առնում տարբեր ռիսկերի միաժամանակյա ի հայտ գալը: 2013թ. ընթացքում անցկացված սթրես-թեստերը ցույց տվեցին, որ բանկն ունակ է դիմակայել ամենատարբեր գործոններով, այդ թվում՝ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններով պայմանավորված ռիսկերին:

Բանկի կապիտալի համարժեքության գործակիցը բավարար է՝ բոլոր հիմնական ռիսկերին՝ վարկային, շուկայական և գործառնական ռիսկերին միաժամանակ դիմակայելու համար:

Գործառնական ռիսկեր

Հիմնական գործառնական ռիսկերը, որոնց ենթակա է բանկը, ներառում են արտաքին միջավայրի անբարենպաստ փոփոխությունների ռիսկերը, համակարգերի աշխատանքի և դրա՝ մարդկային գործոնով

պայմանավորված խափանումների ռիսկը, ինչպես նաև դինամիկորեն զարգացող բանկերին բնորոշ ներքին գործընթացների կազմակերպմանն առնչվող ռիսկերը: Ռիսկերի կառավարումը բանկում խաղում է պրոակտիվ դեր, մասնավորապես, դրա մասն են կազմում ռիսկերի բացահայտմանը և գնահատմանն ուղղված շարունակական հետևողական աշխատանքները: Ռիսկերի կառավարումն իրականացվում է մեկ միասնական համակարգի միջոցով, որի հիմքում ընկած է հսկողության մեթոդներին վերաբերող որոշումների կայացման ընթացքում ռիսկի և օգուտի հարաբերակցությունը: Գործառնական ռիսկերի կառավարումը բանկում հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- Գործընթացների մանրամասն նկարագրում
 - Իրավասությունների և սահմանաչափերի հստակ սահմանում
 - Շահերի բախման բացառում
 - Հաշվետվողականության հստակ մեխանիզմ
 - Կրկնակի ստուգման սկզբունք և այլն
- Բանկը նաև հաշվարկում է պրոդուկտների նշանակալիությունը, բանկի՝ պրոդուկտների գործառնական ռիսկերի նկատմամբ զգայունությունը, ինչպես նաև կիրառում է կապիտալի՝ ըստ պրոդուկտների բաշխման մոդելը՝ սեփական մեթոդաբանությամբ, որը թույլ է տալիս սահմանել տվյալ պրոդուկտին առնչվող գործընթացների և

համակարգերի գնահատման խնդիրներն ըստ առաջնահերթության: Հաշվետու տարվա ընթացքում բանկում գործառնական ռիսկերի բացահայտման նպատակով նախապես կազմված ծրագրին համաձայն իրականացվեց մի շարք գործընթացների և տեղեկատվական համակարգերի գնահատում, որը թույլ տվեց բացահայտել և վերլուծել համակարգերի և գործընթացների թույլ կողմերը, կայացնել դրանք բարելավելու վերաբերյալ որոշումներ, նվազեցնել գործառնական կորուստների հավանականությունը և դրանց հետևանքները՝ միաժամանակ ապահովելով բանկի ղեկավարության և անձնակազմի առավելագույն տեղեկացվածությունը գործառնական ռիսկերի մասին: Կատարված աշխատանքներից հարկ է նշել մանրածախ վարկավորման վերանայված գործընթացի ռիսկերի գնահատումը, պլաստիկ քարտերի գործառնական ռիսկերի նվազեցման ծրագիրը: Գործընթացների և համակարգերի ռիսկերի գնահատման մեջ առանցքային դեր է խաղում տարբեր դեպքերի հավանականության և դրանց ազդեցության հաշվարկը, որի ճշգրտությունն ապահովելու նպատակով բանկը, 2018-ից սկսած, վարում է գործառնական պատահարների և կորուստների տվյալների շտեմարան: Այն թույլ է տալիս վերլուծել ռիսկի աղբյուրները, դրանց բնույթը, պատճառները և միտումները, հաշվարկել գործառնական կորուստների վերականգնման համար անհրաժեշտ

կապիտալը: 2018թ. բանկի՝ գործառնական ռիսկերով պայմանավորված կորուստներն աննշան էին՝ մի քանի անգամ ավելի ցածր, քան համաշխարհային պրակտիկայում ընդունված առավելագույն թույլատրելի շեմը:

Էկոլոգիական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգ

2018թ. բանկում շարունակում էր գործել էկոլոգիական և սոցիալական (ԷՆՍ) ռիսկերի կառավարման համակարգը: Բանկի ԷՆՍ ռիսկերի կառավարման համակարգը հիմնված է միջազգային լավագույն փորձի վրա և համաձայնեցված է բանկի հետ համագործակցող ֆինանսական հաստատությունների հետ (FMO, ՄՖԿ, ՎՋԵԲ, ԱՋԲ): Այն նաև ներառում է ԷՆՍ ռիսկերի մոնիթորինգի համակարգ: Բանկի համապատասխան մասնագետները պարբերաբար մասնակցում են սեմինարների և վերապատրաստման դասընթացների: Շրջակա միջավայրի վրա փոքր ազդեցություն ունեցող վարկառուներին տրամադրված վարկերի տեսակարար կշիռը կազմում է ընդհանուր վարկային պորտֆելի 78.9%-ը, իսկ ցածր սոցիալական ռիսկ ունեցող վարկառուներին տրամադրված վարկերինը՝ ընդհանուր վարկային պորտֆելի 73.8%-ը: ԷՆՍ ռիսկերի կառավարման համակարգը տնտեսապես շահավետ է բանկի համար՝ պահպանելով ռիսկերն ընդունելի և կառավարելի սահմաններում:

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱԿԱՅՐ




> Մակրոտնտեսական նախադրյալներ

2013թ. Հայաստանի մակրոտնտեսական վիճակը բնութագրվում էր շարունակվող հետճգնաժամային վերականգնմամբ: 6 տարի անընդմեջ գրանցվող երկնիշ տնտեսական աճից հետո՝ 2008թ., տեղի ունեցավ կտրուկ անկում՝ պայմանավորված Վրաստանում տիրող իրավիճակով և համաշխարհային տնտեսական ճգնաժամով: 2009թ. ՀՀ տնտեսությունը գրանցեց 14.1%-նոց անկում: 2010-2013թթ.

տնտեսությունն աստիճանաբար վերականգնվում էր, սակայն չնայած, որ վերջին 3 տարվա ընթացքում երկրի տնտեսական աճի տեմպերը հետևողականորեն ավելանում էին՝ 2.2% 2010թ., 4.7% 2011թ. և 7.2% 2012թ.՝ 2013թ. աճն էապես նվազեց՝ կազմելով 3.5%: Այդուհանդերձ, 4 տարի անց իրական ՀՆԱ-ն վերջապես հասավ նախաճգնաժամային մակարդակին՝ անգամ գերազանցելով այն 1.8%-ով:

2013թ. ՀՀ տնտեսությունը շարունակում էր վերականգնվել, սակայն ՀՆԱ-ի աճի տեմպերը նվազեցին՝ կազմելով 3.5%, ընդ որում չնայած ՀՆԱ-ի իրական ծավալը հասավ 2008թ. մակարդակին՝ անվանական ծավալը դուրսային արտահայտությամբ դեռևս զիջում է նախաճգնաժամային ցուցանիշներին (ինչը պայմանավորված է հիմնականում դուրսի արժուրմամբ՝ 5 տարվա ընթացքում ավելի քան 33%-ով):



• 2013թ. տնտեսական աճն ուղեկցվում էր 5.8% գնաճով, որը պլանավորված ցուցանիշից բարձր է՝ պայմանավորված գազի և էլեկտրաէներգիայի թանկացմամբ:

• Տնտեսական աճը հիմնականում ապահովվում էր գյուղատնտեսության (ՀՆԱ-ի՝ 1.5 տոկոսային կետով աճ), վերամշակող արդյունաբերության (ՀՆԱ-ի՝ 0.7 տոկոսային կետով աճ), ֆինանսական և ապահովագրական, ինչպես նաև ՏՏ ոլորտների հաշվին (ՀՆԱ-ի՝ 0.6 տոկոսային կետով աճ):

• Գյուղատնտեսության իրական ծավալն ավելացավ 8.1%-ով:

• Ֆինանսական և ապահովագրական


ծառայությունների իրական ծավալն ավելացավ 12.6%-ով:

• Վերամշակող արդյունաբերության աճը կազմեց 7.1%, իսկ լեռնահանքային արդյունաբերության աճը՝ 4.9%:

• Շինարարության ոլորտում, որը մինչև ճգնաժամը տնտեսության առաջատարն էր, դարձյալ գրանցվեց անկում՝ 11.2%: Համաշխարհային տնտեսական ճգնաժամով պայմանավորված ամենակարևոր միտումներից մեկը տնտեսության վերակազմավորումն է, մասնավորապես շինարարության ոլորտի առաջատար դիրքերի զիջումը, որի հետևանքով այս ոլորտի մասնաբաժինը

ՀՆԱ-ում կրճատվեց 2.5 անգամ, մինչդեռ տնտեսության այլ հիմնական ճյուղերը՝ գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, առևտուրը, ավելացրին իրենց մասնաբաժինը ՀՆԱ-ում ինչպես սեփական աճի, այնպես էլ շինարարության ոլորտի անկման հաշվին:

Լեռնահանքային արդյունաբերության ոլորտում եռամյա երկնիշ աճից հետո գրանցվեց աճի տեմպերի դանդաղում մինչև 4.9%, ինչը պայմանավորված էր մետաղների գների նվազմամբ: Որոշակի աճ նկատվեց վերամշակող արդյունաբերությունում, հիմնականում խմիչքների և ծխախոտի արտադրության առաջանցիկ աճի հաշվին:



■ Գյուղատնտեսություն ■ Առևտուր ■ Շինարարություն ■ Վերամշակող արդ. արդյունաբերություն ■ Ֆինանսներ և ապահովագրություն

Արդեն երրորդ տարին անընդմեջ զգալի աճ է գրանցվում գյուղատնտեսության ոլորտում, որն ունի ամենամեծ մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ 19.2%: Սա Եվրոպայում և ԱՊՆ-ում ամենաբարձր ցուցանիշներից մեկն է: 2012թ. գյուղատնտեսության աճը կազմում էր 9.5%, 2013թ.՝ 8.1%: Այն պայմանավորված է ինչպես արդյունաբերական գյուղատնտեսության զարգացմամբ, այնպես էլ կառավարության նախաձեռնած խրախուսական ծրագրերով: Գյուղատնտեսության աճին նպաստում է նաև խմիչքի (մասնավորապես՝ կոնյակի և գինու) և ծխախոտի արտադրության և արտահանման աճը:

Վերջին 4 տարվա ընթացքում ամենաարագ աճող ոլորտներից են ֆինանսական և ապահովագրական ծառայությունների ոլորտները: Մասնավորապես, ֆինանսական և ապահովագրական ոլորտի միջին տարեկան աճը կազմում է 16.9%, իսկ 2013թ.՝ 12.6%, ինչի արդյունքում կշիռը ՀՆԱ-ում կազմեց 4.7%: Սրան նպաստեց նաև ԱՊՊԱ-ի


ներդնումը, ինչպես նաև բանկային հատվածում գործառնությունների ծավալի աճը: 2011թ. վերջին կառավարությունը հաստատեց արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը, որի շրջանակներում նախատեսվում է արտահանող ընկերություններին հատկացնել 300 մլն ՀՀ դրամ որպես պետական աջակցություն: Ստեղծված իրավիճակում կառավարությունը շարունակեց դեռևս 2009թ. միջազգային ֆինանսական կազմակերպությունների հակաճգնաժամային ծրագրերի շրջանակներում սկսված խրախուսական ծրագրերը:

Մասնավորապես, կառավարությունը ջանքեր գործադրեց հետևյալ ուղղություններով.

- Բիզնես հիմնելու պայմանների պարզեցում և բարելավում
- Հարկային բարեփոխումներ
- Մաքսային բարեփոխումներ

- Շինարարության թույլտվություն ստանալու գործընթացի պարզեցում
- Սեփականության իրավունքի գրանցման գործընթացի պարզեցում
- Վարկ ստանալու գործընթացի պարզեցում


Չորրորդ տարին անընդմեջ արտահանման աճի տեմպերը գերազանցում էին ներմուծման աճի տեմպերը, ինչը դրական գործոն է մի երկրի համար, որն ունի արտաքին առևտրային հաշվեկշռի պակասորդի շատ բարձր մակարդակ: 2013թ. ներմուծման ծավալը 3 անգամ գերազանցում էր արտահանման ծավալը, մինչդեռ 2009թ. այդ ցուցանիշն ավելի բարձր էր՝ 4.7 անգամ: Նշված ժամանակահատվածում տարբերության կրճատումը պայմանավորված էր արտահանման առաջանցիկ աճով, սակայն արտաքին առևտրային հաշվեկշռի պակասորդի հետագա կրճատումը լուրջ մարտահրավեր է՝ ենթադրելով արտահանման կառուցվածքի փոփոխություն:



Չնայած վերջին 4 տարիների ընթացքում Հայաստանի ընթացիկ հաշվի պակասորդն զգալիորեն նվազել է, այն դեռևս մնում է բավականին բարձր՝ ՀՆԱ-ի 10.5%-ը 2009թ. 17.6%-ի համեմատ: 2013թ. Հայաստանում օտարերկրյա ներդրումների ծավալը վերջին 8 տարվա ընթացքում հասավ աննախադեպ ցածր մակարդակի՝ կազմելով 305 մլն ԱՄՆ դոլար: Համեմատության համար նշենք, որ նախքան ճգնաժամը (2008) ուղղակի օտարերկրյա ներդրումների ծավալը

կազմում էր 1.12 մլրդ ԱՄՆ դոլար: 2013թ. Հայաստանի պետական արտաքին պարտքը կազմում էր ՀՆԱ-ի 37.5%-ը՝ 2012թ. 37.6%-ի համեմատ. 2013թ. վերջում արտաքին պարտքը կազմում էր 3 904 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 4.4%-ով: 2013թ. նշանակալից էր այն առումով, որ կառավարությունը թողարկեց եվրապարտատոմսեր՝ 700 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, որի մի մասն ուղղվեց արտաքին պետական պարտքի մարմանը և սպասարկմանը՝ թույլ չտալով դրա

հետագա աճը: 2013թ. արտաքին պարտքի սպասարկումը հասավ իր գագաթնակետին՝ կազմելով 859 մլն ԱՄՆ դոլար: 2013թ. սպառողական գների ինդեքսը (դեկտեմբերից դեկտեմբեր) կազմում էր 5.6%՝ մի փոքր գերազանցելով գնաճի կանխատեսված մակարդակը՝ 4% (±1.5%): Այդուհանդերձ, գնաճի մակարդակն սպասվածից ցածր էր. 2013թ. գազի և էլեկտրաէներգիայի գները բարձրացան, բայց ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանումը զսպեց գնաճը:



Երկրի ներդրումային և գործարար միջավայրը բարելավելու ուղղությամբ ՀՀ կառավարության ձեռնարկած միջոցառումների արդյունքում 2013թ. 2012թ. համեմատ Հայաստանը 3 հորիզոնականով բարելավեց իր ներդրումային գրավչության վարկանիշը` Doing Business-2014 զեկույցում զբաղեցնելով 37-րդ տեղը: Դրական միտումներ են նկատվում նաև համաշխարհային մրցունակության ինդեքսում (79-րդ տեղ, դիրքի բարելավում 3 հորիզոնականով):

2013թ. սեպտեմբերին Հայաստանը հայտարարեց Եվրասիական մաքսային միությանն անդամակցելու իր մտադրության մասին: Նոյեմբերին ստորագրվեց Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ փոխգործակցության ընդլայնման հուշագիր: 2014թ. հունվարին կառավարությունն ընդունեց Մաքսային միությանը միանալու միջոցառումների ճանապարհային քարտեզը: Միաժամանակ, Հայաստանը շարունակում էր ակտիվորեն համագործակցել միջազգային կառույցների հետ` տեղաբաշխելով 2009-2012թթ. ներգրավված միջոցները (ՀԲ, Արժույթի միջազգային

հիմնադրամ, ԱԶԲ, ԵՄ, Ռուսաստան): Մասնավորապես, 2013թ. հաստատվեց Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև 2014-2017թթ. համագործակցության ռազմավարությունը: Տարեվերջի դրությամբ Համաշխարհային բանկի պորտֆելում կար Հայաստանին վերաբերող 14 գործող ծրագիր` 445 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, այդ թվում.

- 5 ներդրումավարկային ծրագիր ենթակառուցվածքների ոլորտում
- 4` սոցիալական ոլորտում
- 3` հասարակական ոլորտում
- 2` ՏՏ և գյուղատնտեսության ոլորտներում

Համաշխարհային ճգնաժամի արդյունքում Հայաստանը հայտնվեց այն երկրների շարքում, որտեղ արտարժույթի բարձր պահանջարկի պայմաններում դրա ներհոսքը նվազեց` հանգեցնելով ազգային արժույթի արժեզրկմանը: Միաժամանակ, 2009թ. անկումից հետո 2013թ. շարունակեց աճել Հայաստան մտնող տրանսֆերտների ծավալը. ըստ ՀՀ ԿԲ տվյալների` 2013թ. բանկային համակարգի միջոցով ուղարկվող մասնավոր տրանսֆերտ-

ների ընդհանուր ծավալը կազմեց 1.87 մլրդ ԱՄՆ դոլար, որը 10.8%-ով բարձր է 2012թ. ցուցանիշից: Սա երկրի պատմության ընթացքում ամենաբարձր ցուցանիշն է: Ըստ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կանխատեսումների 2014թ. Հայաստանի տնտեսական աճը կկազմի 4.5%, մինչդեռ կառավարությունը նախատեսում է ապահովել 5.4-6.1%-նոց աճ: Սրանով հանդերձ` Հայաստանի տնտեսությունը մեծապես կախված կլինի համաշխարհային տնտեսությունում և հատկապես Ռուսաստանում տիրող իրավիճակից: ՄՄ անդամակցության սկիզբը, Ռուսաստանում լայն տնտեսական կապերի և մեծաքանակ Սփյուռքի առկայությունը պայմանավորում են Հայաստանում ընթացող գործընթացների անուղղակի կախվածությունը Ռուսաստանի տնտեսությունից: Եվրագոտում տիրող վիճակը ևս կարող է անդրադառնալ Հայաստանի տնտեսության, հատկապես լեռնահանքային արդյունաբերության վրա, եթե հաշվի առնենք, որ այդ ոլորտի արտադրանքի գերակշիռ մասն արտահանվում է Եվրոպա:



Դավիթ Սարգսյան, իրավական գծով տնօրեն

Ազատությունը փոփոխական գագաթն է: Երբ երիտասարդ ես, ձգտում ես անկախության, սակայն ավելի հասուն տարիքում, պատասխանատվություն կրելով ընտանիքիդ և աշխատանքիդ համար, քեզ նույնչափ ազատ ես զգում: Լիակատար ազատության գագաթն ես ունեցա մի անգամ Սիսիանում՝ Փառանձեմ թագուհու եկեղեցու մոտ, ուր անսպալկ բնությունը, մաքուր օդը և անհուն երկինքը ներդաշնակվում էին եկեղեցու ջերմության հետ:

> Իրավական դաշտ, պետական կարգավորում, ֆինանսական ենթակառուցվածք

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի առաջին ալիքին հետևած վերականգնման, ինչպես նաև արտաքին Նոր ազդեցությունների սպասման պայմաններում 2012-2013թթ. Հայաստանի կառավարությունը շարունակում էր տնտեսության իրական հատվածի խրախուսմանը, արտահանման բազմազանեցմանն ու ընդլայնմանն ուղղված միջոցառումները: Մասնավորապես, 2010թ. վերջին հաստատվեց արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը, որի նպատակն էր արտահանմանն ուղղված արդյունաբերական զարգացած համակարգի ձևավորումը:

Ռազմավարությամբ նախատեսվում է ներդնել ինստիտուցիոնալ ենթակառուցվածքներ և ստեղծել Հայաստանում արդյունաբերական քաղաքականության ձևավորման և իրականացման համար անհրաժեշտ կառավարման համակարգ: Մասնավորապես, սահմանվում են 3 պայմանական փուլեր, որոնք կապահովեն 11 հիմնական ենթաճյուղերի զարգացումը: 2012թ. համակարգված արդյունաբերական քաղաքականություն իրականացնելու նպատակով ՀՀ վարչապետին կից կազմավորվեց Արդյունաբերական խորհուրդը, որը 2013թ. ուսումնասիրեց իսկ արդեն ընդունված ռազմավարությունների իրականացման ընթացքը և մտցրեց մի շարք փոփոխություններ հետևյալ ուղղություններում.

- Գինեգործություն
- Կոնյակի արտադրություն
- Դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ
- Ճշգրիտ մեքենաշինություն
- Ոսկերչական իրերի, ժամացույցների

և ադամանդների արտադրություն և վերամշակում
Նաև հաստատվեցին հետևյալ ոլորտների

ռազմավարությունները և գործողությունների ծրագրերը.

- Տեքստիլ և տրիկոտաժային արդյունաբերություն

Համաձայն կառավարության որոշման` Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամը վերանվանվեց Արդյունաբերական զարգացման հիմնադրամ, որը կհանդիսանա արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծրագրի գլխավոր օպերատոր:

Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Ավելացված արժեքի հարկի», «Շահութահարկի», «Եկամտահարկի», «Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման», «Հաշվապահական հաշվառման», «Ընդերքի», «Լիցենզավորման», «Պետական տուրքի», «Ակցիզային հարկի» մասին օրենքներում, ինչպես նաև ՀՀ Մաքսային օրենսգրքում: 2014թ. կառավարությունը փոփ առ փոփ կշարունակի գործարար միջավայրի բարեփոխումների, իրական հատվածի աջակցության, գիտելիքահեն տնտեսության ենթակառուցվածքի զարգացման ծրագրերը, այլ կերպ ասած` տնտեսության բազմազանեցումը և արտահանմանն ուղղված արտադրության խթանումը: Այս բոլոր միջոցառումների վերջնական նպատակն է երկրի տնտեսության մրցունակության բարձրացումը:

Դրամավարկային քաղաքականություն

2013թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկը վարում էր հարաբերականորեն չեզոք դրամավարկային քաղաքականություն: Վերաֆինանսավորման

դրույքը մնում էր անփոփոխ` 8%: Օգոստոսին վերաֆինանսավորման դրույքը բարձրացվեց մինչև 8.5%` գնաճի և էներգակիրների թանկացման բացասական ազդեցությունը մեղմելու նպատակով, իսկ արդեն նոյեմբերից, հաշվի առնելով գնաճի անկումը և տնտեսական ակտիվության դանդաղումը, ԿԲ-ն թուլացրեց դրամավարկային քաղաքականությունը: Մասնավորապես, դեկտեմբերին վերաֆինանսավորման դրույքը նվազեցվեց մինչև 7.75%:

Սպասվում է, որ 2014թ. կշարունակվի նույն մեղմ քաղաքականությունը, որի հիմնական նպատակը կլինի ընդհանուր պահանջարկի և տնտեսական ակտիվության խթանումը: Ըստ նախնական կանխատեսումների` մոտ ապագայում ռիսկերը կլինեն հավասարակշռված և պայմանավորված համաշխարհային և տեղական տնտեսության զարգացմամբ: Միաժամանակ Հայաստանի տնտեսությունը մնում է չափազանց դոլարացված (եթե ճգնաժամից առաջ դոլարի զգացման մակարդակը նվազել էր, ապա սկսած 2009թ-ից աստիճանաբար աճում է), ինչը պայմանավորված է ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանումներով, իսկ Հայաստանում բանկային վարկերի մեծամասնությունը տրամադրվում է ԱՄՆ դոլարով:

Դոլարի զգացման մակարդակը նվազեցնելու նպատակով տարվա ընթացքում ՀՀ ԿԲ-ն շարունակում էր համապատասխան միջոցառումներ ձեռնարկել, մասնավորապես, լրացումներ կատարվեցին հիմնական տնտեսական նորմատիվների իրացվելիության հաշվարկի բանաձևում: Բացի դրանից, դրամավարկային քաղաքականության մեղմացման պայմաններում 2014թ. սկզբից նվազեցվեց ՀՀ դրամով պարտադիր

պահուստավորման չափը՝ կազմելով 2% նախկին 4%-ի փոխարեն: 2013թ. կատարվեցին նաև մի շարք այլ օրենսդրափոփոխական փոփոխություններ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն անդրադարձան բանկային համակարգի գործունեության վրա, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում, որոնցից բխող փոփոխություններ մտցվեցին նաև մի շարք այլ օրենքներում և նորմատիվ ակտերում:

Ֆիսկալ քաղաքականություն

2013թ. ՀՀ պետբյուջեի պակասորդ/ՆԱԱ հարաբերակցությունը կազմում էր 0,5%՝ 2012թ. 1,5%-ի համեմատ: 2014թ. պակասորդը կանխատեսվում է ՆԱԱ-ի 2%-ի սահմաններում, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ բյուջեն տնտեսության վրա կունենա ոչ թե զսպող, այլ ընդլայնող ազդեցություն: Հանդիսանալով Հայաստանում իրականացվող բարեփոխումների կարևոր բաղադրիչ՝ հարկային և մաքսային վարչարարությունը միաժամանակ Հայաստանի տնտեսության ամենախոցելի օղակներից մեկն է: Այս ոլորտում 2013թ. իրականացված հիմնական միջոցառումներն ուղղված էին կոռուպցիայի դեմ պայքարին, գործարար միջավայրի բարելավմանը, փոքր և միջին ձեռնարկատիրության խրախուսմանը: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի և դրա հետևանքների լույսի ներքո վերանայվեց կառավարության կողմից 2008թ. հաստատված կայուն զարգացման ծրագիրը: Բացի դրանից.

- Բյուջետային ծախսերի ֆինանսավորման գործընթացն ամբողջովին ավտոմատացվեց:
- Կատարելագործվեց պետական գնումների համակարգը:

- Մշակվեցին և ներդրվեցին ուսանողական վարկերի տրամադրման և մի շարք այլ պետական ծրագրեր: 2013թ. փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրի շրջանակներում 17243 տնտեսավարող սուբյեկտներ ստացան պետական աջակցություն, ինչը 2 անգամ գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: Ակնկալվում է, որ 2012-2013թթ. իրականացված բարեփոխումների (էլեկտրոնային հաշվետվողականության համակարգի ներդրում, հաշվետվությունների քանակի կրճատում, վարչական կանոնների պարզեցում) դրական արդյունքներն էլ ավելի զգալի կլինեն 2014թ.:

Կապիտալի շուկա

ՀՀ ֆինանսական հատվածում դեռևս գերիշխում է բանկային համակարգը, չկա կապիտալի և վենչուրային հիմնադրամների զարգացած շուկա: Մյուս կողմից, 2013թ. նկատվեց որոշակի ակտիվություն ինչպես ձեռնարկատերերի, այնպես էլ թողարկողների շրջանում, ինչին նպաստեցին իրավական կարգավորման մակարդակով ձեռնարկվող քայլերը, ինչպես նաև «ՆԱՍԴԱԲ Օ-ԷՄ-ԷՔՍ Հայաստան» առևտրային բորսայի ձեռնարկած միջոցառումները: Հատկապես մեծ տեղաշարժ նկատվեց կորպորատիվ պարտատոմսերի ոլորտում: 2013թ. ՀՀ արժեթղթերի շուկայի կապիտալացման ծավալն ավելացավ 15,7%-ով: 2012թ. համեմատ բաժնետոմսերով գործարքների ծավալն աճեց 2,6 անգամ (7 թողարկողների արժեթղթերով), իսկ կորպորատիվ պարտատոմսերով գործարքների ծավալը՝ 3,8 անգամ: Պետական պարտատոմսերով գործարքների ծավալն ավելացավ 3,6 անգամ: 2013թ. Հայաստանում իրականացվեցին կապիտալի շուկայի զարգացմանն ուղղված մի քանի ծրագրեր.

- Հաճախորդների սպասարկումը բարելավելու նպատակով ներդրվեց նոր կենտրոնացված դեպոզիտար համակարգ:
- Ներդրվեց արժույթային սվոփի հարթակ, որը շուկայի մասնակիցներին թույլ է տալիս ընդլայնել տրամադրվող և սպառվող ծառայությունների ընտրանին:
- Տարեվերջին ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիան ձեռք բերեց պետական պարտատոմսերի ենթապահառուի կարգավիճակ, որը թույլ է տալիս միասնական համակարգում սպասարկել ինչպես կորպորատիվ արժեթղթեր, այնպես էլ պետական պարտատոմսեր՝ միաժամանակ ընդլայնելով հաճախորդներին տրամադրվող ծառայությունների տեսականին:
- Դեկտեմբերին գործարկվեց պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի տեղեկատվական համակարգը, որի միջոցով կարելի է ընտրել ֆոնդի կառավարչին:
- Ակտիվորեն զարգանում էին օտարերկրյա դեպոզիտարիաների հետ ինտեգրման գործընթացները: Bloomberg և Thomson Reuters միջազգային տեղեկատվական համակարգերում ներկայացվեց ՀՀ շուկայի մասին համապարփակ տեղեկատվություն:
- Մյուս կողմից, կապիտալի շուկայի զարգացման վրա որոշակի զսպող ազդեցություն են ունենում մի շարք գործոններ, այդ թվում՝
 - Եվրոպական շուկաներում տիրող ընդհանուր անորոշությունը, արտասահմանյան ներդրողների շրջանում հայկական ակտիվների պահանջարկի բացակայությունը
 - Տեղական ընկերությունների երկարաժամկետ ռազմավարության բացակայությունը
 - Հայաստանում գործող խոշոր ընկերությունների տեղային ռազմավարությունը, որը չի ենթադրում միջոցների ներգրավման այլ ընտրանքային աղբյուրների օգտագործում
 - Խոշոր ձեռնարկությունների մեծամասնության՝ արտասահմանյան ընկերությունների

դուստր ձեռնարկություններ լինելը, մինչդեռ հենց այդպիսի ձեռնարկություններն են ունակ մարսելու նման խոշոր դրամական հոսքերը Այդուհանդերձ, Հայաստանում կան տարբեր ոլորտներում գործող ընկերություններ, որոնք գրագետ կառավարման և բաց լինելու դեպքում կարող են հետաքրքրել ներդրողներին և նպաստել շուկայի ակտիվացմանը: Տեղացի և օտարերկրացի փորձագետների մեծամասնությունը ՀՀ կապիտալի շուկայի զարգացումը տեսնում է նախ և առաջ կորպորատիվ պարտատոմսերի շուկայի աճի մեջ: 2014թ. սպասվում է այս ոլորտի սրընթաց զարգացում:

Հայաստանի կապիտալի շուկայի զարգացմանն աջակցում են նաև միջազգային ֆինանսական հաստատությունները, մասնավորապես ՄՖԿ-ն կապիտալի շուկայի աճը և մասնավոր հատվածի վարկավորումը խթանելու նպատակով ոչ ռեզիդենտներից առաջինը Հայաստանում թողարկեց պարտատոմսեր ՀՀ դրամով՝ 2 մլրդ (շուրջ 5 մլն ԱՄՆ դոլար) ընդհանուր ծավալով: Սա ՄՖԿ-ի առաջին թողարկումն է Հայաստանի ազգային արժույթով՝ միաժամանակ հանդիսանալով նաև Հայաստանում արտասահմանյան կորպորատիվ պարտատոմսերի առաջին թողարկումը:

Օգտվելով Հայաստանի կապիտալի շուկայի դրական տեղաշարժից՝ Ամերիաբանկը ձեռնամուխ եղավ իր գործունեության ներդրումաբանկային ուղղության ակտիվացմանը՝ փորձառու մասնագետների ջանքերով իրագործելով իր ողջ ներուժը և նպաստելով արժեթղթերի շուկայի բիզնես մշակույթի զարգացմանը:

Ապահովագրություն

Օրենսդրական բարեփոխումների, 2011թ. ԱՊՊԱ-ի ներդրման, պարտադիր բժշկական ապահովագրության ծածկույթի ընդլայնման շնորհիվ Հայաստանի ապահովագրական

ծառայությունների շուկան 2013թ. շարունակում էր գրանցել աճի բարձր տեմպեր:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ Հայաստանում արդեն ձևավորվել է ապահովագրական որոշակի մշակույթ, որը շարունակում է զարգանալ: Այստեղ մեծ ավանդ ունեն նաև ապահովագրական ընկերությունները, որոնք թիվը տարեվերջի դրությամբ կազմում էր 7: Մեր երկրում գործող ապահովագրական ընկերություններից ոչ մեկն առայժմ կյանքի ապահովագրություն տրամադրելու իրավունք չունի, քանի որ համաձայն ՀՀ «Ապահովագրության մասին» օրենքին՝ մինչև ընկերություն իրավունք չունի միաժամանակ տրամադրել կյանքի և ոչ կյանքի ապահովագրության ծառայություններ:

Հայաստանում մատուցվում են բժշկական ապահովագրության ծառայություններ, ԱՊՊԱ, ԿԱՍԿՈ, գույքի ապահովագրություն: 2014թ. նախատեսվում է փորձարկել գյուղատնտեսության ապահովագրության պիլոտյաին ծրագիր, 2015թ.՝ բժշկական ապահովագրությունը դարձնել պարտադիր: Այսօրվա դրությամբ ապահովագրական ծառայությունների շուկան Հայաստանում շատ փոքր է, իսկ ապահովագրավճարների մասնաբաժինը երկրի շՆԱ-ում չնչին է՝ 1%-ից էլ պակաս, մինչդեռ ըստ մասնագետների գնահատականների՝ ապահովագրական ծառայությունների շուկայի ողջ ներուժն ակտիվացնելուց հետո 7-8 տարվա ընթացքում ապահովագրավճարների մասնաբաժինը շՆԱ-ում կարող է հասնել 12%-ի:

Կենսաթոշակային բարեփոխումներ

Հայաստանի կապիտալի շուկայի զարգացումը խթանելու կարևոր նախադրյալ են կենսաթոշակային բարեփոխումները, որոնց կառավարությունը ձեռնամուխ էր եղել դեռ 4-5 տարի առաջ, մասնավորապես անցկացվում էին քննարկումներ շահագրգիռ

կողմերի, մասնագիտացված ֆինանսական հաստատությունների հետ:

Կենսաթոշակային բարեփոխումները մեկնարկեցին 2011թ. հունվարի 1-ին կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմամբ: 2014թ. հունվարի 1-ից կուտակային համակարգը դարձավ պարտադիր: Սակայն հաշվի առնելով այն դժգոհությունը, որը հասարակության շրջանում առաջացրեց պարտադիր բաղադրիչը՝ ՀՀ Սահմանադրական դատարանը կասեցրեց «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի որոշ դրույթների գործողությունը: Հետագայում որոշվեց օրենքում մի շարք փոփոխություններ մտցնել:

Մյուս կողմից, կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ուղղությամբ կատարված ողջ աշխատանքը նվազագույնի է հասցնում բոլոր հնարավոր ռիսկերը և ցնցումները:

Ակնկալվում է, որ կենսաթոշակային բարեփոխումները կխթանեն կապիտալի շուկայի իրացվելի գործիքների պահանջարկը: Կենսաթոշակային բարեփոխումների կարևոր բաղադրատարր են հանդիսանում ՀՀ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի փոփոխությունները, որոնց համաձայն բանկերը կարող են ստանալ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքով նախատեսված օպերատորի կարգավիճակ:

Հայաստանի շուկա արդեն մուտք են գործել հավատարմագրային կառավարման եվրոպական շուկայի մի քանի խոշոր մասնակիցներ, որոնք ունեն կառավարվող ակտիվների բավականին մեծածավալ պորտֆելներ:

Ըստ փորձագետների գնահատականի՝ կուտակային կենսաթոշակային համակարգի միջոցով դեպի ՀՀ ֆինանսական շուկա միջոցների ներհոսքը տարեկան կկազմի շուրջ 100-150 մլն ԱՄՆ դոլար:

> Բանկային հատված

ՀՀ բանկային հատվածն ավելի հեշտ հաղթահարեց ճգնաժամի հետևանքները, քան ԱՊՀ մյուս երկրները, մասամբ այն պատճառով, որ Հայաստանը համեմատաբար ավելի քիչ է ներգրավված համաշխարհային գործընթացներում: 2013թ. համաշխարհային տնտեսության և ֆինանսական հատվածի առջև ծառայած խնդիրներն աստիճանաբար գտնում էին իրենց լուծումները:

Միջազգային շուկաների ցնցումների պայմաններում (Կիպրոսի բանկային ճգնաժամ, օֆշորի դեմ պայքար, արժույթների մեծ մասի արժեզրկում ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ և այլն) Հայաստանի բանկային համակարգը պահպանում էր կայունությունը և արտաքին մարտահրավերներին դիմակայելու ունակությունը: Մասամբ սա բացատրվում է նրանով, որ հայկական բանկերը բավարար չափով ինտեգրված չեն միջազգային ֆինանսական գործընթացներին. մինչդեռ շատ երկրներում ի հայտ եկան իրացվելիության խնդիրներ, վստահության ճգնաժամ, և միայն

լայնածավալ պետական աջակցությունը թույլ տվեց խուսափել սնանկությունից, Հայաստանի բանկային համակարգը շարունակում էր ակտիվորեն միջոցներ ներգրավել միջազգային ֆինանսական հաստատություններից և բանկերից՝ դրանք երկրի տնտեսության մեջ ներդնելու համար: Ամրության կուտակված պաշարը, բարձր իրացվելիությունը, կայունության ամրապնդումը 2013թ. թույլ տվեցին ՀՀ բանկային համակարգին պահպանել զարգացման դրական դինամիկան: Հիմնական ցուցանիշների աճի հաշվին շարունակվեցին իրական և ֆինանսական հատվածների ինտեգրումը, բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակի աճը:

Ներկայում Հայաստանի բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը կազմում է 74.6%: Օտարերկրյա ներդրումներին զուգահեռ բանկերը ներդնում են նոր տեխնոլոգիաներ՝ միաժամանակ ձգտելով իրենց կորպորատիվ կառավարումը


համապատասխանեցնել միջազգային չափանիշներին: 2013թ. բանկային հատվածի առաջնահերթ խնդիրներից էր ֆինանսական ծառայությունների հասանելիության բարձրացումը տնտեսության իրական հատվածի համար, տնային տնտեսությունների խնայողությունների ներգրավումը տնտեսության վարկավորման մեջ: Ըստ ՀԲ վերջին հարցման արդյունքների, Հայաստանում տնային տնտեսությունների 66% ունի խնայողություններ, սակայն նրանց 6%-ն է միայն նախընտրում դրանք պահել բանկերում: Ռիսկերի արդյունավետ կառավարումը ևս բանկային հատվածի կարևոր խնդիրներից է: Հայաստանի բանկերի մեծամասնությունն այժմ ավելի ակտիվորեն է համագործակցում մանրածախ հաճախորդների հետ, հատկապես վարկավորման ուղղությամբ: Հաշվետու տարում բանկերն ակտիվացան նաև փոքր և միջին ձեռնարկատիրության վարկավորման ասպարեզում:

2013թ. տնտեսական աճի համեմատ բանկային համակարգի առաջանցիկ աճը հանգեցրեց բանկային միջնորդության մակարդակի աճին՝ աստիճանաբար մոտենալով որոշ արտասահմանյան երկրների:


Նախորդ տարվա համեմատ՝ բանկային համակարգի ակտիվների հարաբերակցությունը ՀՆԱ-ին աճեց 9.4 տոկոսային կետով՝ կազմելով 69.6%, տնտեսությանը տրամադրված վարկերի

և ՀՆԱ-ի հարաբերակցությունը՝ 3.75 տոկոսային կետով՝ կազմելով 41.8%, իսկ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներինը՝ 2.6 տոկոսային կետով՝ կազմելով 17.8%:

Բանկային համակարգի ակտիվները



Բանկային համակարգի ընդհանուր կապիտալը



2013թ. գրանցվեց հետևյալ աճը՝


- Բանկային համակարգի ակտիվներ՝ 22.8%-ով՝ մինչև գրեթե 7.3 մլրդ ԱՄՆ դոլարի համարժեքը

- Վարկեր՝ 16.6%-ով՝ մինչև 4.4 մլրդ ԱՄՆ դոլարի համարժեքը
- Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ՝ 30%-ով՝

մինչև գրեթե 4 մլրդ ԱՄՆ դոլարի համարժեքը

- Կապիտալ՝ 16.2%-ով՝ մինչև 1.2 մլրդ ԱՄՆ դոլարի համարժեքը

Տնտեսության վարկավորում և բնակչության ժամկետային ավանդները




2013թ. ընթացքում զգալի ռեսուրսներ ուղղվել են առևտրի, գյուղատնտեսության, վերամշակող արդյունաբերության և տնտեսության այլ ոլորտների ֆինանսավորմանը: Ֆիզիկական անձանց տրամադրված

վարկերի ընդհանուր ծավալը 2012թ. համեմատ աճեց 17.2%-ով: Հիփոթեքային վարկավորման ծավալն աճեց 12.4%-ով, սպառողական վարկերինը՝ 23.7%-ով: Իրավաբանական անձանց տրամադրված

վարկերի աճը դանդաղեց՝ կազմելով 7.4%՝ նախորդ տարվա 28.3%-ի համեմատ: Տարեվերջի դրությամբ բանկային համակարգի չաշխատող վարկերը կազմում էին ընդհանուր վարկային պորտֆելի 4.45%-ը:

Հայաստանի բանկային համակարգի վարկային պորտֆելի և չաշխատող վարկերի դինամիկան



Ըստ կանխատեսումների՝ 2013թ. Հայաստանի բանկային համակարգի աճը կտատանվի 18-25%-ի սահմաններում: 2013թ. շարունակվում էին քայլեր ձեռնարկվել 2011թ. սկսված՝ Բազել III չափանիշներին անցնելու ուղղությամբ: Արդեն մշակվել և ներդրվել են կապիտալի համարժեքության նոր չափանիշները: 2014թ. ակնկալվում է սկսել գործընթացի ավարտական փուլը: Քայլեր են ձեռնարկվում համակարգային տեսանկյունից նշանակալի բանկերի հայտնաբերման և վերահսկման սկզբունքների մշակման ուղղությամբ, ընթացքի մեջ է Բազել III-ով նախատեսված իրացվելիության նորմատիվների ներդրման նպատակահարմարության գնահատումը: Համակարգային տեսանկյունից նշանակալի բանկերի համար կսահմանվեն լրացուցիչ կապիտալի չափանիշներ և հսկողության առավել խիստ պահանջներ: Նարկ է նշել,

որ Բազել III-ի որոշ պահանջներ (լներիջի և պահուստավորման սահմանափակում) ենթադրում են օրենսդրական փոփոխություններ, որոնք ակնկալվում է մտցնել 2014թ. ընթացքում: 2013թ. ՀՀ բանկային համակարգն ապահովել էր կապիտալի համարժեքության և իրացվելիության բավարար ցուցանիշներ: Մասնավորապես, տարեվերջի դրությամբ կապիտալի համարժեքության միջին ցուցանիշը կազմում էր 16.7% այն պարագայում, երբ նվազագույն պահանջը 12% է: ՀՀ ԿԲ-ն բանկերի համար Բազել II-ի համեմատ սահմանել է կապիտալի ավելի խիստ նորմատիվներ, ինչը թույլ կտա առավել սահուն դարձնել Բազել III-ին անցնելու գործընթացը: Բանկային համակարգի իրացվելիության առկա մակարդակն իր հերթին կհեշտացնի անցումը իրացվելիության նոր չափանիշներին.

• 2013թ. վերջում ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշները կազմում էին համապատասխանաբար 29% և 142% այն պարագայում, երբ ՀՀ ԿԲ նվազագույն նորմատիվները կազմում են 15% և 60%: Բանկային համակարգի լներիջը կազմում է գրեթե 16%, որն ավելի քան քառակի գերազանցում է Բազել III-ի նվազագույն պահանջը: ՀՀ բանկերի առջև ծառայած նոր մարտահրավերները, արտաքին մրցակցային միջավայրի զարգացումը առաջատար դիրքերի ձգտելու ևս մի խթան են: Այս պայմաններում Լմերիաբանկը մտադիր է ապահովել բոլոր հիմնական ցուցանիշների առաջանցիկ աճ, շարունակել նորամուծական պրոդուկտների և ծառայությունների ներդրումը, զարգացնել բանկային տեխնոլոգիաները՝ ձգտելով լավագույն միջազգային չափանիշներին:


> Ամերիաբանկը ՀՀ բանկային համակարգում

2013թ. Ամերիաբանկը շարունակում էր դինամիկ զարգացումն իր ռազմավարության համաձայն:
Ջբաղեցնելով առաջատարի կայուն դիրքեր՝ Բանկը շարունակում էր հետամուտ լինել իր ռազմավարական ուղղությանը՝ մանրածախ բանկային գործունեության, փոքր և միջին ձեռնարկատերերի հետ համագործակցության ընդլայնմանը: Բանկի հիմնական ցուցանիշները վկայում են աճի կայուն տեմպերի մասին, սակայն տարեցտարի թեժացող մրցակցության պայմաններում շատ բանկեր (հատկապես պակաս ակտիվները) որդեգրում են ագրեսիվ զարգացման ռազմավարություն:


Այս իսկ պատճառով որոշ ցուցանիշներով համակարգի ընդհանուր աճի տեմպերն առաջ անցան Ամերիաբանկից: Սակայն չնայած արտաքին բոլոր գործոններին՝ Ամերիաբանկը հավատարիմ է մնում իր ռազմավարությանը և իր առջև դրված նպատակների իրագործմանը՝ շեշտը դնելով ոչ այնքան լայնածավալ աճի, որքան սպասարկման որակի և ռիսկերի նվազեցման վրա:
• 2013թ. ՀՀ բանկային համակարգի ակտիվներն ավելացան 22.8%-ով, Ամերիաբանկինը՝ 28.6%-ով: Ամերիաբանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում կազմեց 10.7%՝ 2012թ. 10.2%-ի համեմատ:

◦ 2013թ. արդյունքներով Բանկն այս ցուցանիշով առաջին անգամ զբաղեցրեց ՀՀ բանկային համակարգի առաջատարի դիրքը:
• 2013թ. ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալն աճեց 16.2%-ով, Ամերիաբանկինը՝ 5.3%-ով: Բանկերի կապիտալի աճն ապահովվեց կանոնադրական կապիտալի՝ 4.7% (3 բանկեր ավելացրին իրենց կանոնադրական կապիտալը) և շահույթի՝ 13% աճի հաշվին:
◦ Ընդհանուր կապիտալով Ամերիաբանկի մասնաբաժինը կազմում է 8.2%. այս ցուցանիշով Բանկը պահպանում է 4-րդ դիրքը:


Ամերիաբանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում ըստ ակտիվների



Ամերիաբանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում ըստ կապիտալի



Ամերիաբանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում ըստ վարկավորման ծավալների




• 2013թ. ՀՀ բանկային համակարգի վարկային պորտֆելն ավելացավ 16.6%-ով, 20.5%-ով ավելացան Ամերիաբանկի կողմից տնտեսության վարկավորման ծավալները: Ամերիաբանկի վարկային պորտֆելի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում կազմեց 9.96%:

Ամերիաբանկի դինամիկ զարգացումը ենթադրում է նախ և առաջ որակ, կայունություն, հետևաբար՝ վստահելիություն բաժնետերերի, հաճախորդների և գործընկերների համար, որն էլ կօգնի ավելացնել շուկայի մասնաբաժինը: Բանկի վարկային պորտֆելի որակը

շարունակում է մնալ մեր վարկային քաղաքականության առանցքային բաղադրիչներից մեկը՝ անկախ շուկայական իրավիճակից: Դրա շնորհիվ է, որ մեր չաշխատող վարկերի մասնաբաժինն ամենափոքրերից է շուկայում՝ 1.8%:

ՀՀ բանկային համակարգի և Ամերիաբանկի դասակարգված վարկերի դինամիկան, %




Ենթակառուցվածքի ընդլայնումը, տեխնոլոգիական բազան, միջոցների շահավետ տեղաբաշխման մատչելիությունը հանդիսանում են Ամերիաբանկի վարկավորման ծավալի և ռեսուրսային բազայի ընդլայնման գրավական: 2013թ. բանկերի, այդ թվում՝ Ամերիաբանկի ռեսուրսային բազայի աճի արագացմանը նպաստեց ինչպես միջազգային ֆինանսական կազմակերպություններից

Նոր միջոցների, այնպես էլ ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային և ցպահանջ ավանդների ներգրավումը:

- 2013թ. ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ավանդներն աճեցին 30%-ով, իսկ Ամերիաբանկի ավանդները՝ 34.6%-ով:
 - Ըստ հաճախորդներից ներգրավված միջոցների Բանկի մասնաբաժինը կազմեց 10.49%:

◦ Առաջին անգամ այս ցուցանիշով բանկն զբաղեցրեց 1-ին դիրքը: Ինչ վերաբերում է շահույթին, չնայած դրամային արտահայտությամբ բանկի շահույթի աճն աննշան էր, բանկն, այնուամենայնիվ, մտավ առաջատարների եռյակ՝ շուկայի 12.6% մասնաբաժնով: Ակտիվների և կապիտալի եկամտաբերության ցուցանիշները գերազանցում են միջին բանկային ցուցանիշը:

Ամերիաբանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում ըստ ներգրավված ավանդների



— Նաճախորդների միջոցները բանկային համակարգում, մլն ԱՄՆ դոլար ■ Ամերիաբանկի մասնաբաժինը, %

ԲԱՆԿԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ




> Աճի հիմնական ցուցանիշները

2013թ. Ամերիաբանկի ակտիվներն աճեցին 28.6%-ով՝ առաջին անգամ ապահովելով 1-ին դիրքը ՀՀ բանկային համակարգում: 21 բանկերի շարքում Ամերիաբանկն զբաղեցնում է 2-րդ դիրքն ըստ կանոնադրական կապիտալի (63 մլն ԱՄՆ


դոլարին համարժեք գումար)՝ մնալով երկրի ամենակապիտալացված բանկերից մեկը: 2013թ. Բանկն ապահովեց ընդհանուր կապիտալի 5.5%-ով աճ շահույթի հաշվին: Հաշվետու տարվա արդյունքներով Բանկի շահույթը կազմեց 6.1 մլրդ. ՀՀ դրամ կամ 15 մլն ԱՄՆ

դոլար: Այս ցուցանիշով Բանկն զբաղեցնում է 3-րդ դիրքը ՀՀ բանկային համակարգում: 2013թ. Բանկի ընդհանուր կապիտալը կազմեց 38.8 մլրդ. ՀՀ դրամ կամ 95.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ կուտակված շահույթը՝ 12.8 մլրդ. ՀՀ դրամ կամ 32 մլն ԱՄՆ դոլար:


Բանկի ակտիվների դինամիկան, հազ. ԱՄՆ դոլար



Բանկի պարտավորությունների դինամիկան, հազ. ԱՄՆ դոլար



Բանկի՝ հարկումից հետո շահույթի դինամիկան, հազ. ԱՄՆ դոլար





Գևորգ Թառումյան, ֆինանսական գծով տնօրեն, գլխավոր տնօրենի տեղակալ

Այլոց ազատությունը չխախտելու համար կան ընդհանուր սկզբունքներ, որոնց պետք է հետևել: Դրանցից մեկն է պատասխանատվությունը՝ ընտանիքի, աշխատակիցների, ընկերների առջև: Մարդու ազատությունը չպետք է լինի մեկ ուրիշի ազատության հաշվին: Ազատություն ասելով՝ ես հասկանում եմ մարդու ներքին ազատությունը, ներդաշնակությունը՝ ինքդ քեզ և քեզ շրջապատող աշխարհի հետ: Իմ պատկերացմամբ՝ այդ ներդաշնակության լավագույն մարմնավորումը բնությունն է, կանաչ գույնը:

2013թ. Ամերիաբանկն արժանացավ մի շարք հեղինակավոր միջազգային կազմակերպությունների մրցանակներին և գնահատանքին:

Մասնավորապես, Բանկը ճանաչվեց Հայաստանում ֆակտորինգային ծառայություններ տրամադրող լավագույն բանկ Corporate Intl Magazine 2014 ամսագրի կողմից:



Բանկը նաև ճանաչվեց 2013թ. Հայաստանի լավագույն բանկ Financial Times-ի The Banker ամսագրի կողմից: The Banker-ի մրցանակը բանկային գործունեության բարձրագույն գնահատականն է: Այս տարի մրցանակին հավակնում էին 146 երկրների 483 կազմակերպություն:



Բանկը նաև արժանացավ Համաշխարհային բանկի խմբի անդամ ՄՖԿ-ի «Առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում էներգախնայողության ապահովման տեսանկյունից Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում տարվա լավագույն թողարկող բանկ» մրցանակին:



European Bank
for Reconstruction and Development

2012թ. ՎԶԵԲ-ը ճանաչել էր Ամերիաբանկը Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում ամենաակտիվ թողարկող բանկ:



2013թ. Բանկն արժանացավ Global Finance-ի «Տարվա լավագույն բանկ» մրցանակին:



Դեկտեմբերին Global Finance-ն Ամերիաբանկը ճանաչեց արտարժույթ փոխանակող լավագույն բանկը:



Նույն ամսվա ընթացքում Global Finance-ը նաև ճանաչեց բանկը Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում լավագույն բանկը:



2013թ. Բանկը նաև արժանացավ Global Finance-ի «Լավագույն ենթապահառու բանկ» մրցանակին:



Գոհար Խաչատրյան, գլխավոր հաշվապահ

Ազատությունը գործելու ազատությունն է, անձայրածիր հորիզոնը: Ազատություն ասելին ես պատկերացնում եմ ծով: Դրան արժանի լինելու համար պետք է որոշակի ճանապարհ անցնել: Ազատության ձգտելու կամքը պետք է դաստիարակել մանկուց՝ երեխաներին հնարավորություն տալ ինքնուրույն ընտրելու իրենց հագուստը, լսելու այն երաժշտությունը, որն իրենց դուր է գալիս: Ինձ համար ազատ մարդու մարմնավորումը միշտ եղել է հայրս՝ մի մարդ, որ երբեք չէր վախենում հասարակության կարծիքին՝ հակառակ գնայ, միշտ համարձակ որոշումներ էր կայացնում:


> Ակտիվային գործառնություններ

Հաշվետու տարվա ընթացքում բանկի ակտիվների կառուցվածքը ենթարկվեց որոշակի փոփոխությունների, որոնք նպաստեցին պորտֆելի բազմազանեցմանը և ռիսկերի նվազեցմանը՝

միաժամանակ պահպանելով եկամտաբերությունը: Բանկի ընդհանուր ակտիվներում վարկային ներդրումները կազմում էին 55.9% 2012թ. 59.6%-ի համեմատ:

Շարունակվում էր նաև վարկային պորտֆելի բազմազանեցումը, որի շնորհիվ վերջինս առավելագույն չափով պաշտպանված է զանազան ռիսկերից:

Ամերիաբանկի ակտիվների կառուցվածքը 2013թ. վերջի դրությամբ




Վարկավորում

2013թ. Բանկի վարկային պորտֆելի աճը կազմեց 20.5%՝ 2012թ. 7.1%-ի համեմատ: Հաշվետու ժամանակահատվածում Բանկի վարկային քաղաքականությունն ուղղված էր փոքր և միջին ձեռնարկությունների, անհատ ձեռներեցների հետ համագործակցության, ֆիզիկական անձանց վարկավորման ընդլայնմանը: Մանրածախ գործառնությունների ընդլայնումը, և միաժամանակ, ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներ ներկայացնող կորպորատիվ հաճախորդների հետ երկարաժամկետ գործընկերական հարաբերությունների պահպանումը գործունեության ունիվերսալացման ռազմավարության շրջանակներում Բանկի վարկային քաղաքականության հիմնական չափորոշիչներն են, ընդ որում բանկի նպատակը ոչ միայն

ֆիզիկական անձանց վարկավորման աճն է, այլև՝ նրանց ձեռնարկատիրական գործունեության խրախուսումը: Այս նպատակով Բանկն առաջարկում է այնպիսի մանրածախ պրոդուկտներ, ինչպիսիք են ֆիզիկական անձանց համար նախատեսված բիզնես վարկերը, բիզնեսի մանրածախ վարկավորումը (միկրո և փոքր ձեռնարկություններին տրամադրվող վարկերը): Միաժամանակ Բանկը շարունակում է համագործակցել խոշոր ընկերությունների, փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների հետ՝ աջակցելով նրանց զարգացման, գործունեության ընդլայնման ընթացքում և դրանով իսկ իր ավանդը թողնելով երկրի տնտեսության զարգացման գործում: Իր վարկային քաղաքականության մեջ Բանկը շարունակում է հավատարիմ

մնալ վարկառուների ընտրության խիստ չափանիշներին՝ մենք համագործակցում ենք թափանցիկ հաշվետվողականություն և դրական վարկային պատմություն ունեցող ընկերությունների հետ, որոնք ներկայացնում են Հայաստանի տնտեսության առավել դինամիկորեն զարգացող ոլորտները: Բանկը մեծ ուշադրություն է դարձնում վարկային պորտֆելի բազմազանեցմանն ըստ տնտեսության ճյուղերի և հաճախորդների: Արդյունքում Բանկի վարկային պորտֆելի ճյուղային կառուցվածքը բավականաչափ բազմազանեցված է և ունի կենտրոնացման ցածր մակարդակ: Բանկը ֆինանսավորում է տնտեսության դինամիկ և խոստումնալից ճյուղերը՝ վերականգնվող էներգետիկան, վերամշակող արդյունաբերությունը, առևտուրը և այլն:

Ամերիաբանկի վարկային պորտֆելի ճյուղային կառուցվածքը



Շնորհիվ արդյունավետ վարկային քաղաքականության 2013թ. Բանկի տոկոսային եկամուտը վարկային գործառնություններից կազմեց 19.4 մլրդ ՀՀ դրամ կամ 47.4 մլն ԱՄՆ դոլար` 2012թ. 17.6 մլրդ դրամի կամ 43.6 մլն դոլարի համեմատ:

Ներդրումներ արժեթղթերում

2013թ., ինչպես և Նախորդ տարիներին, հաշվի առնելով միջազգային ֆինանսական շուկաների անկայունությունը և պարտքի հետ կապված խնդիրները, Ամերիաբանկը շարունակում էր ձեռնպահ մնալ օտարերկրյա թողարկողների արժեթղթերի հետ ակտիվ գործառնություններից: Տեղական շուկայում ամենազարգացածը

պետական պարտատոմսերի հատվածն է, որը գործնականում զերծ է որևէ ռիսկերից` ապահովելով նաև եկամտային բազա: Ամերիաբանկն ակտիվ գործունեություն է ծավալում պետական պարտատոմսերի շուկայում` հանդիսանալով ՀՀ պետական պարտքի սպասարկման գործակալ: Բանկը նաև ունի ՀՀ պետական միջնաժամկետ և երկարաժամկետ գանձապետական

արժեկտրոնային պարտատոմսերի շուկայում պետական գործակալի կարգավիճակ: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտատոմսերում ներդրումների ընդհանուր ծավալը գերազանցում էր 13,5 մլրդ ՀՀ դրամը կամ 33,5 մլն ԱՄՆ դոլարը` 2012թ. 13,1 մլրդ ՀՀ դրամի համեմատ:


> Ռեսուրսների բազա

2013թ. Ամերիաբանկը շարունակում էր ընդլայնել իր ռեսուրսային բազան, որի աճը հիմնականում ապահովվում էր հաճախորդների ավանդների հաշվին (34.6%):

Տնտեսության իրական հատվածի վարկավորման ընդլայնմանը նպաստեց նաև ակտիվ համագործակցությունը միջազգային ֆինանսական

կազմակերպությունների հետ, որոնցից ներգրավված միջոցները 2013թ. վերջին կազմեցին 130 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

Ամերիաբանկի պարտավորությունների կառուցվածքը 2013թ. վերջի դրությամբ




- Հաճախորդների ավանդների ընդհանուր ծավալն աճեց ավելի քան 105 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 419 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար:
- Հաճախորդների հանդեպ պարտավորությունների կառուցվածքը ենթարկվեց որոշակի փոփոխությունների: Հաշվետու տարվա վերջի դրությամբ 63.8%-ը


- կազմում էին ժամկետային ավանդները՝ նախորդ տարվա 66.6%-ի համեմատ:
- Ընդհանուր ավանդների 51.6%-ը կազմում են կորպորատիվ, 48.4%-ը՝ մանրածախ ավանդները:
 - Ֆիզիկական անձանց ավանդների ծավալն աճեց 44%-ով՝ կազմելով 82.3 մլրդ ՀՀ դրամ կամ 203 մլն ԱՄՆ դոլար, ընդ որում

- ժամկետային ավանդները կազմում են 167, իսկ ցայահանջ ավանդները՝ 35.8 մլն ԱՄՆ դոլար:
- Կորպորատիվ ավանդներն աճեցին 26.8%-ով՝ կազմելով 87.6 մլրդ ՀՀ դրամ կամ 216 մլն ԱՄՆ դոլար, ընդ որում ժամկետային ավանդները կազմում են 100 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

Հաճախորդների հանդեպ պարտավորությունների կառուցվածքը, հազ. ԱՄՆ դոլար



Հաճախորդների հանդեպ պարտավորությունները, հազ. ԱՄՆ դոլար





Բուրաստան Մովսիսյան, տեխնոլոգիաների և ծառայությունների գծով տնօրեն

Ինձ համար ազատությունը, նախ և առաջ, ընտրության ազատությունն է: Մասնագիտության, ընկերների, երաժշտության, անձնական կյանքի... Սակայն ազատությունն ամենաթողություն չէ՝ այլապես այն կարող է վատ հետևանքներ ունենալ: Ազատությունը ներդաշնակության ներքին զգացումն է, որի մասին խորհելիս ես պատկերացնում եմ լեռներ ու ջինջ կապույտ երկինք:



> Տեխնոլոգիաներ և ենթակառուցվածք

Ամերիաբանկը միշտ դիտում է նորամուծությունները որպես զարգացման շարժիչ ուժ: Նորարարությունն ի սկզբանե ընկած է Բանկի առաքելության հիմքում: Այս առումով առաջադեմ տեխնոլոգիաների կիրառումը Բանկի համար էլ ավելի արդիական է դարձել, հատկապես եթե հաշվի առնենք օրեցօր թեժացող մրցակցությունը և գլոբալացումը: Ամերիաբանկի նորարարական քաղաքականությունները հիմնված են հետևյալ երեք սկզբունքների վրա.

- Համապատասխանություն ռազմավարությանը՝ նորարարական ընդհանուր քաղաքականությունը և առանձին նախագծերը պետք է ուղղված լինեն ընդունված ռազմավարության իրականացմանը և Բանկի հետագա զարգացման հենքերի ստեղծմանը:
 - Ուղղվածություն դեպի միջազգային լավագույն փորձ և առաջադեմ տեխնոլոգիաներ
 - Հաճախորդին ուղղված մոտեցում, որը եղել և մնում է Բանկի մրցակցային հաջողության գրավականը
- Հավատարիմ մնալով այս երեք սկզբունքներին՝ Ամերիաբանկը կարողանում է մշակել

և իրագործել այնպիսի նորարարական քաղաքականություն, որի շնորհիվ Հայաստանի բանկային համակարգում մշտապես զբաղեցնում է առաջատարի դիրքեր:

SS ենթակառուցվածք

Շնորհիվ ենթակառուցվածքի կառավարման հստակ մեխանիզմի Ամերիաբանկում լիարժեքորեն գործում են բոլոր տեղեկատվական և տեխնոլոգիական համակարգերը:

- 2013թ. Բանկը ստացավ VISA ինտերնետ-էքվայրինգի լիցենզիա:
- Բանկի մշակած վիրտուալ POS-տերմինալը թույլ է տալիս առևտրի և սպասարկման կետերին առցանց ընդունել վճարումներ VISA, Master Card և ArCa քարտերով:
- Մշակվեց բարեգործական նվիրատվությունների կայքէջ՝ <http://csr.ameriagroup.am/>, որի միջոցով բոլոր ցանկացողները կարող են երեխաների բուժման համար փոխանցում կատարել հատուկ բարեգործական հաշվին:
- Կառավարման տեղեկատվական համակարգի կատարելագործման, աշխատանքային միջավայրի և ստորաբաժանումների միջև համագործակցության

բարելավման նպատակով 2013թ. ավարտվեց Բանկի ինտրանետ-պորտալի ներդրման առաջին փուլը:

Մասնաճյուղերի ցանցի ընդլայնում

2013թ. Ամերիաբանկի մասնաճյուղերի ցանցը համալրվեց ևս մեկով՝ Երևանում բացվեց «Սայաթ-Նովա» մասնաճյուղը, որը տրամադրում է բանկային ծառայությունների ամբողջական փաթեթ: Այսպիսով, 2013թ. վերջի դրությամբ Բանկն ուներ 9 գործող մասնաճյուղ: Բոլոր մասնաճյուղերի և գլխամասի միջև կապն ապահովվում է առցանց ռեժիմով՝ թույլ տալով Բանկի հաճախորդներին սպասարկվել ցանկացած մասնաճյուղում՝ անկախ նրանից, թե որ մասնաճյուղում են հաշիվ բացել: Մասնաճյուղերի ցանցի զարգացմանը զուգընթաց Բանկը նաև ընդլայնում և բարելավում է իր բանկոմատների ցանցը, որը հանդիսանում է ենթակառուցվածքի անբաժանելի մաս: 2013թ. վերջի դրությամբ տեղադրված բանկոմատների ընդհանուր թիվը կազմում էր 92, իսկ միայն առևտրի և սպասարկման կետերում տեղադրված POS-տերմինալներինը՝ 674:



Արթուր Նամբարձումյան, Ինովացիաների և որակի բաժնի ղեկավար

Մարդը կարող է ազատ լինել կյանքում ցանկացած իրավիճակում՝ անկախ ֆինանսական կամ կենցաղային հանգամանքներից: Ահա ինչու ինձ համար ազատության ոչ թե խորհրդանիշ, այլ ես կասեի մարմնավորում է հանդիսանում մարդու ուղեղը: Այն ճիշտ օգտագործելու դեպքում կարելի է ելք գտնել ցանկացած, անգամ անելանելի թվացող իրավիճակից:

> Հաճախորդներ և նոր պրոդուկտներ

2013թ. ծառայությունների փաթեթի ընդլայնմանը զուգընթաց աճում էր նաև Բանկի հաճախորդների բազան:

- Հաշվետու տարում Բանկի ակտիվ մանրածախ հաճախորդների քանակն ավելացավ 11%-ով` կազմելով 47 հազար:
 - Ակտիվ կորպորատիվ հաճախորդների թիվն ավելացավ 406-ով` կազմելով 2738:
 - ՀՀ 100 խոշորագույն հարկատուներից 54-ը Բանկի հաճախորդ են:
- 2013թ. շուկային ներկայացված նոր ծառայություններից և պրոդուկտներից կարելի է առանձնացնել հետևյալը.
- «Ամերիա» ավանդ, որը միավորում է նախկինում առաջարկվող բոլոր ավանդների առավելությունները` միաժամանակ ընձեռելով ձեր ավանդը ձեր պայմաններով կառուցելու հնարավորություն:
 - Համատեղ քարտ «Յուբոմ» ընկերության հետ, որով տրամադրվում է մինչև 400,000

ՀՀ դրամ սահմանաչափով վարկային գիծ` 6% տարեկան տոկոսադրույքով` Zigzag, Aray, Technolife, Fine, Vega խանութներից կենցաղային տեխնիկա գնելու համար:

- Վերանայված ՓՄՁ վարկային պրոդուկտներ` ավելի շահավետ պայմաններով. շեշտը դրվում է վարկավորման արագ և պարզեցված ընթացակարգի վրա` ճկուն պայմաններով` հաշվի առնելով բիզնեսի առանձնահատկությունները և հաճախորդի կարիքները:
- Միջազգային ֆակտորինգի ծառայություններ. 2013թ-ից բանկը հանդիսանում է «Ֆակտորս Չեյն Ինթերնեշնլ» միջազգային ֆակտորինգային միության անդամ:
- «Ամերիա Փարթներ» փաթեթ բարձրակարգ հաճախորդների համար: «Ամերիա Փարթներ»-ը հատուկ կարգավիճակ է, որը շնորհվում է Ամերիաբանկի սակավաթիվ ընտրված

հաճախորդներին` հաշվի առնելով նրանց գործունեության բնույթը, ակտիվները և եկամուտը: Այս բացառիկ փաթեթի բոլոր արտոնություններն ընտրվել են առանձնահատուկ բժայնդությամբ` նշված հաճախորդների կյանքի բոլոր ոլորտներն ընդգրկելու համար:

- Պահառուական ծառայությունների ամբողջական տեսականի. Կենտրոնական դեպոզիտարիայում ռեեստրի վարում: 2013թ. Բանկն ստացավ Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի օպերատորի կարգավիճակ:
- 2013թ. Բանկը թողարկեց 19.1 հազար նոր քարտ, այդ թվում` 12.3 հազար VISA, 2 հազար MasterCard և 4.8 հազար ArCa քարտ: Այսպիսով, Բանկի թողարկած քարտերի ընդհանուր թիվը կազմեց` VISA` ավելի քան 34 հազար, MasterCard` ավելի քան 7.3 հազար, ArCa` ավելի քան 9.7 հազար:



ԿՈՐՊՈՐԱՏԻՎ
ԲԱՆԿԱՅԻՆ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2013թ. տնտեսության վերականգնման և բանկերի ակտիվացման պայմաններում թեժացավ մրցակցությունը ՀՀ կորպորատիվ վարկավորման շուկայում, այդ թվում՝ ըստ տնտեսության ճյուղերի: Ավելին, բանկերը նաև սկսեցին ավելի ակտիվորեն համագործակցել փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների հետ:

Հաշվետու տարվա ընթացքում Ամերիաբանկին հաջողվեց 30%-ով ընդլայնել կորպորատիվ հաճախորդների բազան՝ այն հասցնելով 4171 հաճախորդի՝ տարեսկզբի 3208-ի համեմատ:

Առհասարակ, կորպորատիվ բանկային ծառայությունների շուկայում Ամերիաբանկն ունի վստահելի ռազմավարական գործընկերոջ համբավ: Մենք առանձնանում ենք նրանով, որ ոչ միայն տրամադրում ենք ֆինանսական խորհրդատվություն, այլև ցուցաբերում ենք անհատական մոտեցում և օգնում յուրաքանչյուր հաճախորդին գտնել իր համար լավագույն լուծումը:


Մենք որդեգրել ենք կորպորատիվ հաճախորդների հետ համագործակցության հետևյալ սկզբունքները՝

- Անհատական մոտեցում


- Սպասարկման բարձր որակ
- Գործընկերական հարաբերություններ, ֆինանսական խորհրդատվություն
- Աջակցություն հաճախորդների աճին և թափանցիկության ապահովմանը
- Նպատակային ծրագրային միջոցների հասանելիություն

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական անձանց ընդհանուր ավանդները կազմում էին 215,975 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք գումար, ընդ որում դրա 53.71%-ը կամ 116.01 մլն ԱՄՆ դոլարը կազմում էին ընթացիկ հաշիվները:

Ամերիաբանկի ընդհանուր պարտավորությունները կորպորատիվ հաճախորդների նկատմամբ, հազ. ԱՄՆ դոլար



Ամերիաբանկի պարտավորությունները կորպորատիվ հաճախորդների նկատմամբ 2013թ., հազ. ԱՄՆ դոլար



Գնալով աճում է այն կազմակերպությունների թիվը, որոնք, ստանալով Ամերիաբանկի վարկ և կատարելով գործարքներ բանկի միջոցով, սկսում են նախընտրել իրենց ժամկետային ավանդը ներդնել Ամերիաբանկում:

2013թ. կորպորատիվ ժամկետային ավանդներն աճեցին գրեթե 8.7%-ով՝ կազմելով 99.9 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար:



Գագիկ Սահակյան, կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն

Ինձ համար ազատությունը վերացական բան է: Ես սիրում եմ ճանապարհորդել և յուրաքանչյուր ուղևորության ժամանակ փորձում եմ հասնել առավելագույն ազատության: Պատասխանատվությունը պետք է տարրալուծել նման վերացարկմամբ: Այդ իսկ պատճառով ազատության խորհրդանիշն ինձ համար դեպի վեր սլացող օդանավն է:

> Բիզնեսի վարկավորում


Խոշոր ընկերություններին և փոքր ու միջին ձեռնարկություններին տրամադրված վարկերը կազմում են Ամերիաբանկի ընդհանուր վարկային պորտֆելի 81.6%-ը: 2013թ. Բանկի կորպորատիվ վարկային պորտֆելը շարունակում էր աճել՝ տարեվերջին հասնելով 344,559 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք գումարի (ներառյալ վարկային գծերը, օվերդրաֆտները, բայց չհաշված լիզինգը և ֆակտորինգը), ընդ որում 75.9%-ը բաժին է ընկնում խոշոր ձեռնարկություններին տրամադրված վարկերին: Միաժամանակ Բանկը շարունակում էր վարկային պորտֆելի բազմազանեցման քաղաքականությունը՝ ընդլայնելով համա-

գործակցությունը փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների հետ, որոնք հանդիսանում են ՀՀ տնտեսության շարժիչ ուժը և կարևոր դեր են խաղում երկրի կայուն զարգացման գործում՝ ապահովելով ՀՆԱ-ի 42-43%-ը: Շնորհիվ Բանկի վարած արդյունավետ բանակցությունների և խորհրդատվության՝ մի շարք հաճախորդներ արդեն վարկային պրոդուկտների փոխարեն նախընտրում են օգտվել առևտրի ֆինանսավորման ծառայություններից: Փոքր և միջին բիզնեսի վարկավորման ցուցանիշներով Բանկն առայժմ առաջատարների թվում չէ՝ զբաղեցնելով միջին դիրք: Սա պայմանավորված


է նրանով, որ սկզբնապես Բանկի ռազմավարական ուղղություններն էին խոշոր կորպորատիվ ձեռնարկությունների ֆինանսավորումը և ներդրումաբանկային գործառնությունները, և միայն 2010թ-ից Բանկն սկսեց ակտիվորեն համագործակցել նաև փոքր և միջին ձեռնարկությունների հետ, շնորհիվ ինչի 2013թ.՝

- ՓՄՁ վարկային պորտֆելն ավելացավ 58%-ով:
- ՓՄՁ վարկերի կշիռն ընդհանուր կորպորատիվ վարկային պորտֆելում հասավ 24.1%-ի:
- Բանկի վարկային պորտֆելն ավելի բազմազանեցվեց:

Փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրված վարկեր, հազ. ԱՄՆ դոլար



Ամերիաբանկի կորպորատիվ վարկային պորտֆելի կառուցվածքը 2013թ. վերջի դրությամբ



2013թ. Բանկը մտադիր էր ընդլայնել ՓՄՁ վարկավորումը՝ այն հասցնելով 140 մլն ԱՄՆ դոլարի:

2013թ. Բանկը չի դադարեցրել համագործակցությունը նաև երկրի խոշոր տնտեսվարող սուբյեկտների հետ, սակայն այս ոլորտում, ինչպես և 2012թ., ռազմավարությունն ուղղված էր ոչ այնքան պորտֆելի աճին,

որքան բազմազանեցմանը: 2013թ. վերջի դրությամբ խոշոր ընկերություններին տրամադրված վարկերը կազմում էին 261,552 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք գումար, և ներկայում շուկայի այս

հատվածում Ամերիաբանկն առաջատարն է: Խոշոր վարկերին բաժին է հասնում վարկային պորտֆելի 75.9%-ը` 2012թ. 81.77%-ի համեմատ: Խոշոր վարկերը Բանկը տրամադրում է հիմնականում սեփական միջոցների հաշվին:

Խոշոր ձեռնարկություններին տրամադրված վարկեր, հազ. ԱՄՆ դոլար



Ստորև ներկայացված են տվյալներ Բանկի կորպորատիվ վարկային պորտֆելի որակի մասին 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Վարկեր նախքան արժեզրկման մասհանումները	Արժեզրկման պահուստ	Վարկեր արժեզրկման մասհանումներից հետո	Արժեզրկման պահուստ/Վարկեր նախքան արժեզրկման մասհանումները, %
Կորպորատիվ հաճախորդներին տրամադրված վարկեր* (հազ. ԱՄՆ դոլար)				
Վարկեր առանց արժեզրկման անհատական հայտանիշների	256,113	512	255,601	0,2%
Արժեզրկված վարկեր	5,438	1,314	4,125	
Ընդամենը կորպորատիվ հաճախորդներին տրամադրված վարկեր	261,552	1,826	259,726	0,7%

*Առանց լիզինգի և ֆակտորինգի

Վարկային ռիսկի նվազեցման համար Բանկը մեծ ուշադրություն է դարձնում վարկերի ապահովությանը: 2013թ. Բանկը շարունակում էր ֆինանսավորել վերականգնվող էներգետիկայի

ոլորտը, որը ՓՄՁ-ների հետ միասին վարկավորման հիմնական ուղղություններից է: Այս ոլորտի ներկայացուցիչների հետ Բանկն ակտիվորեն համագործակցում է դեռևս 2009թ-ից: Շնորհիվ միջազգային

ֆինանսական կազմակերպություններից ներգրավված նպատակային միջոցների՝ 2013թ. վերջին էներգետիկայի ոլորտի վարկավորման ծավալը հասավ 36.3 մլն ԱՄՆ դոլարի:


> Լիզինգ

Հաշվետու տարում Ամերիաբանկի լիզինգային պորտֆելը կազմեց 2.7 մլրդ ՀՀ դրամ կամ 6.7 մլն ԱՄՆ դոլար: 2012թ. համեմատ հաճախորդների թիվն ավելացավ 42%-ով, իսկ լիզինգային գործառնությունների քանակը՝ 15%-ով, ընդ որում դրանց մեծամասնությունը բաժին է ընկնում ՓՄՁ հաճախորդներին, ինչը նպաստում է պորտֆելի բազմազանեցմանը:

2013թ. արդյունավետ էր տեխնիկայի, արդյունաբերական սարքավորումների և տրանսպորտային միջոցների արտասահմանյան արտադրողների/դիստրիբյուտորների հետ կապերի ամրապնդման առումով: Բանկը շարունակում է ակտիվորեն համագործակցել մատակարարների հետ գործընկերական համաձայնագրերի շրջանակներում կիրառելով առևտրի

ֆինանսավորման գործիքներ, որոնք թույլ են տալիս ապահովել հաճախորդների բարձրակարգ սպասարկում, նվազեցնել նրանց ծախսերը և ռիսկերը: Ամերիաբանկի լիզինգային պորտֆելը ներառում է շինարարության, սննդի արդյունաբերության, լեռնահանքային արդյունաբերության, առողջապահության, առևտրի և սպասարկման ոլորտները:

Ամերիաբանկի լիզինգային պորտֆելը, հազ. ԱՄՆ դոլար




> Ֆակտորինգ

2013թ. արդյունքներով Ամերիաբանկը Corporate Intl Magazine 2014 ամսագրի կողմից ճանաչվել է Հայաստանում ֆակտորինգային ծառայություններ տրամադրող լավագույն Բանկ: Հաշվետու տարվա վերջի դրությամբ Բանկի մասնաբաժինն ըստ ֆակտորինգային գործարքների կազմում էր շուկայի 47.3%-ը՝ ապահովելով առաջատարի դիրքը, ընդ որում բանկն զգալի աճ գրանցեց ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:


2013թ. հունվարից Բանկը հանդիսանում է միջազգային խոշորագույն ֆակտորինգային միության «Ֆակտորս Չեյն Ինթերնեշնլը»-ի անդամ, ինչը հաճախորդներին թույլ է տալիս գործարար կապեր հաստատել աշխարհի շուրջ 80 երկրների կազմակերպությունների հետ և դուրս գալ նոր շուկաներ: 2013թ. Ամերիաբանկի ֆակտորինգային գործառնությունների պորտֆելը շարունակում էր աճել:

- Մասնավորապես, Բանկին զիջված պարտավորությունների ծավալն ավելացավ շուրջ 2 անգամ՝ կազմելով 12.5 մլրդ ՀՀ դրամ կամ 30.7 մլն ԱՄՆ դոլար՝ 2012թ. 6.8 մլրդ դրամի (16.8 մլն դոլար) համեմատ:
- Տարվա արդյունքներով Բանկի ակտիվ ֆակտորինգային պորտֆելը կազմում էր 3.57 մլրդ ՀՀ դրամ կամ 8.81 մլն ԱՄՆ դոլար՝ արձանագրելով կրկնակի աճ (2012թ. 1.68 մլրդ ՀՀ դրամ կամ 4.19 մլն ԱՄՆ դոլար):

Ամերիաբանկի ֆակտորինգային պորտֆելը, հազ. ԱՄՆ դոլար



Ամերիաբանկի ֆակտորինգային պորտֆելի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի, 2013



Ֆակտորինգային գործարքների շրջանակներում Ամերիաբանկը համագործակցում է բոլոր խոշոր մանրածախ ցանցերի, արդյունաբերական ձեռնարկությունների և հանրային ծառայություններ մատուցող ընկերությունների հետ: 2013թ. ֆակտորինգային գործարքների 77%-ն իրականացվել է ներքին շուկայում, 23%-ը կազմում էին միջազգային

ֆակտորինգային գործարքները, ընդ որում բոլոր գործարքների 42%-ը բաժին է ընկնում ռեզրեստվ ֆակտորինգին, 58%-ը՝ առանց ռեզրեստի իրավունքի ֆակտորինգին: 2013թ. ֆակտորինգային գործունեության շրջանակներում Ամերիաբանկը ֆինանսավորումն ուղղում էր ներկրման և մեծածախ առևտրի, շինարարության, բեռնափոխադրման, արտադրության, էներգետիկայի և

սպասարկման ոլորտների զարգացմանը: Ամերիաբանկը առաջարկում է ֆակտորինգի ճկուն պայմաններ՝ չսահմանափակվելով ստանդարտ լուծումներով: Մենք ցուցաբերում ենք անհատական մոտեցում յուրաքանչյուր հաճախորդին՝ կիրառելով միջազգային լավագույն փորձը և հաճախորդին հնարավորություն ընձեռնելով լիարժեքորեն օգտվելու ֆակտորինգի բոլոր առավելություններից:



Սուրեն Քոչարյան, Առևտրի ֆինանսավորման վարչության ղեկավար

Ազատությունն այն վիճակն է, երբ ազատ շփվում ես, ազատ կատակում, ազատ մտածում, ազատ աշխատում և հանգստանում: Միաժամանակ ստիպված ես հավասարակշռություն պահպանել ներքին և արտաքին սահմանափակումների միջև: Ազատության ամենաուժեղ զգացումը ես ունենում եմ, երբ ձկնորսության եմ գնում, երբ միաձուլվում եմ բնությանը, անձայրածիր երկնքին և ջրին:

> Առևտրի ֆինանսավորում


Վճարային գործիքների և հատուկ (եսքրոու) հաշիվների բաժին

Շնորհիվ ակրեդիտիվների և բանկային երաշխիքների ակտիվ թողարկման և որակյալ սպասարկման՝ 2013թ. Բանկն արժանացավ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների մրցանակների: GLOBAL FINANCE-ն Ամերիաբանկը երկրորդ տարին անընդմեջ ճանաչել է Հայաստանում առևտրի ֆինանսավորման ոլորտում լավագույն Բանկ: Որպես ակրեդիտիվների և երաշխիքների թողարկման առաջատար Բանկը նաև արժանացել է ՎՋԵԲ-ի՝ «Հայաստանում ամենակապիվ թողարկող բանկ» մրցանակին՝ այնուհետև դառնալով առաջին հայկական բանկը, որն ստացավ ՎՋԵԲ-ի առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում հաստատող բանկի կարգավիճակ: 2013թ. Բանկը նաև երրորդ անգամ արժանացավ Կոմերցբանկի՝ առևտրի ֆինանսավորման ոլորտում գերազանցության մրցանակին՝ անթերի համագործակցության համար:


2013թ. Ամերիաբանկի համար նշանավորվեց Հայաստանի տնտեսությունում, մասնավորապես հեռահաղորդակցության, լեռնահանքային արդյունաբերության և մետաղաձուլության, գյուղատնտեսության (ջերմոցների ֆինանսավորում) ոլորտներում մի շարք կարևոր նախագծերով: Շնորհիվ ՄՖԿ-ից, ՎՋԵԲ-ից և մի շարք խոշոր առևտրային բանկերից ներգրավված միջոցների՝ բանկը թողարկում է ակրեդիտիվներ և ֆինանսավորում հաճախորդների արտահանման գործարքները շուկայականից ցածր տոկոսադրույքներով: Հաշվետու տարում Ամերիաբանկի կողմից թողարկված երաշխիքների քանակն ավելացավ 116%-ով, ակրեդիտիվներինը՝ 31%-ով: Ընդհանուր առմամբ, Բանկի կողմից թողարկված ակրեդիտիվների ծավալը 2013թ. կազմեց շուրջ 17.5 մլն ԱՄՆ դոլար, երաշխիքներինը՝ 16.6 մլն ԱՄՆ դոլար (23%-նոց աճ նախորդ տարվա համեմատ):

16%-ով ավելացավ արտահանման ակրեդիտիվների ծավալը՝ կազմելով 15.6 մլն ԱՄՆ դոլար: Արտահանումը խթանելու նպատակով Բանկն ակտիվորեն զեղչում և ֆինանսավորում էր արտահանման ակրեդիտիվները՝ ավելի քան 10 մլն ԱՄՆ դոլարի ծավալով: Ընդհանուր առմամբ, 2013թ. Բանկն ակտիվորեն ֆինանսավորում էր առևտուրն ինչպես վճարային գործիքների թողարկման և արտահանման գործառնությունների սպասարկման, այնպես էլ միջազգային բանկերից ռեսուրսների ներգրավման հաշվին հայրենական արտադրողների արտահանման և ներկրման գործառնությունների ուղղակի ֆինանսավորման միջոցով խոշորագույն: Մասնավորապես, Ամերիաբանկի համար միջազգային ֆինանսական կազմակերպությունների և առևտրային բանկերի կողմից բացված վարկային սահմանաչափերը 2013թ. գերազանցեցին 110 մլն ԱՄՆ դոլարը:

Բանկի կողմից թողարկված երաշխիքների և ակրեդիտիվների ծավալը, մլն ԱՄՆ դոլար



ՄԱՆՐԱԾԱԽ
ԲԱՆԿԱՅԻՆ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Մանրածախ բանկային գործառնություններն արդեն երրորդ տարին է, ինչ գտնվում են բանկի ուշադրության կենտրոնում՝ հանդիսանալով առաջնահերթ ռազմավարական ուղղություն: Մրցունակությունը բարձրացնելու և հաճախորդների համար առավելագույն հարմարություն ապահովելու նպատակով ամբողջովին վերանայվել են քարտերի տրամադրման և սպասարկման պայմանները և Բանկի ընդհանուր սակագները: 12 ամսվա ընթացքում Բանկի հաճախորդների բազան ավելացավ շուրջ 19.2%-ով: Մենք որդեգրել ենք անհատական համապարփակ մոտեցում յուրաքանչյուր հաճախորդին՝ լինի նա իրավաբանական, թե ֆիզիկական անձ:

Հաճախորդների համար առավելագույն հարմարություն և հասանելիություն ապահովելու համար Բանկը բացեց 1 նոր մասնաճյուղ՝

- Փետրվարին բացվեց «Սայաթ-Նովա» մասնաճյուղը:

Բարձր կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձ հաճախորդների ներգրավման և զարգացման նպատակով Բանկը ներդրեց նոր՝ «Ամերիա Փարթներ» փաթեթը, որը ներառում է գործընկերոջ կարգավիճակ ունեցող հաճախորդների համար հատուկ մշակված արտոնություններ, այդ թվում անհատական բարձրակարգ սպասարկում

Ամերիաբնակում, VISA Infinite քարտ՝ անսահմանափակ հնարավորություններով, օդանավակայաններում VIP սրահների հասանելիություն, էքսկլյուզիվ գնումներ բարձրակարգ խանութներում, ապահովագրության բացառիկ փաթեթ, շքեղ միջոցառումների կազմակերպում, անհատական սպասարկում Հայաստանի լավագույն ֆիթնես-կենտրոններից մեկում, ինչպես նաև «Ամերիա» ընկերությունների խմբի խորհրդատվական ծառայություններից օգտվելու հնարավորություն: 2013թ. շուրջ 50 հաճախորդներ ստացան «Գործընկեր» կարգավիճակ, տրամադրվեց 96 VISA Infinite քարտ: «Գործընկեր/Պրեմիում» կարգի ավանդների ընդհանուր ծավալն ավելացավ 90%-ով՝ 50 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 95 մլն ԱՄՆ դոլարի:



Արման Բարսեղյան, մանրածախ գործառնությունների գծով տնօրեն

Ազատությունն այն է, երբ մարդ ապրում, աշխատում և իր հանգիստը վայելում է իր ցանկություններին, կարիքներին և արժեքներին ներդաշնակ: Բայց ազատությունն էլ ունի սահմաններ: Այն ժամանակ, երբ մի մարդու ազատությունը հանգեցնում անարդարության մեկ ուրիշի հանդեպ, ոտնահարվում է այդ մարդու ազատությունը: Չեմ կարող վստահաբար պնդել, թե ունեմ ազատության սեփական խորհրդանիշ, սակայն գերազույն ազատության կրողն ինձ համար Քրիստոսն է, ով ապրեց այնպես, ինչպես ճիշտ էր համարում, և երբեք չուրացավ իր արժեքները:


> Մանրաձախ վարկավորում

Հաճախորդների բավարարվածությունն ապահովելու և սպասարկման որակը բարձրացնելու նպատակով Բանկը վերանայել է մանրաձախ վարկավորման գործընթացը: Մասնավորապես, նվազագույնի են հասցվել պահանջվող փաստաթղթերը և վարկային հայտի ուսումնասիրման ժամկետը: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ծավալը կազմում էր 77.6 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ ավելանալով 25.6%-ով: Տարեվերջի դրությամբ ֆիզիկական անձանց

տրամադրված բիզնես վարկերը կազմում էին ընդհանուր մանրաձախ վարկային պորտֆելի շուրջ 18.6%-ը: Հաճախորդների շրջանում մեծ պահանջարկ են վայելում պլաստիկ քարտերով տրամադրվող վարկերը, որոնք կազմում են ֆիզիկական անձանց ընդհանուր վարկային պորտֆելի 33.1%-ը: 2014թ. նախատեսվում է վերանայել ֆիզիկական անձանց վարկավորման պայմանները՝ ապահովելու համար այնպիսի պայմանների ճկունությունը, ինչպիսիք են տոկոսադրույքի ընտրությունը,

գրավը, մարման ժամանակացույցը, ապահովագրությունը և այլն: Բիզնես վարկավորման շրջանակներում մայիսից սեպտեմբեր անցկացվում էր «Պարզ և արագ» ակցիան, որի շրջանակներում հաճախորդները կարող էին վարկ ստանալ ամենասեղմ ժամկետներում՝ խուսափելով ավելորդ ծախսերից: Հոկտեմբերից դեկտեմբեր անցկացվում էր «Օ տոկոս մինչև տարեվերջ» ակցիան, որի շնորհիվ Բանկի ծառայություններն էլ ավելի գրավիչ դարձան հաճախորդների համար:

Ամերիաբանկի մանրաձախ վարկային պորտֆելի կառուցվածքը 2013թ.





Իրինա Աբրահամյան, Մանրածախ վարկավորման վարչության ղեկավար

Ազատությունը քո բոլոր ցանկություններն իրականացնելու հնարավորությունն է լինի դա աշխատավայրում, անձնական կյանքում, թե ընկերների շրջապատում: Ազատության իմ խորհրդանիշն առյուծն է. նա ուժեղ է, անկախ, ազատատենչությունը նկատելի է անգամ նրա վարքում:

Մանրածախ վարկավորման դինամիկան, հազ. ԱՄՆ դոլար

	2008	2009	2010	2011	2012	2013
Ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր	18,963	20,877	39,324	57,839	62,131	77,609
Հիփոթեքային վարկեր	5,604	5,486	14,480	19,198	22,972	25,270
Վարկային քարտեր	2,864	5,922	11,389	15,055	17,694	25,699
Բիզնես վարկեր	0	0	3,028	14,863	11,920	14,431
Ավտովարկեր	9,500	7,967	6,765	6,141	6,650	8,283
Սպառողական վարկեր	910	1,394	3,111	1,712	1,774	2,918
Այլ վարկեր	86	110	550	870	1,120	1,007
Արժեզրկման պահուստ	-	-259	-454	-677	-407	-513
ԸՆդամենը զուտ վարկեր	18,963	20,619	38,870	57,162	61,723	77,096

Ավտովարկավորում

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավտովարկերը կազմում էին ընդհանուր մանրածախ պորտֆելի 10.7%-ը (8.3 մլն ԱՄՆ դոլար): 2013թ. Բանկը համագործակցում էր 14 ավտոդիլերների հետ՝ այս առումով հանդիսանալով Հայաստանում ամենաակտիվ բանկերից մեկը: Բանկը վարկեր է տրամադրում ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային շուկաներում ավտոմեքենա ձեռք բերելու համար: Նվազագույն կանխավճարը կազ-


մում է 5%՝ կախված մի շարք պայմաններից, այդ թվում՝ հաճախորդի վարկունակությունից, ընդ որում վարկի նվազագույն և առավելագույն գումարի սահմանափակում չկա. այն հաշվարկվում է՝ հիմք ընդունելով վարկ/գրավ հարաբերակցությունը:

Հիփոթեքային վարկավորում

Հիփոթեքային վարկերը կազմում են ընդհանուր մանրածախ վարկային պորտֆելի 32.6%-ը: 2013թ. հիփոթեքային վարկերի ծավալն

ավելացավ 10.6%-ով՝ կազմելով 10.3 մլրդ ՀՀ դրամ կամ 25.3 մլն ԱՄՆ դոլար: Ընդհանուր առմամբ, 2013թ. տրամադրվել է 169 հիփոթեքային վարկ՝ 9.6 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով: Ամերիաբանկի հիփոթեքային վարկերի տեսականին մշակված է այնպես, որ յուրաքանչյուր հաճախորդ կարողանա ընտրել իր պահանջներին համապատասխանող պրոդուկտը: Մեր հիփոթեքային վարկերը եզակի են հայաստանյան շուկայում և վայելում են օրեցօր աճող պահանջարկ:

Ամերիաբանկի հիփոթեքային վարկային պորտֆելը, հազ. ԱՄՆ դոլար





Անդրանիկ Խաչատրյան, Բանկի երևանյան մասնաճյուղերի կառավարիչ

Ազատությունն այն չէ, որ կիսամերկ դուրս գաս փողոց և անես՝ ինչ մտքով անցնի: Իրապես ազատ եմ զգում այնժամ, երբ աշխատելիս ունեմ գործելու ազատություն: Իսկ կատարյալ ազատության զգացումը գալիս է, երբ ավարտում ես աշխատանքդ և հանգիստ խղճով գնում տուն՝ վայելելու այդ ազատության պտուղներն ընտանիքիդ հետ:

Մանրածախ վարկավորման ընդլայնմանը զուգընթաց Բանկը վարկավորման ողջ գործընթացը ենթարկում է խիստ մոնիթորինգի՝ ապահովելով վարկային պորտֆելի բարձր որակ: 2013թ.

ժամկետանց սպառողական վարկերի տեսակարար կշիռը չէր գերազանցում 1%-ը, ինչը շատ լավ ցուցանիշ է ՀՀ բանկային համակարգում: Մանրածախ վարկավորման արդյունավետության

բարձրացման և վարկային ռիսկերի նվազեցման նպատակով բանկը կիրառում է ոչ միայն սեփական, այլև «ԱՔՌ-Ա» վարկային գործակալության սքրինագային համակարգը:

Ստորև ներկայացվում են տվյալներ Ամերիաբանկի մանրածախ վարկային պորտֆելի որակի վերաբերյալ 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (հազ. ԱՄՆ դոլար):

31/12/13	Վարկերը նախքան արժեզրկման պահուստի հանումը	Արժեզրկման պահուստ	Վարկերը արժեզրկման պահուստի հանումից հետո	Պահուստի հարաբերակցությունը վարկերի գումարին մինչ պահուստի հանումը, %
Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր				
Ոչ ժամկետանց	75,882	443	75,439	0.6%
Ժամկետանց	1,726	70	1,656	4%
Ընդամենը մանրածախ հաճախորդներին տրամադրված վարկեր	77,609	513	77,096	0.7%

> Պլաստիկ քարտեր

Քարտային բիզնեսի ընդլայնումն Ամերիաբանկի առաջնային թիրախներից է: Միջնորդավճարների տեսանկյունից քարտերը եկամտի հիմնական աղբյուրն են. 2013թ. դրանցից ստացված միջնորդավճարները կազմում էին Բանկի ընդհանուր միջնորդավճարների 41.2%-ը (2012թ. 38.3%)՝ աճելով 14.52%-ով:

Քարտեր տրամադրելիս և սպասարկելիս Բանկը ձգտում է հաճախորդների համար ապահովել առավելագույն հարմարություն՝ նրանց ընձեռելով ծառայությունների ամբողջական փաթեթից օգտվելու հնարավորություն, մասնավորապես՝ շուրջօրյա ռեժիմում ինտերնետ-բանկինգի միջոցով դիտել բոլոր հաշիվները, ավանդները, վարկերը և գործառնությունները: 2013թ. Բանկի թողարկած քարտերի քանակն ավելացավ 31.1%-ով՝ կազմելով 51,185: Բանկը թողարկում և սպասարկում է տեղական ArCa, միջազգային MasterCard և Visa քարտեր: 2008թ-ից հուլիսից բանկը հանդիսանում է Visa International միջազգային վճարային համակարգի լիիրավ անդամ:

2013թ. երրորդ եռամսյակում Բանկն սկսեց թողարկել Visa Infinite քարտեր, որոնք հատուկ նախատեսված են «Ամերիա Փարթներ» կարգավիճակ ունեցող հաճախորդների համար: 2010թ-ից Բանկը հաճախորդներին առաջարկում է Visa նվեր քարտեր, իսկ իրավաբանական անձանց՝ ArCa մաքսային քարտեր, որոնցով հնարավոր է հեշտ ու արագ վճարումներ կատարել չէ բոլոր մաքսային անցակետերում: Նշված երկու պրոդուկտները 2013թ. մեծ պահանջարկ էին վայելում սպառողների շրջանում:

Ընդհանուր առմամբ, հաշվետու տարում թողարկվել է ավելի քան 794 Visa նվեր քարտ: Ամերիաբանկի բոլոր քարտապանները կարող են օգտվել գեղչերից չայաստանի առևտրի և սպասարկման ավելի քան 130 կետերում:

- 2013թ. Բանկը թողարկեց 19.1 հազար նոր պլաստիկ քարտ, այդ թվում՝ 12.3 հազար VISA, 2 հազար MasterCard և 4.8 հազար ArCa քարտ:
- 2013թ. Բանկը թողարկեց 816 Gold, 189 Platinum և 96 Infinite քարտ:
- 2013թ. նոյեմբերին Ամերիաբանկը և Յուբոմը հանդես եկան նոր համատեղ առաջարկով՝ միավորելով իրենց հնարավորությունները՝ երկու ընկերություններն սկսեցին թողարկել համատեղ քարտ, որը Յուբոմի հավատարիմ բաժանորդներին եզակի հնարավորություն է ընձեռում՝ ստանալու վարկային գիծ՝ 6% տոկոսադրույքով՝ կենցաղային տեխնիկա գնելու համար: Վարկային գծի առավելագույն սահմանաչափը՝ 400,000 չէ դրամ: Վարկային գծի ձևակերպման համար լրացուցիչ փաստաթղթեր չեն պահանջվում, իսկ վարկային քարտի սպասարկման միջնորդավճար չի գանձվում: 2013թ. տրամադրվել է 500 Ամերիաբանկ-Յուբոմ համատեղ քարտ:

• 2012թ-ից Բանկը «Երևան Սիթի» սուպերմարկետների ցանցի հետ համատեղ թողարկում է հատուկ քարտեր՝ նախատեսված «Երևան Սիթի» ցանցի հավատարիմ հաճախորդների համար: 2013թ. քարտերի քանակը կազմեց 1,491: Համատեղ քարտը հաճախորդներին հնարավորություն է ընձեռում «Երևան Սիթի» սուպերմարկետների ցանցում գնումներ կատարելիս օգտվել երկու առաջատար ընկերությունների կողմից առաջարկվող առավելություններից:

Ամերիաբանկը մտադիր է զարգացնել այս ուղղությունը, և 2014թ. նախատեսվում է համատեղ քարտային ծրագրեր իրականացնել այլ կազմակերպությունների հետ: Պլաստիկ քարտերով կատարվող ընդհանուր շրջանառությունը հաշվետու տարում կազմեց 76.1 մլրդ չէ դրամ կամ 185.9 մլն ԱՄՆ դոլար՝ 2012թ. 72.9 մլրդ դրամի (181.7 մլն ԱՄՆ դոլար) համեմատ:

Հարկ է նշել, որ Ամերիաբանկը ոչ միայն ավելացնում է պլաստիկ քարտերի քանակը, այլև վարում անկանխիկ գործարքների խթանման հետևողական քաղաքականություն: Անկանխիկ գործարքները չայաստանում գնալով նոր թափ են ստանում, իսկ Ամերիաբանկում 2013թ. քարտային անկանխիկ գործարքների աճը գերազանցում էր կանխիկ գործարքներինը, մասնավորապես բանկի թողարկած քարտերով առևտրի և սպասարկման կետերում կատարված գործարքների ծավալը 41.37%-ով գերազանցում է 2012թ. ցուցանիշը: Համեմատության համար՝ բանկումատներով և POS-տերմինալներով կանխիկացման գործարքների ծավալն աճել է 17.97%-ով:


Նպատակ ունենալով զարգացնել վարկավորումը և քարտային պրոդուկտները՝ 2013թ. բանկն իրականացրեց մի շարք մարքեթինգային արշավներ՝ ուղղված մանրածախ բիզնես-վարկերի և քարտային պրոդուկտների առաջնադասմանը (մանրամասները տես «Բիզնեսի վարկավորում» բաժնում): 2013թ. քարտերի քանակի ավելացման և քարտային գործարքների խրախուսման նպատակով բանկը նաև մի շարք համատեղ մարքեթինգային արշավներ անցկացրեց VISA և MasterCard վճարային համակարգերի հետ: MasterCard-ի հետ

ակցիայի շրջանակներում ամենաակտիվ 14 քարտապաններն արժանացան նվերների՝ պլանշետների տեսքով: 2013թ. հոկտեմբերից դեկտեմբեր Բանկն անցկացնում էր լայնածավալ արշավ, որի շրջանակներում բոլոր քարտերը տրամադրվում էին «օ տոկոս մինչև տարեվերջ» սկզբունքով, առանց սպասարկման միջնորդավճարի գանձման: Տարեվերջին մեկնարկեց «Շտապ ֆինանսական օգնություն բժիշկներին» քարտային արշավը, որի շրջանակներում բանկը, կարևորելով բժիշկների դերը

հասարակությունում, նրանց առաջարկում էր վարկային գծեր՝ արտոնյալ պայմաններով: Բանկը նաև շարունակում է ակտիվ գործունեության ծավալել վարկային քարտերի շուկայում: Վարկային քարտերը կազմում են բանկի մանրածախ վարկային պորտֆելի 28.5%-ը: 2013թ. քարտերով տրամադրված վարկերը, այդ թվում՝ վարկային գծերի և օվերդրաֆտների օգտագործված մասն ավելացավ 23%-ով՝ կազմելով 7.1 մլրդ ՀՀ դրամ կամ 17.7 մլն ԱՄՆ դոլար: Քարտային պրոդուկտների և ծրագրերի զարգացմանը զուգընթաց բանկը

նաև մեծ ուշադրություն է դարձնում համապատասխան ենթակառուցվածքի զարգացմանը, որը ևս նպաստում է քարտային պրոդուկտների առաջնորմանը: Բանկը ոչ միայն ընդլայնում է սպասարկման ցանցը, այլև շարունակաբար բարելավում այն՝ տեղադրելով բանկոմատներ և POS-տերմինալներ հաճախորդների համար առավել հարմար վայրերում: 2013թ. Ամերիաբանկի բանկոմատներով կատարված գործարքների ծավալը գերազանցեց 137.8 մլն ԱՄՆ դոլարի համարժեքը (463 մլրդ ՀՀ դրամ):

Ամերիաբանկի բանկոմատներով կատարվող շրջանառությունը, հազ. ԱՄՆ դոլար





Հրաչյա Մախոսյան, բանկի մարզային մասնաճյուղերի կառավարիչ

Երբ մարդն ինքնաբավ է և ներդաշնակ իր եսի հետ, նա ազատ է: Չեմ կարծում, սակայն, որ մարդը կարող է լիովին ազատ լինել, չէ՞ որ յուրաքանչյուրս ունի իր պարտականություններն այլոց հանդեպ և իր սահմանները: Մյուս կողմից, դա էլ է լավ:

> Աշխատավարձային նախագծեր

Աշխատավարձային նախագծերի բիզնես գործընթացների բարելավման և դրանց կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև Բանկի հետ համագործակցող ընկերությունների համար առավելագույն հարմարություն ապահովելու նպատակով 2013թ. բանկում ներդրվեց աշխատավարձային նախագծերի սպասարկման և մոնիթորինգի նոր համակարգ: Մասնավորապես, պարզեցվեց և ստանդարտացվեց պոտենցիալ հաճախորդների համար սակագների մշակման գործընթացը, ինչը թույլ տվեց զգալիորեն կրճատել բանակցությունների, փաստաթղթերի ձևա-

կերպման և քարտերի թողարկման վրա ծախսվող ժամանակը և ռեսուրսները, մշակվեցին և ներդրվեցին առաջարկների ստանդարտ փաթեթներ արտոնյալ պայմաններով՝ կախված հաճախորդի գործունեության առանձնահատկություններից, աշխատակիցների քանակից, միջին աշխատավարձից և ընկերության կարիքներից:

Հավատարիմ մնալով սպասարկման որակի շարունակական կատարելագործման ռազմավարությանը, ելնելով ստանդարտ փաթեթային լուծումների նոր սկզբունքներից՝

Բանկը վերանայել է նաև գործող աշխատավարձային նախագծերի սակագները:

Կարևորելով մշտական շփումը հաճախորդների հետ՝ նրանց կարիքները լիովին բացահայտելու համար մենք անցկացնում ենք բազմաթիվ հանդիպումներ և շնորհանդեսներ ինչպես գործող, այնպես էլ պոտենցիալ հաճախորդների համար: 2013թ. բացվեց 154 նոր աշխատավարձային նախագիծ, որոնց շրջանակներում տրամադրվեց 11,524 նոր քարտ, և բացվեց 3,776 վարկային գիծ:


> Դրամական փոխանցումներ

2013թ. Բանկը համագործակցում էր 4 միջազգային համակարգերի հետ՝ MoneyGram, Unistream, InterExpress, «Быстрая Плата»: 2013թ. առաջին կիսամյակում բանկն անդամակցեց Unistream համակարգին՝ դադարեցնելով համագործակցությունը InterExpress և «Бы-

страя Плата» համակարգերի հետ: Բանկը նաև դիտարկում է դրամական փոխանցումների մի շարք այլ համակարգերի հետ համագործակցության հնարավորությունը: 2012թ. ֆիզիկական անձանց՝ Բանկի միջոցով կատարված դրամական փոխանցումների

ընդհանուր ծավալն ավելացավ 27.6%-ով՝ կազմելով 106.1 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար, ընդ որում 50 մլն բաժին է ընկնում արտերկրից դեպի Հայաստան, իսկ 56.1 մլն՝ Հայաստանից դեպի արտերկր կատարվող փոխանցումներին:

Ամերիաբանկի միջոցով կատարվող մասնավոր դրամական փոխանցումները, հազ. ԱՄՆ դոլար



■ Փոխանցումներ արտերկրից ■ Փոխանցումներ դեպի արտերկիր

Դրամական փոխանցումների միջազգային համակարգերով կատարվող մասնավոր փոխանցումների ծավալը

կազմեց շուրջ 8.2 մլն ԱՄՆ դոլար, ընդ որում արտերկրից ստացվող փոխանցումները կազմեցին 4.7 մլն

ԱՄՆ դոլար, իսկ արտերկիր ուղարկվող փոխանցումները՝ 3.5 մլն ԱՄՆ դոլար:

ՆԵՐԴՐՈՒՄԱԲԱՆԿԱՅԻՆ
ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Այս ուղղության հաճախորդների բազան աստիճանաբար ընդլայնվում է, ինչին նպաստում է բարձր միջազգային

որակավորում ունեցող մասնագետների արհեստավարժ թիմը: Բանկի, ինչպես նաև «Ամերիա» խմբի մյուս ընկերությունների

հմուտ մասնագետներն օգնում են հաճախորդներին կայացնել ճիշտ ներդրումային որոշումներ:

> Ֆինանսական կազմակերպություններ

Ուղղված լինելով ֆինանսավորման գործիքների ծավալների ընդլայնմանը, փոքր և միջին բիզնեսի համար երկարաժամկետ ներդրումային գործիքների մատչելիության ապահովմանը՝ Ամերիաբանկը դրանով իսկ նպաստում է Հայաստանում ֆինանսական և տնտեսական դրոշմների զարգացմանը: Իր նպատակների և խնդիրների իրագործման ընթացքում Բանկը շատ է կարևորում ամուր երկարաժամկետ հարաբերությունների ստեղծումը գործընկերների և հաճախորդների հետ: 2013թ. բանկն սկսեց համագործակցել Ավստրիական զարգացման բանկի (OeEB),

ֆրանսիական «Պրոպարկո» զարգացման գործակալության և Առևտրի և զարգացման սնծովյան բանկի հետ: Նաև ստորագրվեցին մանդատային համաձայնագրեր բանկի ռազմավարական գործընկեր-ներդրողների հետ՝ երկրորդ մակարդակի լրացուցիչ կապիտալի ներգրավման համար ստորադաս վարկի տրամադրման վերաբերյալ: Տարվա վերջում միջազգային ֆինանսական և վարկային կազմակերպություններից ներգրավված միջոցները կազմեցին շուրջ 300* մլն ԱՄՆ դոլար, ներառյալ Միջազգային ֆինանսական կորպորացիայից (ՄՖԿ), չոլանդիայի զարգացման բանկից (FMO),

Գերմանական ներդրումների և զարգացման ընկերությունից (DEG), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (ՎԶԵԲ), Եվրասիական զարգացման բանկից (ԵԶԲ), Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ), Ավստրիական զարգացման բանկից, Պրոպարկոյից և Առևտրի և զարգացման սնծովյան բանկից ներգրավված միջոցները: Մեր գործընկերների շրջանակը, սակայն, չի սահմանափակվում սոսկ միջազգային ֆինանսական կազմակերպություններով. մեր ներդրողների թվում են այնպիսի բազմազգ առևտրային բանկեր, ինչպիսիք են Սիթիբանկը, Կոմերցբանկը, BNP Paribas-ն:

> Կորպորատիվ ֆինանսներ

Հաճախորդին ուղղված ժամանակակից կազմակերպության գործունեության կարևորագույն սկզբունքներից է հաճախորդի համար մշտական գործընկեր և խորհրդատու լինելը: Ի դեմս մեր Կորպորատիվ ֆինանսների բաժնի մասնագետների՝ դուք կարող եք գտնել վստահելի ռազմավարական գործընկերոջ

և ստանալ ֆինանսավորման ամենալավ ձևերը հարցերի պատասխանները: Մեծ փորձը և տեղական շուկայի խոր իմացությունը մեր մասնագետներին թույլ են տալիս հաճախորդներին տրամադրել բարձրորակ խորհրդատվություն և համապարփակ ֆինանսական լուծումներ:

2013թ. ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնման նպատակով մի շարք դոնորների հետ կնքվեցին 42 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագրեր, ինչպես նաև հետազայում ևս 75 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում ներգրավելու վերաբերյալ մանդատային նամակներ և նախնական պայմաններ:

* Ներառյալ առևտրի ֆինանսավորումը



Առնո Մոսիկյան, ներդրումային բանկային գործառնությունների գծով տնօրեն

Ազատությունն անվերջ ընտրություն կատարելու իրավունքն է՝ համաձայն քո աշխարհահայացքին և արժեհամակարգին: Տարբերվելու ունակությունը ազատության դրսևորումներից մեկն է, ընդ որում տարբերվել պետք է ոչ միայն արտաքինով, այլև՝ գիտակցությամբ: Ազատության զգացում ես ունենում եմ, երբ տեսնում եմ ՆԱՍԱ-յի լուսանկարները տիեզերքից:

> Կապիտալի շուկա

Չնայած Հայաստանում կապիտալի շուկայի թերզարգացած լինելուն՝ Ամերիաբանկը պարտքային և փայաստիրական կապիտալի շուկաներում գործունեություն ծավալող անձանց առաջարկում է ծառայությունների ամբողջական փաթեթ, ներառյալ անդերրայիններ, ֆոնդային բորսաներում արժեթղթերի առաջնային և երկրորդային տեղաբաշխումը, շուկա ստեղծողի (մարքեթ-մեյքեր) ծառայությունները, խորհրդատվությունը:

Բանկը պահպանեց Հայաստանում պարտքային կապիտալի շուկայի առաջատարի իր դիրքերը՝ հանդես գալով որպես «ՍԱՍ Գրուպ» ՍՊԸ-ի, ՄՖԿ-ի և ՎԶԵԲ-ի պարտատոմսերի տեղաբաշխող: ՄՖԿ-ի և ՎԶԵԲ-ի պարտատոմսերի թողարկումը բացառիկ իրադարձություն էր ՀՀ կապիտալի շուկայում այն առումով, որ առաջին անգամ Հայաստանում թողարկվեցին AAA վարկանիշ ունեցող

պարտատոմսեր, որոնք արտահայտում են դրամային ներդրումների զուտ վարկային ռիսկը և եկամտաբերությունը: Ամերիաբանկը սոսկ խոսքով չէ, որ հանդիսանում է Հայաստանում կապիտալի շուկաների զարգացման ջատագով: Մենք հավատում ենք, որ Հայաստանում կապիտալի շուկան ապագա ունի: 2014թ. Բանկը մտադիր է գործարկել մի շարք նոր ծրագրեր, որոնք շահավետ կլինեն թե՛ թողարկողների, թե՛ ներդրողների համար:



առաջատար միջազգային ֆինանսական կազմակերպություն

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ
2.000.000.000 ՀՀ դրամ

ՎԱՐՏԱԿԱՐԳՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԵՌԻՎԱՍԵՐԾՈՂ


ՀՈՒՆՎԱՐ 2014



առաջատար միջազգային ֆինանսական կազմակերպություն

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ
2.000.000.000 ՀՀ դրամ

ՎԱՐՏԱԿԱՐԳՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԵՌԻՎԱՍԵՐԾՈՂ


ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013



«ՍԱՍ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ
Մանրածախ առևտրի
դրամի առաջատարներից
Կարգված Խոջառուձ

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ
7.000.000 ԱՄՆ դոլար

ՏԵՂԱՐԿՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԵՌԻՎԱՍԵՐԾՈՂ


ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012



Հայաստանում չին, կուբերի և
ցեռոպման համակարգերի ներդրող
առաջատար ընկերություններից մեկը

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ
1.000.000.000 ՀՀ դրամ

ՎԱՐՏԱԿԱՐԳՆԱԿՆԵՐԻ ԵՎ ԵՌԻՎԱՍԵՐԾՈՂ


ՀՈԿՏԵՄԲԵՐ 2008



Շուշանիկ Նովսեփյան, Կապիտալի շուկաների բաժնի ավագ մասնագետ

Ազատ մարդը պետք է ունենա ազատ գիտակցություն՝ մտածել ինքնուրույն, ունենալ սեփական կարծիքը, ինքնուրույն որոշել սեփական ճակատագիրը: Գայթակղություն միշտ էլ կա, մարդուն միշտ էլ ձգում են ուրիշի սկզբունքները, ուրիշի պատկերացումներն ազատության մասին: Բայց եթե մարդն ինքն է որոշում՝ ինչպես ապրել, նա ինձ համար ավելի ազատ է, քան այլոք, անգամ եթե կողքից դա կարող է ստրկություն թվալ:

> Միաձուլումներ և ձեռքբերումներ (ՄԱՁ)

Ամերիաբանկի Միաձուլումների և ձեռքբերումների բաժինը ընկերություններին և ներդրողներին տրամադրում է ընկերությունների վաճառքի, ձեռքբերման և միաձուլման վերաբերյալ համապարփակ խորհրդատվություն, ինչպես նաև խորհրդատվություն կորպորատիվ վերակազմավորման, բիզնեսի գնահատման և ստուգման (due diligence) վերաբերյալ: «Ամերիա» ընկերությունների գործունեության 17 տարիների ընթացքում մենք ձեռք ենք բերել հարուստ փորձ և գիտելիք, որոնք ընկած են մեր աշխատանքի հիմքում: 2013թ. Բանկն ամրապնդեց իր դիրքերը ՄԱՁ երկու հիմնական ուղղությունների ոլորտում՝ ա/ խորհրդատվական ծառայություններ (ինչպես գնորդին, այնպես էլ վաճառողին), բ/ բիզնեսի գնահատում: Հաշվետու տարում ավելացավ ինչպես հաճախորդների քանակը, այնպես էլ եկամուտը:

2013թ. Բանկի այս ստորաբաժանման գործունեությունը ծավալվում էր հիմնականում հետևյալ ոլորտներում՝ ֆինանսական հատված, մենդի արդյունաբերություն (այդ թվում՝ գինու, կոնյակի և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրությունը), լեռնահանքային արդյունաբերություն, ռեստորանային բիզնես: Տարվա խարիսխային նախագծերից մեկը «Ամերիա» խմբի մեջ մտնող «Ամերիա Ասեթ Մենեջմենթ» (նախկինում «Ամերիա Ինվեսթ») ընկերության կողմից «Կասկադ Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի ձեռքբերումն է: Նշենք, որ «Կասկադ Ինվեսթմենթս»-ը Հայաստանում ակտիվների կառավարման ծառայություններ ներդրած առաջին ընկերությունն էր: Շուկայի խոշորագույն և առավել ակտիվ մասնակիցների, միաձուլումների և ձեռքբերումների պոտենցիալ հնարավորությունների բացահայտման նպատակով բանկը մշտապես ուսումնասիրում է

տնտեսության զանազան ոլորտներ: Հաշվետու տարում Բանկի հաճախորդների թվում կային ինչպես տեղական մասնավոր, այնպես էլ խոշոր միջազգային ընկերություններ, որոնց բաժնետոմսերը գնանշվում են աշխարհի խոշորագույն բորսաներում: Հայաստանը մնում է զարգացող երկիր և ունի միջնաժամկետ աճի զգալի ներուժ: Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի հետ մաքսային միությանն անդամակցելու լույսի ներքո մենք ակնկալում ենք երկկողմանի ներդրումների ակտիվացում, որը ենթադրում է Հայաստանում ՄԱՁ շուկայի, այդ թվում՝ անդրսահմանյան գործարքների աճ: Մեր գնահատմամբ՝ Ամերիաբանկը շարունակում է մնալ տեղական շուկայում ՄԱՁ ոլորտի խոշորագույն խորհրդատուն՝ ինչպես նախագծերի քանակի, այնպես էլ եկամտի առումով:



Արթուր Բաբայան, առևտրային գործառնությունների գծով տնօրեն

Երբ մարդն ընտրություն է կատարում, այսինքն՝ ունենում է ընտրելու ազատություն, նա միաժամանակ պատասխանատվություն է ստանձնում իր գործողությունների համար: Միգուցե դա է պատճառը, որ շատերը խուսափում են ազատությունից՝ նրանք վախենում են պատասխանատվությունից: Հորացիոսն ասել էր՝ սիրիր ոչ թե այն, ինչ կբերի վաղը, այլ այն, ինչ ունես այսօր: Այս ասույթը շատ է տարածված, բայց իմ կարծիքով այն իմաստունների շարքից չէ: Ազատությունն անհնարինի ճգտումն է, առաջընթացի, եվոլյուցիայի շարժիչը: Ըստ իս՝ ազատության ամենաճշգրիտ սահմանումը տվել է Բեյ Բաուֆմանն իր «Իջնող սանդուխքն ի վեր» վիպակում՝ ուժերիցդ վեր ձգտիր վերև, այլապես ինչի՞ համար է երկինքը:

> Առևտրային գործառնություններ

2013թ. Բանկը զբաղեցրեց 1-ին դիրքն ըստ արտարժույթային գործառնությունների և ոսկով գործարքների՝ 2012թ. 5-րդ դիրքի համեմատ, և 2-րդ դիրքն ըստ ներդրումաառևտրային գործառնությունների՝ 2012թ. 7-րդ դիրքի համեմատ՝ շնորհիվ արտարժույթային գործառնություններից եկամտի աճի և կորպորատիվ արժեթղթերում ներդրումների: Առևտրային գործառնություններից (արտարժույթի փոխանակում, ոսկով և արժեթղթերով գործառնություններ) ստացված զուտ եկամուտն ավելացավ 91.6%-ով, մինչդեռ բանկային համակարգի միջին ցուցանիշը կազմում էր 19.6%: Բանկի ընդհանուր գործառնական եկամտում առևտրային գործառնությունների մասնաբաժինը կազ-

մում է 13.3%, բանկային համակարգում՝ 11.2%: 2013թ. Բանկի հաճախորդների արտարժույթային ակտիվությունն ավելի բարձր էր, քան ընդհանուր բանկային համակարգում՝ մասնավորապես, արտարժույթային գործառնություններից ստացված եկամտի հարաբերակցությունը հաճախորդների վարկերին և պարտավորություններին կազմում էր 0.57%, բանկային համակարգի միջին ցուցանիշը՝ 0.51%: 2013թ. Global Finance ամսագիրը բանկը ճանաչեց Հայաստանում արտարժույթ փոխանակող լավագույն բանկ: Բանկը մուտք գործեց ՀՀ եվրապարտատոմսերի շուկա՝ միաժամանակ ավելացնելով ներդրումները կորպորատիվ արժեթղթերի շուկայում. այս

ցուցանիշով 2013թ. բանկն զբաղեցնում էր 2-րդ դիրքը ՀՀ բանկային համակարգում: Բանկի բրոքերային ծառայություններից օգտվող հաճախորդներն ներկայացվեցին նոր հնարավորություններ, այդ թվում՝

- «Ամերիա Գլոբալ Թրեյդինգ» առևտրային համակարգի շարժական տարբերակը, որի միջոցով հնարավոր է միջազգային ֆինանսական շուկաներում գործառնություններ իրականացնել iPhone-ով, iPad-ով և MAC-ով ու Android-ով աշխատող սարքերով
- «Ամերիա Գլոբալ Թրեյդինգ» համակարգի փորձնական տարբերակի բեռնում առցանց հարցման միջոցով
- Ավելի ճկուն իջեցված սակագներ՝ ակտիվ թրեյդերներին խրախուսելու համար



ԲԱՆՆԿԻ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
ԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ

2014 թ.

Մոտակա 3 տարվա՝ Բանկի գլխավոր ռազմավարական նպատակը իրական ունիվերսալության հասնելն է:

Իր ռազմավարության համաձայն՝ դեռևս 2010թ-ից Բանկը որդեգրել է գործունեության ոլորտների և աշխարհագրության ընդլայնման, հաճախորդների բազայի ավելացման քաղաքականություն: Միաժամանակ, մենք հաշվի ենք առնում բոլոր այն հնարավորությունները և խոչընդոտները, որոնք կան կամ կարող են ի հայտ գալ մրցակցության և աշխարհում տիրող իրավիճակի պայմաններում:

- Իրավիճակի ճիշտ գնահատում, առկա և սպասվող իրադարձությունների վերլուծում, սեփական ռեսուրսների և նպատակների իրագործման հնարավորությունների գնահատում՝ ահա Բանկի գործունեության կարևոր սկզբունքներից մի քանիսը, որոնք օգնում ենք մեզ ճիշտ կողմնորոշվել անընդհատ փոփոխվող միջավայրում:

Ակնկալվում է, որ համաշխարհային տնտեսության աստիճանական վերականգնումը կնպաստի Հայաստանի իրական ՀՆԱ-ի աճին միջնաժամկետ հեռանկարում:

Ըստ կանխատեսումների՝ 2014-2017թթ. Հայաստանի տնտեսական աճը կարող է կազմել 4.5-5.5%: Աճի հիմնական խթանները կլինեն արդյունաբերության և սպասարկման ոլորտները, որոնց մասնաբաժինը ՀՆԱ-ում կավելանա 50%-ից մինչև 60% (Նույն կանխատեսումը տրվում է նաև Համաշխարհային բանկի կողմից):

Միաժամանակ, 2014թ. առկա են նաև որոշակի ռիսկեր, որոնք կապված են առաջին հերթին Ռուսաստանի տնտեսության թուլացման և (գյուղատնտեսության համար) անբարենպաստ եղանակային պայմանների հետ: Ուկրաինայի ճգնաժամը, ռուսական ռուբլու արժեզրկումը, Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները կարող են բացասաբար անդրադառնալ Հայաստանի տնտեսության վրա.

- արտահանման պահանջարկի նվազում
- տրանսֆերտներ
- Ներդրումային ծրագրերի սառեցում կամ հետաձգում

Միջազգային սպառողական շուկայի ցածր գների, ինչպես նաև Ռուսաստանի հետ կնքված պայմանագրի շրջանակներում գազի կայուն գների շնորհիվ Հայաստանում գնաճային ճնշումը կնվազի: 2014թ. գնաճը կկազմի 4.5%, 2015թ.՝ 4% (ըստ Համաշխարհային բանկի կանխատեսումների՝ 2014թ. գնաճը կարող է անգամ կազմել 2.5%):

Հայաստանի համար լուրջ մարտահրավեր է մնում տնտեսության խոցելիությունը, որը պայմանավորված է խիստ անհավասարաչափ կառուցվածքով և շուկաների բարձր կենտրոնացմամբ: Եվրոպայում, Ռուսաստանում և առևտրային գործընկեր հանդիսացող այլ երկրներում տնտեսական իրավիճակի վատթարացման դեպքում անմիջապես կտուժի նաև Հայաստանի տնտեսությունը: Միաժամանակ, իր սահմանափակ շուկայով Հայաստանն ի վիճակի չէ ապահովել մրցունակության բարձր մակարդակ, հատկապես տարածաշրջանային շուկայի բացակայության և հարևան երկրների շուկաներին սահմանափակ հասանելիության պայմաններում: 2014թ. գործարար միջավայրը, որտեղ աշխատելու է Բանկը, բնորոշվելու է հետևյալ միտումներով և գործոններով.

- Անորոշություն՝ պայմանավորված Ռուսաստանի և Ուկրաինայի իրավիճակով, որը ռիսկեր է ստեղծում նաև Հայաստանի տնտեսության որոշ ճյուղերի, արտահանողների, մասնավոր տրանսֆերտների համար
- Էլեկտրաէներգիայի գների հնարավոր բարձրացում, որը կարող է էլ ավելի դանդաղեցնել Հայաստանի տնտեսական աճը
- Մեծամասշտաբ ճանապարհաշինական և ենթակառուցվածքային նախագծերի իրականացում

• Արտահանմանն ուղղված ճյուղերի՝ հանքային արդյունաբերության, մետաղաձուլության, ադամանդագործության, էներգետիկայի, սննդի արդյունաբերության զարգացում

- Բանկերի մրցակցության թեժացում, միջին և փոքր բանկերի աճ
- Բնակչության և ձեռնարկատերերի շրջանում ֆինանսավորման պահանջի աճ
- Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ակտիվ զարգացում բանկային ֆինանսավորման հաշվին

- Ֆինանսական շուկայի որոշակի հատվածների՝ մասնավորապես կենսաթոշակային ոլորտի անորոշություն

- Կապիտալի շուկաների ակտիվացում և զարգացում

Ստեղծված իրավիճակում ֆինանսական կազմակերպությունների առջև ծառանում են նորանոր խնդիրներ.

- Ոչ գնային մրցակցության թեժացում (սպասարկման որակ, հաճախորդների հետ փոխհարաբերություններ, վստահություն և այլն)

- շեռակա բանկային ծառայությունների և ժամանակակից տեխնոլոգիաների զարգացում

- Նոր ենթակառուցվածքային լուծումներ
- «Գերհրացվելիություն», որը խոչընդոտում է եկամտաբերության աճը

- Վարկավորման աշխարհագրության անհավասար բաշխում

- ՓՄՁ-ների նկատկամբ ցածր վստահություն, որը խոչընդոտում է վարկավորումը
- շեռանկարային ոլորտների վարկավորման ասպարեզում մրցակցության թեժացում

- Ի պատասխան հաճախորդների աճող պահանջներին՝ ծառայությունների տեսականու ընդլայնում համալիր սպասարկման համար

- Ռիսկերի գնահատման համակարգի կատարելագործում



Հովհաննես Թորոյան, Ռազմավարության և հետազոտությունների բաժնի ղեկավար

Չկա բացարձակ ազատություն, չէ՛ որ մարդու ֆիզիկական և մտավոր կարողությունները սահմանափակ են: Եթե մեկը պնդում է, որ բացարձակապես ազատ է, դա կարող է անգամ վտանգավոր լինել՝ նշանակում է՝ նա չի գիտակցում սեփական հնարավորությունները: Իրապես ազատ նա կլինի այն ժամանակ, երբ գտնի ոսկե միջինը: Այո, գագամուրջների տեսակետից լինում են պահեր, երբ քեզ կատարելապես ազատ են զգում: Միգուցե ես ունենամ այդ զգացումը, երբ բարձրանամ Արարատի գագաթը:

- Արտասահմանյան կապիտալի ներգրավման խնդիրներ, հետևաբար նաև ռեսուրսային բազայի թանկացում
- Հնարավոր է նաև հայ արտահանողների արտադրանքի պահանջարկի նվազում պայմանավորված Ռուսաստանում և գործընկեր երկրներում տիրող իրավիճակով, որը կարող է հանգեցնել հաճախորդների վճարունակության անկման, բանկերի վարկային պորտֆելի վատթարացման: Ակնկալվում է, որ 2014թ. Հայաստանում բանկերը և վարկային կազմակերպություններն իրենց վարկային ռեսուրսներն ուղղելու են փոքր և միջին բիզնեսին, անհատ ձեռնարկատիրությանը: Սպասվում է նաև ակտիվ սպառողական վարկավորում որպես սպառման ծավալների աճի արդյունք: Ստեղծված իրավիճակում Ամերիաբանկի ռազմավարությունը նախատեսում է գործունեության ոլորտների ընդլայնում և մանրածախ գործունեության զարգացում: Որպես կորպորատիվ բանկային գործունեության առաջատար, Բանկը միաժամանակ մտադիր է ամրապնդել հարաբերությունները կորպորատիվ հաճախորդների հետ՝ առաջարկելով համալիր Նորարարական լուծումներ: Որպես իր կարևորագույն խնդիրներից մեկը Բանկը սահմանել է սպասարկման որակի բարելավումը, յուրաքանչյուր հաճախորդի համար առավելագույն հարմարության ապահովումը և հաճախորդների ավելի մեծ զանգվածի պահանջմունքների բավարարումը: Մասնավորապես, Բանկը մտադիր է ապահովել սպասարկման որակի առավելագույն համապատասխանությունը միջազգային չափանիշներին, ինչպես նաև կառավարման համակարգի արդյունավետությունը, ինչը կհանդիսանա կայուն զարգացման գրավական: Ամերիաբանկի 2014-2017թթ. ռազմավարական խնդիրները ներառում են.

- Հասնել իրական ունիվերսալության՝ հավասարապես մատչելի լինելով ինչպես կորպորատիվ, այնպես էլ մանրածախ հաճախորդների համար
- Բարելավել սպասարկման որակը և ընդլայնել ծառայությունների տեսականին՝ դառնալով առաջատարը ՀՀ շուկայում որակի առումով
- Ավելի մոտ և մատչելի լինել բոլոր հաճախորդներին, այդ թվում՝ Նոր ենթակառուցվածքային լուծումների միջոցով
- Մշակել և ներդնել Նոր ֆինանսական լուծումներ, բանկային տեխնոլոգիաներ, Նորարար պրոդուկտներ
- Ավելի գրավիչ դառնալ փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների համար
- Ընդլայնել Հայաստան-Սփյուռք համագործակցությունը
- Դուրս գալ տարածաշրջանային շուկաներ Գլխավոր ֆինանսական խնդիրներն են.
- Թիմի զարգացումը և մոտիվացումը
- Դինամիկ և կայուն աճը
- Հիմնական ցուցանիշների առաջանցիկ աճի ապահովումը
- Բոլոր հիմնական ցուցանիշներով Հայաստանում առաջատար դիրքեր զբաղեցնելը՝ մնալով 1-ն ըստ ակտիվների
- Ըստ ֆինանսական արդյունավետության (կապիտալի և ակտիվների եկամտաբերություն) առաջատարների եռյակում տեղ զբաղեցնելը
- Ոչ տոկոսային եկամտի մասնաբաժնի ավելացումը Նոր ծառայությունների ներդրման հաշվին
- Նաև կշարունակվեն ենթակառուցվածքի ընդլայնման և զարգացման, շուկայական դիրքի ամրապնդման աշխատանքները, որոնք ենթադրում են.
- Մասնաճյուղերի ցանցի ընդլայնում տնտեսապես ակտիվ շրջաններում
- Նոր ենթակառուցվածքների ներդրում և զարգացում (հեռակառավարվող բանկային ծառայություններ)

- Նոր ներդրումային բանկային գործիքների մշակում
- Համաձայն իր ռազմավարության՝ մինչև 2017թ. ավարտը Բանկը մտադիր է ամրապնդել իր դիրքը որպես Հայաստանի բանկային համակարգի առանցքային մասնակից: Իր նպատակների և առաքելության իրագործման շրջանակներում 2014թ. Բանկը մտադիր է.
- Ապահովել հիմնական ֆինանսական ցուցանիշների 20-25%-նոց աճ
- Անցկացնել ինտենսիվ մասնագիտական վերապատրաստումներ
- Շարունակել հանդես գալ Նորարարական ֆինանսական լուծումներով
- Ընդլայնել մանրածախ բանկային գործառնությունները
- Ընդլայնել համագործակցությունը փոքր և միջին ձեռնարկությունների հետ
- Բարձրացնել հաճախորդների լոյալությունը՝ նրանց առաջարկելով զարգացման Նորարարական լուծումներ
- Ընդլայնել հաճախորդների բազայի աշխարհագրությունը
- Աջակցել Հայաստանում կապիտալի շուկայի կայացմանը՝ միաձուլումների և ձեռքբերումների ու ակտիվների կառավարման ծառայություններ տրամադրելով
- Ավելացնել կայուն և էժան ռեսուրսային բազան
- Շարունակել միջոցների ներգրավումը միջազգային ֆինանսական կազմակերպություններից՝ հետևյալ ուղղություններով տեղաբաշխելու համար.
- Փոքր և միջին բիզնես
- Վերականգնվող էներգետիկա 2014թ. Բանկը մտադիր է 75%-ով ավելացնել փոքր և միջին բիզնեսի, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի վարկավորումը: Այս նպատակին Բանկը մտադիր է հասնել ինչպես սեփական, այնպես էլ փոխառու միջոցների հաշվին, ընդ որում դոնորներից ակնկալվում է ներգրավել շուրջ 30-40 մլն ԱՄՆ դոլարի գումար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆԿԱԻՆ

ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՎ



ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա ՓԲԸ
 ՀՀ, Երևան, 0010,
 Վ.Սարգսյանի փ. 26/1,
 «Էրեբունի Պլազա» Բիզնես-Կենտրոն, 8-րդ հարկ

Հեռախոս: + 374 (10) 566 762; Ֆաքս: + 374 (10) 566 762; Ինտերնետ: www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրինությանը

Մեր կողմից իրականացվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Բանկ») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն այս ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկերի գնահատումը: Այդ ռիսկերը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների նպատակահարմարության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև նրա ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Էնդրյու Քոքսզել
 Տնօրեն

«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ Արմենիա» ՓԲԸ
 2014թ.



«Ամերիաբանկ» ՓԲԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարտակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2013 թ. համար


	2013թ. հազ. դրամ	2012թ. հազ. դրամ
Տոկոսային եկամուտ	22,769,407	20,733,752
Տոկոսային ծախս	(11,110,094)	(9,858,731)
Զուտ տոկոսային եկամուտ	11,659,313	10,875,021
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	2,055,424	1,681,813
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս	(413,461)	(396,336)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ	1,641,963	1,285,477
Զուտ օգուտ (վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	146,439	(549,771)
Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից	1,821,577	1,191,890
Զուտ օգուտ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից	146,423	41,900
Այլ գործառնական եկամուտ	796,365	352,136
Գործառնական եկամուտ	16,212,080	13,196,653
Արժեզրկումից (կորուստներ)/Արժեզրկման հակադարձումներ	(1,959,550)	395,529
Աշխատակազմի գծով ծախսեր	(3,391,800)	(3,085,155)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(3,173,969)	(2,922,794)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	7,686,761	7,584,233
Շահութահարկի գծով ծախս	(1,629,573)	(1,546,795)
Շահույթ տարվա համար	6,057,188	6,037,438
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք՝ առանց շահութահարկի <i>Հողվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i> <i>Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ</i>		
• Իրական արժեքի զուտ փոփոխություն	492,653	13,249
• Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն	(117,138)	(33,520)
<i>Ընդամենը հողվածներ, որոնք հետագայում վերադասակարգվում են կամ կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>	375,515	(20,271)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար՝ առանց շահութահարկի		
ԸՆԴԱՄԵՆՆՂ ԿԱՄԱՊԱՐԲԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ ԵՎ ԿԱՐԿՆԱԿՆԵՐ	6,432,703	6,017,167

5-ից 78-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Տնօրինության կողմից 2014թ. փետրվարի 28-ին:

Արտակ Նանեսյան
Գլխավոր տնօրեն
Տնօրինության նախագահ



Գոհար Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ



Շահույթի կամ վնասի և այլ համապարտակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2013 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	2013թ. հազ. դրամ	2012թ. հազ. դրամ
ԱՎՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	98,815,692	57,567,215
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	888,066	1,444
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	9,341,485	5,771,617
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	3,106,483	11,478,687
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	8,441,159	968,852
Հաճախորդներին տրված վարկեր	169,861,420	141,419,180
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	8,966,815	9,700,484
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	2,696,869	3,050,756
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	3,575,063	1,692,447
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	4,247,066	7,325,533
Վաճառքի նպատակով պահվող ակտիվներ	254,192	853,782
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	2,894,285	2,521,641
Այլ ակտիվներ	1,959,501	2,702,141
ԸՆդամենը ակտիվներ	315,048,096	245,053,779
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	234,160	356,484
Բանկերի ավանդներ և մնացորդներ	22,935,230	23,218,961
Հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	16,013,140	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	169,942,151	126,301,847
Այլ փոխառություններ	59,367,736	55,426,057
Ստորադասված փոխառություններ	4,967,435	-
Ընթացիկ հարկային պարտավորություն	502,824	307,966
Հետաձգված հարկային պարտավորություն	166,410	49,676
Այլ պարտավորություններ	2,213,277	2,620,078
ԸՆդամենը պարտավորություններ	276,342,363	208,281,069
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Բաժնետիրական կապիտալ	25,447,680	25,447,360
Էմիսիոն եկամուտ	28,571	28,571
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	417,522	42,007
Զբաղիչված շահույթ	12,811,960	11,254,772
ԸՆդամենը սեփական կապիտալ	38,705,733	36,772,710
ԸՆդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	315,048,096	245,053,779

Շահույթի կամ վնասի և այլ համապարտակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Դրամական միջոցների մասին հաշվետվություն 2013 թ. համար

	2013թ. հազ. դրամ	2012թ. հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Ստացված տոկոսներ	22,149,666	20,185,390
Վճարված տոկոսներ	(9,948,831)	(8,993,619)
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ	2,055,424	1,678,144
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ	(413,461)	(631,339)
Զուտ մուտքեր վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով	146,423	41,900
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	1,478,075	1,131,286
Մուտքեր այլ եկամտի գծով	796,365	373,459
Աշխատավարձ և այլ վճարումներ աշխատակիցներին	(3,461,347)	(3,062,529)
Այլ ընդհանուր վարչական ծախսերի վճարումներ	(2,496,917)	(2,303,455)
Գործառնական ակտիվների (աճ) նվազում		
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	(716,784)	52,020
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	(2,818,225)	(546,379)
Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ	7,861,085	(2,465,639)
Հակադարձ հետզնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	(7,455,244)	(45,618)
Հաճախորդներին տրված վարկեր	(29,607,736)	(1,813,052)
Ակրեդիտիվների գծով ստացվելիք գումարներ	1,161,610	(9,682,825)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	742,383	(732,252)
Ֆակտորինգի գծով ստացվելիք գումարներ	(1,900,512)	(964,867)
Վաճառքի նպատակով պահվող ակտիվներ	599,590	1,380,498
Այլ ակտիվներ	458,215	(72,176)
Գործառնական պարտավորությունների աճ (նվազում)		
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	(163,813)	(584,781)
Բանկերի ավանդներ և մնացորդներ	(1,894,973)	1,804,595
Հետզնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	15,999,428	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	46,354,734	31,665,069
Այլ պարտավորություններ	(859,790)	(76,120)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ նախքան շահութահարկի վճարումը	38,065,365	26,337,710
Վճարված շահութահարկ	(1,411,860)	(1,443,022)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	36,653,505	24,894,688
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումներ	(1,051,970)	(624,980)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	2,906	2,136
Մուտքեր մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների մարումից	2,859,914	468,039
Ներդրումային գործունեությունից ստացված (օգտագործված) դրամական միջոցների հոսքեր	1,810,850	(154,805)

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Դրամական միջոցների մասին հաշվետվություն 2013 թ. համար

	2013թ. հազ. դրամ	2012թ. հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԻՑ		
Վճարված շահութաբաժիններ	(4,500,000)	(5,330,054)
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	320	-
Մուտքեր այլ փոխառություններից	8,753,144	6,710,344
Ստացված ստորադասված փոխառություն	4,870,920	-
Այլ փոխառությունների մարում	(5,271,574)	(2,955,023)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված (օգտագործված) դրամական միջոցների հոսքեր	3,852,810	(1,574,733)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	42,317,165	23,165,150
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,068,688)	201,208
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	57,567,215	34,200,857
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	98,815,692	57,567,215

Շահույթի կամ վնասի և այլ համապարտակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2012 թ. համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների վերագնահատման պահուստ	Զբաղիչված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2012թ.	25,447,640	29,691	62,278	9,232,334	34,771,943
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք Շահույթ տարվա համար	-	-	-	6,037,438	6,037,438
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն առանց հետաձգված հարկ	-	-	13,249	-	13,249
Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն ^ա առանց հետաձգված հարկի	-	-	(33,520)	-	(33,520)
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(20,271)	-	(20,271)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար				6,037,438	6,017,167

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների վերագնահատման պահուստ	Զբաղիչված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Ուղղակիորեն սեփական կապիտալում գրանցված գործարքներ սեփականատերերի հետ չեղանկված բաժնետոմսեր	(280)	(1,120)	-	-	(1,400)
Հայտարարված շահութաբաժիններ	-	-	-	(4,015,000)	(4,015,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	(280)	(1,120)	-	(4,015,000)	(4,016,400)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ.	25,447,360	28,571	42,007	11,254,772	36,772,710

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2013 թ. համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների վերագնահատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2013թ.	25,447,360	28,571	42,007	11,254,772	36,772,710
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք Շահույթ տարվա համար	-	-	-	6,057,188	6,057,188
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն առանց հետաձգված հարկ	-	-	492,653	-	492,653
Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն ³ առանց հետաձգված հարկի	-	-	(117,138)	-	(117,138)
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	375,515	-	375,515
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար			375,515	6,057,188	6,432,703

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների վերագնահատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Ուղղակիորեն սեփական կապիտալում գրանցված գործարքներ սեփականատերերի հետ չեղանկված բաժնետոմսեր	320	-	-	-	320
Հայտարարված շահութաբաժիններ	-	-	-	(4,500,000)	(4,500,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	320	-	-	(4,500,000)	(4,499,680)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.	25,447,680	28,571	417,522	12,811,960	38,705,733

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՕԳՏԱԿԱՐ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲԱՆԿԻ
ՄԱՍԻՆ



> Օգտակար տեղեկություններ Բանկի մասին

«Ամերիաբանկ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչ 9

ՀՎՀՀ՝ 02502212

Հ/հ ՀՀ ԿԲ՝ 103002101576

Центральный банк РА

SWIFT/BIC՝ ARMIAM22

Bank code 15700

Հեռ.՝ (37410) 561111

Ֆաքս՝ (37410) 513133

Էլ. փոստ՝ office@ameriabank.am

www.ameriabank.am

Բանկի մասնաճյուղերը

«Կասկադ» ՀՀ, Երևան 0010, Դեղատան 6

«Դիլիջան» ՀՀ, Դիլիջան 3901, Մյասնիկյան 66

«Կոմիտաս» ՀՀ, Երևան 0033, Կոմիտասի 12, տարածք N°102

«Մոսկովյան» ՀՀ, Երևան 0009, Մաշտոցի 48, տարածք N°2/1

«Քաջարան» ՀՀ, Քաջարան 3309, Լեռնագործների 16/31

«Շենգավիթ» ՀՀ, Երևան 0046, Բագրատունյաց 18, տարածք N°112

«Վանաձոր» ՀՀ, Վանաձոր 2021, Տիգրան Մեծի փողոց 65

«Սայաթ-Նովա» ՀՀ, Երևան 0001, Սայաթ-Նովայի պող. 8, տարածք N°47

Հաճախորդների արտարժույթային փոխանցումների հիմնական նոստրո հաշիվներ

ԵՐԿԻՐ	ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿ	SWIFT	ԱՐԺՈՒՅԹ	31/12/13
Գերմանիա	COMMERZBANK AG, FRANKFURT/MAIN	COBADEFF	EUR	400/8866071/00
	DEUTSCHE BANK AG, FRANKFURT/MAIN	DEUTDEFF	EUR	100-9477498-00
	CITIBANK, FRANKFURT/MAIN	CITIDEFF	EUR	4117180005
	COMMERZBANK AG, FRANKFURT/MAIN	COBADEFF	GBP	400/8866071/00
Շվեյցարիա	UBS AG, ZURICH	UBSWCHZH80A	CHF	02300000069026050000V
ՄԱԷ	NATIONAL BANK OF ABU DHABI, ABU DHABI	NBADAEAA	AED	6200969039
Վրաստան	LIBERTY BANK JSC, TBILISI	LBRTGE22	GEL	GE75LB0114253131878000
Ռուսաստան	SBERBANK RF, MOSCOW	SABRRUMM	RUB	301118109000000003 71
	PROMSVYAZBANK, MOSCOW	PRMSRUMM	RUB	30111810790000021401
			JPY	30111392690000021401
			CAD	3011124790000021401
AUD			30111036590000021401	
ALFA-BANK, MOSCOW	ALFARUMM	RUB	30111810300000000212	
ԱՄՆ	CITIBANK N.A. , NEW YORK	CITIUS33	USD	36116208
	DEUTSCHE BANK TRUST COMPANY AMERICAS, NEW YORK	BKTRUS33	USD	04437701
Լյուքսեմբուրգ	COMMERZBANK AG LUXEMBOURG BRANCH, LUXEMBOURG	COBALULU	XAU XAG	1264423253940 1264423253949
Իտալիա	UNICREDIT S.P.A.	UNCREDITM	EUR	995/101468077
Չինաստան	CHINA CONSTRUCTION BANK CORPORATION	PCBCCNBJ	CNY (RMB)	NRA31001579511050021970

